

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО

Միլա Հայրապետովա

Իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի օժանդակ ազդեցությունը պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման հարցում3

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ADMINISTRATIVE PROCEDURE/ АДМИНИСТРАТИВНЫЙ ПРОЦЕСС

Ռաֆիկ Խանդանյան

Ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնման միտումները ՀՀ վարչական դատավարությունում..... 10

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

Մարիամ Մանուկյան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հայեցողությունն իր լիազորությունները կիրառելիս մաս 2. «Ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման առանձնահատկություններն ու չափանիշները»30

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Գևորգ Իսրայելյան

Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում..... 41

Ադելինա Սարգսյան, Անուշ Հակոբյան

Յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ կողմի որոշ առանձնահատկություններ 49

Հռիփսիմե Խաչատրյան

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները Հայաստանի Հանրապետության նախկին և նոր քրեական օրենսգրքերի համատեքստում (համեմատախրավական վերլուծություն)..... 62

Наира Зограбян

Современные подходы к определению конкуренции уголовно-правовых норм..... 72

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

Սուրեն Բաղինյան

Փաստաթղթերի քննչական զննության առանձնահատկությունները պետական
դավաճանության գործերով քրեական վարույթների քննության ընթացքում 79

ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Գայկ Գրիգորյան

Проблемы правового регулирования некоторых правовых институтов после
ратификации и вступления в силу статута международного уголовного суда в
Республике Армения..... 89

Siranush Grigoryan

The Future of EU Sanctions. Effectiveness, Challenges and Considerations 97

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 110

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-3>

ՄԻԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ

ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի առաջատար մասնագետ,
Հայ-Ռուսական համալսարանի 3-րդ կուրսի ասպիրանտ

MILA HAYRAPETOVA

Leading specialist of the Expert-Analytical Department of the Legal Advisory Department of the RA Constitutional Court,
3rd year PhD student at the Armenian-Russian University

МИЛА АЙРАПЕТОВА

Ведущий специалист экспертно-аналитического отдела консультативно-правового управления Конституционного суда РА,
аспирант 3-го курса Российско-Армянского университета

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ
ՍԿՋՐՈՒՆՔԻ ՕԺԱՆԴԱԿ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՇԱՃ
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ
ՀԱՐՑՈՒՄ**

**THE SUPPORTING EFFECT OF THE PRINCIPLE OF UNIFORM
APPLICATION AND INTERPRETATION OF LAW IN THE EXERCISE OF
THE CONSTITUTIONAL RIGHT TO PROPER ADMINISTRATION**

**ВСПОМОГАТЕЛЬНОЕ ВОЗДЕЙСТВИЕ ПРИНЦИПА
ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЯ И ТОЛКОВАНИЯ ПРАВА
НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ В РЕАЛИЗАЦИИ
КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА НАДЛЕЖАЩЕЕ
АДМИНИСТРИРОВАНИЕ**

Ներածություն

Վարչական մարմիններն ու պաշտոնատար անձինք վարչարարություն իրականացնելիս պետք է իրենց գործողություններում հետևեն իրավունքի միատեսակ կիրառման սկզբունքին, որը վարչարարության կարևորագույն խնդիրներից է: Իրավունքի միատեսակ կիրառման բացակայությունը՝ իրավակիրառ պրակտիկան դարձնում է անկանխատեսելի, որն առաջաց-

նում է վարչական մարմնի և պաշտոնատար անձի, ինչպես նաև վարչական դատարանների գործողությունների հանդեպ հասարակության վստահության կորստին, բարդացնում է վարչարարություն իրականացնող սուբյեկտների գործունեությունը: Եվ այս համատեքստում՝ անհրաժեշտ է ամբողջական հետազոտություն իրականացնել՝ հասկանալու, թե որ գործոններն ազդեցություն կարող են ունենալ միատեսակ կիրառում ապահովելու համար: Իրավունքի միատեսակ կիրառման վրա ազդող գործոնների դասակարգումն ու սահմանումը վարչաիրավական գործունեությունում՝ իրենց աստիճանի և առանձնահատկությունների տեսանկյունից՝ կարևոր նախադրյալներ կստեղծեն պատշաճ վարչարարության իրականացման հարցում: Այստեղ նշանակություն ունի, թե սույն գործոնը վարչարարության արդյունքների վրա ինչ աստիճանի ազդեցություն ունի՝ իր առանձնահատկություններից ելնելով: Ուսումնասիրության է ենթակա վարչաիրավական օրենսդրությունում առկա նորմերում ամրագրված՝ իրավունքի միատեսակ կիրառման սկզբունքի պահպանման կամ խախտման նախադրյալները:

Հիմնական հետազոտություն

ՀՀ վարչական օրենսդրությունում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) թեև իրավունքի միատեսակ կիրառման սկզբունքը, որպես վարչարարության հիմնարար սկզբունք, ամրագրված չէ, սակայն դա արգելք չէ օրենսդրությամբ չամրագրված այդպիսի սկզբունքի կիրառելիության համար: Այդպիսի կարգավորում սահմանում է Օրենքի 12-րդ հոդվածը¹: Իրավունքի միատեսակ կիրառման սկզբունքը բխում է օրինականության, հավասարության, վստահության պաշտպանության, հայեցողական լիազորությունների սահմանափակման և կամայականության արգելքի սկզբունքներից: Սույն սկզբունքի էությունն այն է, որ վարչական մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ցուցաբերել հավասար մոտեցում միատեսակ փաստական հանգամանքներին և անհատական մոտեցում՝ էապես տարբերվող հանգամանքներին:

Վարչական մարմինը վարչարարություն իրականացնելիս չի կարող կազմել իր վարույթում գտնվող անգամ բովանդակությամբ իրար նման գործերի լուծման այնպիսի ձևանմուշ, որը կարող է արդյունավետ կամ հեռանկարային լինել, քանզի վարչական մարմնի կողմից քննվող յուրաքանչյուր գործի հանգամանքներն եզակի են իրենց տեսակով: Հետևաբար, յուրաքանչյուր գործ քննելիս վարչական մարմինը պարտավոր է հետևել իրավունքի կիրառման կամ մեկնաբանման սկզբունքների միատեսակ մոտեցումներին:

Իրավունքի միատեսակ կիրառման կամ մեկնաբանման սկզբունքի խախտումը պետք է հիմք հանդիսանա վերահսկողության կարգով վարչական ակտի բեկանման կամ փոփոխման համար: Սույնի տրամաբանությունն այն է, որ վարչաիրավական նորմի միատեսակ կիրառումն ու մեկնաբանումն իրավակիրառ պրակտիկայի միատեսականության նախադրյալն է, որն անուղղակիորեն ազդեցություն կունենա իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության կանխատեսելիության և կայունության վրա, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կայունացման վրա:

Անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ այն գործոններին, որոնք հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող վարչաիրավական գործունեությունում ուղիղ ազդեցություն ունեն իրավունքի նորմի միատեսակ կիրառման կամ մեկնաբանման վրա: Գտնում ենք, որ այդ գործոնների սահմանումը կօժանդակի իրավակիրառ պրակտիկա-

¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Այլ սկզբունքներ կիրառելը» վերատառությամբ 12-րդ հոդված:

յում միատեսականության խախտման պատճառները հայտնաբերելուն, որպիսի պարագայում և կրնձեռվի հնարավորություն ձևավորելու արդյունավետ հայեցակարգային առաջարկներ՝ ներկայիս գործող վարչաիրավական օրենսդրության կատարելագործման համար: Այսինքն, պետք է ուշադրության արժանացնել իրավունքի նորմի միատեսակ կիրառման կամ մեկնաբանման վրա ազդեցություն ունեցող այն հանգամանքներին, որոնցով պայմանավորված է վարչաիրավական հարաբերություններում միատեսակության հասնելու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, գործոնը հասկացվում է որպես շարժիչ ուժ, ցանկացած գործընթացի պատճառ, որը պայմանավորում կամ սահմանում է նրա բնույթը, էական հանգամանք²:

Իրավունքի նորմի միատեսակ կիրառման և մեկնաբանման վրա ազդեցություն ունեցող գործոններից են *իրավունքի աղբյուրները*՝ իրավական դոկտրինան, նորմատիվ իրավական ակտերը, նախադեպային իրավունքը, սովորույթային իրավունքը և այլն: Ինչ վերաբերվում է նախադեպային իրավունքին, որպես իրավունքի աղբյուրի, ապա հարկ է նշել, որ ներպետական իրավական համակարգում՝ իրավակիրառ պրակտիկայում նորմին տրված մեկնաբանությունը, ձևավորած մոտեցումը՝ հետագայում հաշվի է առնվում իրավակիրառ մարմինների կողմից այլ գործերով քննություն իրականացնելիս:

Կարևոր նշանակություն ունի գործող վարչական օրենսդրության լիարժեքությունը, դրա արդյունավետությունն ու իրավական կարգավորումների՝ սահմանադրորեն ամրագրված որոշակիության սկզբունքի որակական հատկանիշների պահանջներին համապատասխանությունը, օրենսդրական տեխնոլոգիաների կատարելագործվածությունը: Վարչական օրենսդրությունում իրավական կարգավորումների այնպիսի ձևակերպումները, որոնք անհարկի մեծ հայեցողական սահմանների շրջանակ են ընձեռում վարչական մարմիններին ու պաշտոնատար անձանց վարչարարություն իրականացնելիս հանգեցնում են իրավական նորմի տարաբնույթ կիրառման կամ մեկնաբանման:

Իրավունքի նորմի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը, որպես պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք, ներպետական վարչական իրավունքում՝ կարող է ապահովվել օրենսդրական կարգավորումների համատեքստում՝ *իրավական կարգավորումների արդիականության, օրենսդրական բացերի և իրավական հակասությունների բացակայության, գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների և դրանք կարգավորող իրավադրույթների համապատասխանության, օրենսդրական տեխնոլոգիաների որակի* ապահովման պարագայում: Հետևաբար, վարչաիրավական օրենսդրությունում իրավունքի արդիական նորմերի բացակայության կամ գործող նորմերի՝ ներկայիս հանրային իրավահարաբերությունների ստանդարտներին չհամադրվելու արդյունքում՝ գործնականում ստեղծվում է մի իրավիճակ, երբ վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրավունքի նորմի տարաբնույթ կիրառման կամ մեկնաբանման հետևանքով կարող են խախտվել անձի, հանրության ու պետության օրինական շահերը: Հանրային իշխանություն իրականացնող մարմինների կողմից *օրենսդրական բացի*³ առկայության դեպքում, որը էականորեն խոչընդոտում է սույն սկզբունքի առաքելության իրականացմանը՝ օրենքի անալոգիայի և իրավունքի անալոգիայի կիրառումը՝ իրավական նորմերի առավել լայն մեկ-

² Ушаков Д.Н., Толковый словарь современного русского языка, Москва, Аделант, 2014, с. 718.

³ Օ. Ս. Պանասյուկը նշում է, որ իրավունքի բացը «հետևանք է հանդիսանում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումների օբյեկտիվորեն անհրաժեշտ օղակի ամբողջական կամ մասնակի բացակայության, որոնք արդեն իրավական կարգավորման ենթարկվել են կամ պետք է ներառվեն իրավական ազդեցության շրջանակում»: / Панасюк О.С., Пробелы в праве и способы их преодоления и устранения : автореф. дис. ... канд. юрид. наук. Ставрополь, 2012, с. 8.

նաբանման և դրանց կիրառման փորձի՝ որոշակի տեսակի վեճերի առանձնահատկությունների հաշվառմամբ, մեր գնահատմամբ, կհանգեցնի բովանդակային իրար նման, սակայն տարբեր լուծումներ ստացած գործերի առկայության: Նույնը կարող ենք ասել նաև *իրավական հակասությունների* մասով, քանզի վարչական օրենսդրությունում առկա նյութաիրավական կամ ընթացակարգային իրավադրույթների հակասությունների առկայության դեպքում՝ վարչական մարմինները կբախվեն միասնական գործողությունների որդեգրման, նույնանման մոտեցման ձևավորման խնդիրների դժվարությանը՝ չնայած իրավունքի տեսության և նախադեպային իրավունքում առկա հակասությունների հաղթահարման մեթոդների:

Վերոնշյալի համատեքստում, անհրաժեշտ է անդրադառնալ նաև վարչական իրավունքի՝ *հոգուր ոչ իշխանական շահագրգիռ կողմի իրավունքի մեկնաբանման սկզբունքի* օժանդակ ազդեցությանը՝ պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում, որը սերտորեն փոխկապակցված է իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի հետ: Սույն սկզբունքի էությունն այն է, որ նորմատիվ իրավական ակտերում առկա յուրաքանչյուր հակասություն, բաց, կասկած կամ անորոշություն՝ վարչարարության իրականացման ընթացքում երևան եկող՝ մեկնաբանվում են հոգուտ շահագրգիռ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի⁴: Սույն սկզբունքի նշանակության կարևորությունը կայանում է նրանում, որ ամրագրում է ստացել, օրինակ, ներպետական հարկային օրենսդրությունում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասում, համաձայն որի՝ «եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարրնթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին⁵», այսինքն՝ սույն դրույթի ամրագրմամբ օրենսդիրը կիրառել է հոգուտ ոչ իշխանական շահագրգիռ կողմի իրավունքի մեկնաբանման սկզբունքը:

Ըստ Վ. Ա. Սուսլովի՝ «Իրավական նորմի համատեքստի սահմանները գտնվում են միջակայքում, որը որոշվում է, մի կողմից՝ միանշանակությամբ, մյուս կողմից՝ նշանակությունների անորոշությամբ: Համատեքստի սահմանները որոշվում են՝ դատողությունների ռացիոնալության չափանիշի օգնությամբ, կոնտեքստի սահմանները ուրվագծվում են ռացիոնալությունը պահպանող դատողություններով, որոնք համապատասխանում են տրամաբանության ֆորմալ պահանջներին՝ ռացիոնալ դատողության հիմքը հանդիսանում է հենց տրամաբանությունը և ֆորմալիզմը, որոնք հանգեցնում են արդյունքների ընդհանուր նշանակության: Այսպիսով, իրավական նորմի իմաստների որոնումը սահմանափակվում է այս սահմաններով: Ի տարբերություն գրականության տեքստի, որի հերմենևտիկ վերլուծությունը սահմանափակված չէ նման շրջանակներով, իրավական տեքստի կառուցվածքային վերլուծությունը կարող է հիմնված լինել միայն ֆորմալ տրամաբանության վրա:»⁶:

Ինչ վերաբերում է օրենսդրական օրինաստեղծ տեխնոլոգիաների որակային պահանջների համապատասխանությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ իրավունքի նորմի իրավական ձևակերպումներն ու հասկացություններն այնպես պետք է ամրագրվեն, որ պատասխանեն իրավունքի նորմի գրագիտության և կոռեկտության պահանջներին:

⁴ Давыдов К.В., Принципы административных процедур: европейский и российский опыт, 2017. - http://www.kizilov-inc.ru/sites/default/files/gm_articles/principy_administrativnyh_procedur_evropeyskiy.pdf.

⁵ ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մաս

⁶ Сулов В.А., Реализация принципа единообразия в сфере правоприменения, Правоведение, 2014, № 1 (312), с. 59 <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-aspekty-realizatsii-printsipa-edinoobraziya-v-sfere-pravoprimeneniya/viewer>.

Օրենսդրական ձևակերպումների նշանակությունը միշտ չէ, որ պարզ է, իմաստային անպարզությունների հաղթահարման, անորոշության բացառման համար օրենսդրի կողմից ձևավորվել են տարբեր գործիքակազմեր իրավադրույթների առավել պարզ ընկալման համար, որոնք պայմանավորված են լեզվական և օրենքի կառուցվածքային գործոններով: Առհասարակ, ներպետական օրենսդրական համակարգում գործում է նորմի ընկալման այն սկզբունքը, ըստ որի՝ նորմը պետք է ընկալվի որպես ներդաշնակ մի ամբողջություն, սակայն առավել լայն օրենսդրական համատեքստում մեկնաբանման կարող են ենթարկվել նրա առանձին հատվածները: Օրինակ՝ առանձին հասկացությունների, բառերի, արտահայտությունների առնչությամբ ի սկզբանե օրենքում սահմանվում է, թե այդ եզրույթները որ իմաստով են ներկայացված օրենքում, արդյոք դրանք օգտագործված են բառարանային նշանակությամբ, թե՛ գործածված են տվյալ օրենքում հատուկ այլ իմաստային նշանակությամբ:

Հետևաբար և, իրավունքն այնպես պետք է արտահայտվի նորմում, որ տարաբնույթ մեկնաբանման կամ կիրառման չհանգեցնի՝ իր իսկ անորակ ձևակերպման հետևանքով, քանի որ իրավակիրառող կբախվի սույն նորմերի միատեսակ կիրառման և մեկնաբանման դժվարությունների հետ: Այստեղ՝ անհրաժեշտ է նաև նշել, որ վարչական օրենսդրությունում հստակ ամրագրված է վարչական ակտին ներկայացվող՝ ձևի և բովանդակության պահանջները, որոնց հետևումը, բնականաբար, երաշխավորում է այդ ակտերի օրինականությունը, հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը, որը որոշակի առումով օժանդակում է իրավունքի նորմի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի իրացմանը, քանի որ վարչական ակտերի օրինականության պահանջներից է նաև կիրառված նորմին հղումի առկայությունը: Վարչական ակտերին միանման մոտեցման ձևավորմանը նպաստում է նաև վարչական ակտերի կառուցվածքային պահանջների հետևումը:

Իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի իրացման հիմնական ասպեկտներից են՝ հանրային իշխանության մարմինների կողմից վարչարարության պատշաճ իրականացումը՝ որակյալ և արդյունավետ գործունեության իրականացումը հոգուտ անձի, հանրության և պետության բարօրության, և հանրության իրավական մշակույթի ընկալումն ու իրավական գրագիտությունը, իրավաընկալման մակարդակը, որի առկայությունը նպաստում է առավել որակյալ օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության:

Եզրակացություն

Հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց կողմից որակյալ վարչարարության իրականացման ապահովմանն է միտված իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը, որի գործողությունը կերաշխավորվի վարչական՝ նյութական և ընթացակարգային իրավական կարգավորումների բովանդակության որոշակիության, դրանց հիման վրա վարչական ակտերի կայացման կարգի, վերահսկողության կարգով վերադաս վարչական մարմնի կողմից վարչական ակտերի վերանայման արդյունավետ համակարգի ներդրմամբ, վարչարարության միատեսականության ապահովմանն ուղղված այլ գործուն իրավական մեխանիզմների առկայությամբ:

Վարչաիրավական համակարգում իրավունքի միատեսակ կիրառման ու մեկնաբանման սկզբունքը, փոխկապակցված լինելով հոգուտ ոչ իշխանական շահագրգիռ կողմի մեկնաբանման սկզբունքի հետ, ուղղված է երաշխավորելու հանրության և պետության օրինական շահերի միջև հավասարակշռության ապահովման գործուն մեխանիզմների իրավական որոշակիության և իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունում միատեսակ մոտեցման ձևավորմանը, իրավական մշակույթի և հանրության իրավագիտակցության մակարդակով

պայմանավորված՝ վարչարարության սուբյեկտների բարեխղճության, նրանց ձգտումների՝ գործի օրինական, արդյունավետ և կառուցողական լուծմանը:

Առավել հանգամանորեն անդրադարձ կատարվեց իրավակիրառ գործունեության վրա իրենց ազդեցության աստիճանով պայմանավորված՝ վարչարարությունում իրավունքի կիրառման և մեկնաբանման վրա ազդեցություն ունեցող գործոններին, որոնք իրենց բնույթով տարբերվող են և բազմազան:

Ըստ այդմ, առաջարկվում է՝ *իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի*, ինչպես նաև *հոգուր ոչ իշխանական շահագրգիռ կողմի իրավունքի մեկնաբանման սկզբունքի* ամրագրումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ Գլխում՝ ապահովելով հավասարություն պետության, հանրության և անձի իրավունքների միջև, որը նաև հնարավորություն կընձեռեր հաստատել իրավունքի սուբյեկտների գործողությունների կարևոր ուղեցույցները և կնպաստեր վարչաիրավական օրենսդրության կատարելագործմանը՝ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը:

Կարծում ենք, որ սույն վերլուծությունները կարող են արժեք ունենալ նաև վարչական դատավարության օրենսդրության կատարելագործման հարցում:

Ամփոփագիր: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում այսօր խնդրահարույց են դարձել այնպիսի սկզբունքների ամրագրումն ու դրանց գործնական կիրառելիության ապահովումը, որպիսիք իրապես կերաշխավորեն հանրային իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից իրականացվող վարչարարական գործընթացում ոչ իշխանական կողմի՝ պատշաճ վարչարարության իրավունքը: Սույն հոդվածը նվիրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում չամրագրված այնպիսի սկզբունքի կիրառելիության անհրաժեշտությանը, ինչպիսին է իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը: Հոդվածում ներկայացվել են այն գործոնները, որոնք վարչաիրավական գործունեությունում ազդեցություն ունեն սույն սկզբունքի գործողությունն ապահովելու համար: Նշված սկզբունքից է բխեցվել նաև հոգուր ոչ իշխանական շահագրգիռ կողմի իրավունքի մեկնաբանման սկզբունքը, փորձ է կատարվել հիմնավորել դրանց համընդհանուր օժանդակ ազդեցությունը պատշաճ վարչարարության իրականացման հարցում: Ներկայացվել են նաև վերոնշյալ սկզբունքի ասպեկտները, այն է՝ հանրային իշխանության մարմինների կողմից վարչարարության պատշաճ իրականացումը՝ որակյալ և արդյունավետ գործունեության իրականացումը հոգուր անձի, հանրության և պետության բարօրության, և հանրության իրավական մշակույթի ընկալումն ու իրավական գրագիտությունը, իրավաընկալման մակարդակը, որի առկայությունը նպաստում է առավել որակյալ օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության:

Annotaiion. Regarding the realization of the right to proper administration established by the RA Constitution, the establishment of such principles and ensuring their practical applicability have become problematic today, which would really guarantee the right of the non-governmental party to proper administration in the administrative process carried out by the administrative body endowed with public authority. This article is devoted to the need for the applicability of such a principle as the principle of uniform application and interpretation of law, which is not specified in the Law of the Republic of Armenia “On Basics of Administration and Administrative Procedure”. The article presents the factors that have an impact in administrative and legal activities to ensure the functioning of this principle. The principle of interpretation of the right of the non-governmental interested party was also derived from the mentioned principle, and an attempt was made to justify their general auxiliary effect in the implementation of proper administration. The aspects of the above-mentioned principle were also presented, that is, the proper implementation of administration by public authorities, the implementation of quality and efficient activities in favor of the welfare of the person, the public and the state, and the perception of the public’s legal culture and legal literacy, the level of legal perception, the presence of which contributes to higher quality law-making and law-enforcement activities.

Աննոտация. В вопросе реализации права на надлежащее администрирование, закрепленного Конституцией РА, сегодня проблематичным стало закрепление таких принципов и обеспечение их практического применения, которые действительно гарантировали бы право на надлежащее администрирование заинтересованной невластной стороны в административном процессе, осуществляемого со стороны административного органа, обладающего публично-властными полномочиями. Статья посвящена рассмотрению необходимости применения незакрепленного в законе РА «Об основах администрирования и административном производстве» такого принципа, каковым является принцип единообразного применения и толкования права. В статье были представлены те факторы, которые в административно-правовой деятельности имеют воздействие на обеспечение действия данного принципа. Из указанного принципа был выведен также принцип толкования права в пользу заинтересованных невластных лиц, была сделана попытка обосновать их всеобщее вспомогательное воздействие в вопросе осуществления надлежащего администрирования. В статье представлены также аспекты вышеуказанного принципа, т.е. надлежащее осуществление администрирования со стороны органов публичной власти – осуществление качественной и эффективной деятельности во благо лица, общественности и государства, и восприятие со стороны общественности правовой культуры и правовой грамотности, уровень правосознания, наличие которого способствует более высококачественной законотворческой и правоприменительной деятельности.

Բանալի բառեր - Իրավունքի միատեսակ կիրառում և մեկնաբանում, վարչական գործընթաց, իրավաստեղծ և իրավակիրառ գործունեություն, գործունեի ազդեցություն:

Keywords: Uniform application and interpretation of law, administrative process, lawmaking and law enforcement activities, influence of factors.

Ключевые слова: единообразное применение и толкование права, административный процесс, правотворческая и правоприменительная деятельность, влияние факторов.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ընդունված 06.12.2015 թ. հանրաքվեով / ՀՀՊՏ 2015.12.21
2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, ընդունված 04.10.2016 թ., ՀՕ-165-Ն / ՀՀՊՏ 2016.11.04/79(1259)
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ընդունված 18.02.2004 թ., ՀՕ-41-Ն / ՀՀՊՏ 2004.04.14/21(320)

Գիտական գրականություն

1. Давыдов К.В., Принципы административных процедур: европейский и российский опыт, 2017.
2. Панасюк О.С., Пробелы в праве и способы их преодоления и устранения : автореф. дис. ... канд. юрид. наук. Ставрополь, 2012.
3. Сулов В.А., Реализация принципа единообразия в сфере правоприменения, 2014.
4. Ушаков Д.Н., Толковый словарь современного русского языка. Москва: Аделант, 2014.

Հայրապետովա Մ. - ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի առաջատար մասնագետ, Հայ-Ռուսական համալսարանի 3-րդ կուրսի ասպիրանտ, էլիասցե՝ milkgrig@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 03.05.2024 թ., տրվել է գրախոսության 03.05.2024 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, Հայ-Ռուսական համալսարանում դասախոս Ն. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.:

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ADMINISTRATIVE PROCEDURE/
АДМИНИСТРАТИВНЫЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-10>

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

*Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայ-Ռուսական համալսարանի դոկտորանտ*

RAFIK KHANDANYAN

*Senior Lecturer at the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University,
Judge of the Administrative Court of Appeal of the Republic of Armenia,
Candidate of Law, Associate Professor,
Doctoral Student at the Russian-Armenian University*

РАФИК ХАНДАНЯН

*Старший преподаватель кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета,
судья административного апелляционного суда РА,
кандидат юридических наук, доцент,
докторант Российско-Армянского университета*

**ՈՒՂՂԱԿԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ԸՆԴԱՅՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**TRENDS IN THE EXPANSION OF OBJECTS OF DIRECT JUDICIAL
CONTROL IN ADMINISTRATIVE PROCEEDINGS IN THE REPUBLIC OF
ARMENIA**

**ТЕНДЕНЦИИ РАСШИРЕНИЯ ОБЪЕКТОВ ПРЯМОГО СУДЕБНОГО
КОНТРОЛЯ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА**

Ներածություն

Ժամանակակից հասարակության մեջ նորմատիվ կարգավորումն առանցքային դեր է խաղում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների կայունության, կարգի և պաշտպանության ապահովման գործում: Այնուամենայնիվ, կանոնակարգերի բազմազանու-

թյունը, դրանց տարբեր ծագումն ու կարգավիճակը հարցեր են առաջացնում դրանց իրավական ուժի համակարգի, ինչպես նաև կիրառման և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ:

Սույն հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավորման մի շարք կարևոր ասպեկտներ, այդ թվում՝ տեղական ինքնակառավարումը, քաղաքացիական ծառայությունը և միջազգային պայմանագրերը: Քննարկվում է տարբեր ծագման և կարգավիճակի կանոնակարգերի նկատմամբ դատական վերահսկողության հարցը, ինչպես նաև, թե ինչպես են այդ գործողություններն ազդում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և շահերի վրա:

Վերլուծվում են համայնքային պայմանագրերի նկատմամբ դատական վերահսկողության առանձնահատկությունները, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատումը և միջազգային իրավունքի նորմերի պահպանումը: Նշված հարցերի համատեքստում դիտարկվում է դատական համակարգի դերն օրինականության ապահովման և իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության գործում:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավորման արդի խնդիրներն ու ասպեկտները, ինչպես նաև քննարկել նորմատիվ ակտերի օրենսդրությանը համապատասխանության և քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների պաշտպանության նկատմամբ դատական վերահսկողության մեխանիզմներն ու գործիքները:

Հիմնական հետազոտություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը դատավարական պրակտիկայում

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կայացումն անցել է զարգացման բարդ ճանապարհ: Դա հատուկ է ոչ միայն հետխորհրդային պետություններին¹, այլև ուրիշ իրավական համակարգերին: Ընդ որում, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե քաղաքական իշխանության կամքով կամ նախաձեռնությամբ, այլ դատարանների ակտիվիզմի շնորհիվ: Այլ կերպ ասած՝ դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնման հարցում մեծ ազդեցություն են ունեցել ոչ այնքան օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմինները, որքան դատարանները:

Հանրահայտ է, որ ԱՄՆ-ում քաղաքական իշխանության ակտերի նկատմամբ դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտը ներդրվել է ոչ թե հիմնադիր իշխանության կամ քաղաքական իշխանության կողմից, այլ ԱՄՆ գերագույն դատարանի կողմից (1803 թ.): Այսպես, XIX-րդ դարի սկզբին ԱՄՆ գերագույն դատարանը, Ջ. Մարշալի նախագահությամբ, երկու կարևորագույն հարցերի վերաբերյալ կայացրեց արտառոց որոշում (Marbury v. Madison). Նախ՝ դատարանն իրեն լիազորեց որոշելու օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը և դրանով իսկ որոշելով դրա վավերականությունը: Երկրորդ, դատարանը սահմանեց ենթադրյալ լիազորությունների վերաբերյալ դոկտրինը, այսինքն՝ այն լիազորությունները, որոնք թեև հստակ նշված չեն Սահմանադրության տեքստում, բայց բխում

¹ Այս մասի տես *Խանդանյան Ռ.*, Դատական վերահսկողությունը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ (պատմաիրավական էվոլյուցիան), Եր., ՀՈՀ հրատ., 2022:

են ընդհանուր սահմանադրական մեկնաբանության տրամաբանունից: Թեև Ամերիկացի հեղինակների մեծ մասը պնդում է, որ ԱՄՆ գերագույն դատարանը, դատական սահմանադրական վերահսկողության համար Սահմանադրության տեքստում չգտնելով անվիճելի հիմքեր, «յուրացրել» է վերահսկողության լիազորությունները², սակայն պատմական առումով կարելի է փաստել, որ այս գործից հետո ԱՄՆ դատական իշխանությունը վերածվեց «հավասարների մեջ առաջինը» և դրեց սահմանադրական վերահսկողության ժամանակակից հիմքերը:

Ֆրանսիայի պետական խորհուրդը, Արևելյան երկաթուղիների ընկերության գործով կայացրած որոշմամբ, Վարչական դատարանի վերահսկողությունը տարածեց ենթաօրենսդրական ռեգլամենտային որոշումների նկատմամբ, այսինքն՝ գործադիր-կարգադրիչ մարմինների ակտերի նկատմամբ: Դրանով վերահսկողությունը տարածվեց գործադիր իշխանության ակտերի աստիճանականակարգության մեջ ամենաբարձր ուժ ունեցող ակտերի վրա³:

Նույնիսկ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) իրավական համակարգում ԵՄ դատարանը, անտեսելով դատական վերահսկողության օբյեկտների վերաբերյալ հիմնադիր փաստաթղթերում առկա կարգավորումները, ընդլայնել է իր վերահսկողության շրջանակը: Օրինակ՝ 1980-ականներին Ֆրանսիայի բնապահպանական կուսակցությունը (French Ecologists) ԵՄ խորհրդարանի որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ հայց է ներկայացրել ԵՄ դատարան, այն հիմնավորմամբ, որ ԵՄ խորհրդարանի այդ որոշումը խտրականություն է դնում կուսակցությունների միջև: Դատավարական վարույթը նախաձեռնվել էր ԵՄ հիմնադիր պայմանագրի 173-րդ հոդվածի հիման վրա, որն այդ գործը քննելու ժամանակահատվածում ձևակերպված էր հետևյալ կերպ. «Դատարանը վերահսկողություն է իրականացնում Հանձնաժողովի և Խորհրդի ակտերի օրինականության նկատմամբ(...)»: Տ. Կ. Հարթլին նշում է.

«Պայմանագրի 173-րդ հոդվածը միանգամայն հասկանալի է. այն չի պարունակում ԵՄ խորհրդարանի ակտերի մասին հիշատակում: Այնուամենայնիվ, ԵՄ դատարանը վճռել է, որ այն ընդգրկում է նաև խորհրդարանի ակտերը: Դատարանն արձանագրել է, որ համայնքը գործում է իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա, և ինչպես անդամ պետությունների, այնպես էլ համայնքի ինստիտուտների ակտերը՝ Պայմանագրին դրանց համապատասխանելիությունն ապահովելու նպատակով հանդիսանում են դատական վերահսկողության օբյեկտ: Այնուհետև դատարանը նշել է, որ ԵՄ-ի պայմանագրում ամրագրված չէ Խորհրդարանի ակտերը վերահսկելու դատարանի իրավասությունը, քանի որ ԵՄ պայմանագրի կազմման ընթացքում խորհրդարանը չունեցրեց երրորդ կողմերի շահերը շրջափող ակտեր ընդունելու իրավասություն: Դատարանը եզրակացրել է, որ եթե խորհրդարանի ակտերը դատական վերահսկողության օբյեկտ չհամարվեն, ապա դա կհակասի Պայմանագրի ոգուն: Այսպիսով, Դատարանը որոշել է, որ Պայմանագրի 173-րդ հոդվածն ընդգրկում է նաև խորհրդարանի ակտերը: Նման որոշման տրամաբանությունը միանգամայն հասկանալի է. Դատարանը պարզապես արձանագրել է, որ խորհրդարանի ակտերը պետք է ենթակա լինեն վերանայման, հեղափոխության դրանք վերանայվում են»⁴:

ՌԴ-ում գործադիր իշխանության մարմինների նորմատիվ բնույթի նամակները, պարզաբանումները ճանաչվեցին որպես դատական վերահսկողության օբյեկտ ՌԴ բարձր դատարանների միջամտության շնորհիվ (այս մասին հաջորդիվ):

² Сафонов В.Н., Конституционное правотворчество в деятельности Верховного суда США, Историко-правовое исследование: монография. М., Проспект, 2023, с. 24-25, 71.

³ Брэбан Г., Французское административное право. Пер. с фр. М.: Прогресс, 1988, с. 363.

⁴ Хартли Т.К., Основы права Европейского сообщества: Пер. с англ. - М.: Закон и право, ЮНИТИ, 1998, с. 90-91.

Ի դեպ, հայկական իրականության մեջ նույնպես հանդիպել են դեպքեր, երբ այս կամ այն իրավունքի պաշտոնական աղբյուրը թեև ՀՀ օրենսդրությամբ չի համարվել դատական վերահսկողության օբյեկտ, սակայն ՀՀ բարձր դատարանները դրանք ճանաչել են որպես այդպիսին: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանը «2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 10.10.2017 թ. ՍԴՈ-1381 որոշմամբ նշել է.

«Վերոգրյալի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանում սույն գործի շրջանակներում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կարգավորիչ համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ Սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանադրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

ՀՀ Սահմանադրական դատարանը ԵԱՏՄ իրավունքի՝ ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող աղբյուրները, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքը, որը, ըստ էության, միջազգային պայմանագիր է (դրա հավելվածը)⁵, իրավական ֆիկցիայի միջոցով համարել է օրենք և այն դիտարկել է որպես հետագա սահմանադրական վերահսկողության օբյեկտ: ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածում ակնհայտորեն միջազգային պայմանագրերը, անկախ նրանից, որ դրանք կարգավորում են պետության ներսում ուղղահայաց հարաբերություններ, հետագա դատական վերահսկողության օբյեկտ չեն:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների որոշման հարցում սկզբունքային է դատարանների ակտիվիզմը. առանց դրա քիչ հավանական է, որ քաղաքական իշխանությունը սեփական նախաձեռնությամբ կընդլայնի ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների շրջանակը: Քաղաքական իշխանության կամավոր ինքնազսպումը (ինքնասահմանափակումը) հնարավոր է սահմանադրականության ռեժիմի և զարգացած քաղաքական մշակույթի պայմաններում:

1.2. Դատական վերահսկողության օբյեկտները որոշելու մեթոդաբանությունը

1.2.1. Դատական վերահսկողության օբյեկտների որոշման պոզիտիվ և նեգատիվ տաքսացիայի մեթոդները: Մինչև դատական վերահսկողության ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը քննարկելը, պետք է ընդհանուր նշել, թե օրենսդիրը ինչ մեթոդներով է որոշում դատական վերահսկողության ենթակա ակտերի շրջանակը: Ընդհանուր կանոնի (generalis clausula - общее правило) համաձայն՝ վարչական որոշումները, հանդիսանում են դատական վերահսկողության օբյեկտ: Վարչական իրավունքում առանձնացվում են դատա-

⁵ ՀՀ Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ նշել է. «Սույն պայմանագրով նախատեսվող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող նորմերն (Խոսքը՝ Օրենսգրքի մասին է) իրենց բնույթով հանդես են գալիս որպես օրենքին բնորոշ դրույթներ, որոնց ընդունումը՝ առանց նախնական սահմանադրական վերահսկողության պայմանի, ՀՀ Սահմանադրությունը վերապահել է օրենսդիր մարմնին»:

կան վերահսկողության օբյեկտները որոշելու նեգատիվ և պոզիտիվ տաքսացիայի (գնահատման⁶) եղանակները⁷: Նեգատիվ տաքսացիայի դեպքում օրենսդիրը սահմանում է այն գործերի կամ ակտերի շրջանակը, որոնք ենթակա չեն դատական վերահսկողության: Ընդ որում, եթե ակտերի մի մեծ խումբ ենթակա չլինեն դատական վերահսկողության, ապա «generalis clausula» կանոնը կորցնում է իր իմաստը, քանի որ այս ընդհանուր կանոնի համաձայն՝ վարչական մարմին որոշումները ենթակա են դատական վերահսկողության: Ռուս մասնագետները նշում են, որ նեգատիվ տաքսացիան «բացառություն է՝ օրենսդրի կամքով»⁸:

Դրական տաքսացիան նշանակում է, որ օրենքում թվարկվում են բոլոր այն ակտերը (դրանց տեսակները), որոնք ենթակա են դատական վերահսկողության: Կարգավորման այս մեթոդի կիրառման դեպքում դատական վերահսկողության օբյեկտների ցանկում չհայտնված ակտերը (դրանց տեսակները) դատական վերահսկման ենթակա չեն: Դրական տաքսացիայի առավելությունն այն է, որ կասկած չի թողնում, թե որ գործերով է հնարավոր դատական վերահսկողություն, և դրանով իսկ գործող օրենսդրության տեսանկյունից ամուր հիմք է տալիս իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման համար: Դրական տաքսացիայի տարբերակներից մեկն, այսպես կոչված, էնումերատիվ (ընդհանրացնող) մեթոդն է, որի ժամանակ դատական վերահսկողության օբյեկտների ցանկում նշվում են ոչ թե վերահսկման ենթակա ակտերը կամ դրանց ենթախմբերը, այլ գործերի ընդհանուր խումբը (օրինակ՝ խոսվում է հարկային գործերի մասին):

Եթե այս մեթոդները տեղայնացնենք դատական վերահսկողության ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը որոշելու նկատմամբ, ապա կստացվի հետևյալը: Եթե օրենսդիրը հիմք ընդունի «generalis clausula» կանոնը, ապա պետք է նախ փաստի, որ ՀՀ հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի բոլոր ենթաօրենսդրական ակտերը դատական վերահսկողության օբյեկտ են, այսինքն՝ ընդհանուր կանոնն այն է, որ դրանք բոլորը կարող են վիճարկվել ՀՀ վարչական դատարանում: Այս ընդհանուր կանոնը կարող է զուգակցվել ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ տաքսացիայի մեթոդներով վերահսկողության օբյեկտները որոշելու հետ: Այսպես՝ դրական տաքսացիայի մեթոդի դեպքում օրենսդիրը կարող է ի լրումն ընդհանուր կանոնի, նաև կոնկրետ թվարկել, թե որ մարմինների ենթաօրենսդրական ակտերը կարող են դատարանում վիճարկվել: Իսկ բացասական տաքսացիայի դեպքում օրենսդիրն թեև ընդունում է «generalis clausula» կանոնը, սակայն դրան զուգահեռ նախատեսում է բացառություններ, այսինքն՝ թվարկում է այն ենթաօրենսդրական ակտերը, որոնք ՀՀ վարչական դատարանում չեն կարող վիճարկվել:

1.2.2. Դատական վերահսկողության օբյեկտների որոշման «generalis clausula» իմպլիցիտ կանոնը և պոզիտիվ տաքսացիան ՀՀ վարչական դատավարությունում

(a) «Generalis clausula» իմպլիցիտ կանոնը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում: ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի նորմատիվ իրավական ակ-

⁶ СУЧ(Р)УУՏԻԱ [таксация < գերմ. Taxation < լատ. taxare գնահատելի գ. 1. (ֆին.): Գնահատում, սակորոշում, սակադրում, գնորոշում: 2. (մսնգ.): Որակի ու քանակի որոշում: Հայրապետյան Ա. Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Գիտ. խմբ. Ա. Սարգսյան, Եր., Հեղինակային հրատ., 2011 էջ 553:

⁷ Берени Ш., Самел Л., Барацка Р., Иванчич И., Венгерское административное право / Пер. с венг. М.: Прогресс, 1990. С. 461-462, Зеленцов А.Б., Административная юстиция: учебно-методическое пособие. М.: Изд. РУДН, 2009.

⁸ Зеленцов А.Б., Ястребов О.А., Судебное административное право: учебник. М.: Статут, 2017, с. 234-241.

տերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրություն-նից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Այս հոդվածի տառացի ձևակերպումը թույլ չի տալիս պնդելու, որ Օրենսդիրն ուղղակի դատական վերահսկողության օբյեկտը որոշելու հարցում իմպլիցիտ կերպով հիմք է ընդունել «generalis clausula» կանոնը: Թեև Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղղակիորեն (էքսպլիցիտ) չի նշել, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ բոլոր գործերը, սակայն պատմաիրավական տեսանկյունից հարցը դիտարկելիս, պարզ է դառնում, որ Օրենսդիրը փաստացի հիմք է ընդունել «generalis clausula» կանոնը, ըստ որի՝ հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի ցանկացած ակտը կարող է համարվել դատական վերահսկողության օբյեկտ:

Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում պոզիտիվ տաքսացիայի մեթոդով պարզապես թվարկել է այն մարմինների նորմատիվ իրավական ակտերը, որոնք համարվում են դատական վերահսկողության օբյեկտ, սակայն դատական վերահսկողության օբյեկտների ցանկը սահմանելիս, թվարկել է ՀՀ վարչ. դատ. օր.-ն ընդունելու ժամանակահատվածում գործող բոլոր նորմատիվ իրավական ակտերը: Օրինակ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին, իսկ «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքով (2018 թ. ուժը կորցրել է) գերատեսչական էին համարվում գործադիր իշխանության գրեթե բոլոր մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը⁹: Այս հանգամանքից կարելի է բխեցնել, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում դրված է դատական վերահսկողության օբյեկտների որոշման «generalis clausula» իմպլիցիտ կանոնը. Օրենսդիրը ցանկացել է, որպեսզի նորմատիվ իրավական բոլոր ակտերը համարվեն դատական վերահսկողության օբյեկտ:

Այնուամենայնիվ՝ ՀՀ վարչական դատարանում գերակայում է այլ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը:

(b) ՀՀ վարչական դատարանի նախապարտությունը պոզիտիվ տաքսացիայի մեթոդին: ՀՀ վարչական դատարանը կարծում է, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորումն իրականացվել է ոչ թե «generalis clausula» ընդհանուր կանոնի հիման վրա, այլ միայն պոզիտիվ տաքսացիայի մեթոդով: Օրինակ՝ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/9774/05/21 գործով, քննարկելով ՀՀ ազգային ժողովի նախագահի որոշման դատական վերանայման ենթակա լինելու հարցը, 16.09.2021թ. որոշմամբ արձանագրել է.

⁹ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր էին համարվում՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կարգադրությունները, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որոշումները և հրահանգները, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումները, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշումները, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումները, նախարարների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների հրամանները, մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները:

«ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի իրավակարգավորումներով սահմանվել է, որ վարչական դատարանին ընդդատյա են հետևյալ մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը վիճարկելու վերաբերյալ գործերը՝ ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, գերատեսչական, համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի: Տվյալ դեպքում հայցվորի կողմից ներկայացվել է ՀՀ ազգային ժողովի նախագահի կողմից ընդունված ակտը (...) վիճարկելու վերաբերյալ դիմում, մինչդեռ Դատարանը փաստում է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ գործերը, ամեն դեպքում, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածով ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին»:

ՀՀ վարչական դատարանը, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի ընթերցման արդյունքում եզրահանգել է, որ եթե որևէ ակտ, անկախ որևէ հանգամանքից, նախատեսված չէ օրենքով նախատեսված այդ ցանկում, ուստի այն չի կարող համարվել դատական վերահսկողության օբյեկտ: Ի դեպ, 2015 թ. Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո և 2018թ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» նոր օրենք ընդունելուց հետո ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը չի համապատասխանեցվել նորմատիվ իրավական ակտերի նոր համակարգին, ուստի այս նորմի նկատմամբ տեքստուալիզմը որևէ կերպ արդարացված չէ:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է անտրամաբանական իրավիճակ: Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում բնականաբար չեն հիշատակվում այն մարմինների ակտերը, որոնք օրենքով չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն: Իսկ եթե գործնականում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն չունեցող որևէ պետական մարմին, դուրս գալով Սահմանադրությամբ և օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակից, այնուամենայնիվ ընդունի **փաստացի** նորմատիվ բնույթի որոշում, ապա այդ նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը ձևական դատական վերահսկողության շրջանակներում չի կարող ստուգվել: Այս վիճակի անտրամաբանականությունն այն է, որ դատական ստուգման կարող են ենթարկվել պետական այն մարմինների ակտերը, որոնք ունեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու լիազորություն, իսկ այն պետական մարմինները, որոնք առհասարակ չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, փաստացի դուրս են մնում դատական նորմավերահսկողությունից: Նման մոտեցումը հակասում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը:

Իրավաստեղծ լիազորություն չունեցող պետական մարմնի կողմից նորմատիվ բնույթի որոշում ընդունելը «ultra vires¹⁰» հայեցակարգի խախտում է, ուստի՝ Դատարանները պետք է հնարավորություն ունենան «inexistence¹¹» իրավական չափանիշի հիման վրա ստուգելու այդ որոշման իրավաչափությունը:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի իմաստն այն է, որ դատարանը հնարավորություն ունենա ձևական և

¹⁰ ultra vires - լիազորություններից դուրս:

¹¹ Inexistence - գոյություն չունեցող: Ֆրանսիական վարչական իրավունքում «Inexistence»-ը վարչական մարմնի ակտերի ստուգման հիմքերից է: Այն վերաբերում է վարչական գործողության գոյություն չունենալուն: Որոշ ոլորտներ այնքան կարևոր են, որ կասկածի տակ են դնում ենթադրյալ գործողության կամ որոշման բուն գոյությունը: Դրա օրինակ է ոչ պատշաճ անձի կամ լիազորություն չունեցող անձի կողմից որոշում կայացնելը: Այս մասին տե՛ս *Галлиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н., Административное право: история развития и основные современные концепции.* М.: Юристъ, 2002:

նյութական չափանիշներով ստուգել գործադիր իշխանության մարմինների ակտերի իրավա-
չափությունը, այդ թվում՝ ստուգել, թե տվյալ պետական մարմինն ուներ արդյոք նորմատիվ
բնույթի իրավական ակտ ընդունելու լիազորություն:

Այսպիսով՝ ՀՀ վարչական դատարանն ունի բավարար հիմքեր կարծելու, որ ՀՀ վարչ.
դատ. օր.-ի 191-րդ հոդվածի հիմքում իմպլիցիտ դրված է «generalis clausula» ընդհանուր կա-
նոնը, որը զուգակցված է պոզիտիվ տաքսացիայի մեթոդով: Ընդհանուր կանոնի համաձայն՝
դատական վերահսկողության ենթակա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ
բնույթի բոլոր ակտերը, իսկ դրական տաքսացիայի մեթոդով ընդհանուր կանոնը կոնկրե-
տացված է վերահսկողության ենթակա օբյեկտների որոշակի ցանկով:

(c) *Իրավունքի զարգացման միտումները*: ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլուխը նոր խմ-
բագրությամբ շարադրելու վերաբերյալ Օրենքի նախագծում հեղինակներն առաջարկում են
ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Վարչական դատարանին ընդդատյա են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական
ակտերի՝ օրենքների, այդ թվում՝ սահմանադրական օրենքներին (այսուհետ՝ օրենքներ), հա-
մապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»¹²:*

Այս դեպքում նույնպես չենք կարող միանշանակորեն պնդել, որ Նախագծի հեղինակները
ցանկացել են դատական վերահսկողության օբյեկտների որոշման հարցում հիմք ընդունել
«generalis clausula» կանոնը: Բանն այն է, որ Նախագծի հիմնավորման մեջ նշվում է.

*«Ներկայում վարչական դատարանին ընդդատյա են ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարու-
թյան, ՀՀ վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրա-
վական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ
իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերը: Մինչդեռ, նման
սահմանափակ շրջանակ նախատեսելը չի համապատասխանում Սահմանադրության կար-
գավորումներին, քանի որ նման ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են նաև այլ մար-
միններ, ինչպես օրինակ Բարձրագույն դատական խորհուրդը, ինքնավար մարմինները:
Հերևաբար, նման սահմանափակ շրջանակի պահպանումը անհարկի սահմանափակում է
ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական հսկողության հնարավո-
րությունը»¹³:*

Այս հիմնավորումից նկատվում է, որ հեղինակները ցանկացել են դատական վերահս-
կողության օբյեկտ դարձնել ոչ թե հանրային իշխանության մարմինների՝ բնույթով նորմա-
տիվ ցանկացած իրավական ակտ, այլ՝ պարզապես նման ակտեր ընդունելու լիազորությամբ
օժտված են մարմինների ակտերը:

Այնուամենայնիվ Նախագծում առկա մոտեցումը, եթե դառնա օրենքի նորմ, ապա այն
պետք է մեկնաբանել «generalis clausula» կանոնի հիման վրա, քանի որ ի տարբերություն պո-
զիտիվ տաքսացիայի դեպքի, որտեղ կոնկրետ թվարկվում են դատական վերահսկողության
ենթակա նորմատիվ իրավական ակտերը, Նախագծում նման թվարկում չի տրվում, ինչը ՀՀ
վարչական դատարանի առջև բացում է՝ իրավաստեղծ լիազորություն չունեցող պետական
մարմնի կողմից նորմատիվ բնույթի որոշումները «ultra vires» չափանիշի հիման վրա ստուգ-
ման ենթարկելու լայն հնարավորություն (այս մասին հաջորդիվ):

Երրորդ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության դատական վերահսկողու-

¹² Էլեկտրոնային աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1430/about>

¹³ Էլեկտրոնային աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1430/justification>

թյան ծավալը կախված է նրանից, թե ուղղակի դատական վերահսկողությունը ինչ ակտերի նկատմամբ է իրականացնում՝ միայն դատական («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի) իմաստով նորմատիվ իրավական ակտերի (ենթաօրենսդրական ակտերի), թե նաև՝ նորմատիվ բնույթ ունեցող այլ ակտերի, օրինակ՝ նորմատիվ բնույթի լուկալ իրավական ակտերի, նորմատիվ բնույթ ունեցող պաշտոնական պարզաբանումների, ինքնատիպ (sui generis) նորմատիվ իրավական ակտերի¹⁴, նորմատիվ պայմանագրերի:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից ուղղակի դատական վերահսկողության ընդլայնումը (հստակեցումը) հնարավոր է երկու խումբ իրավական ակտերի նկատմամբ:

Առաջին խումբն այն իրավական ակտերն են, որոնք ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից վիճելի են, թե արդյոք հանդիսանում են ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ (օրինակ՝ մարզպետի նորմատիվ բնույթի որոշումներ):

Երկրորդ խումբն այն իրավական ակտերն են, որոնք ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից չեն հանդիսանում ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ, սակայն Օրենսդիր իշխանության կամ դատական իշխանության կողմից պետք է ճանաչվեն որպես այդպիսին (օրինակ՝ նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները):

1.3. Դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի համապետքաբար

1.3.1. Մարզպետի նորմատիվ բնույթի որոշումները: Մինչև 2018 թ. սահմանադրական բարեփոխումները, մարզպետի կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու հարցը կասկածի տեղիք չէր տալիս: Նման հնարավորությունն ամրագրված էր «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, իսկ նույն օրենքի 4-րդ հոդված 2-րդ մասում մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները համարվում էին գերատեսչական ակտեր:

Մարզպետի նորմատիվ իրավական ակտերի օրինականության (իրավաչափության) նկատմամբ դատական վերահսկողությունն ամրագրված էր 2007 թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով¹⁵: Այսպես՝ նշված օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված էր դրույթ, ըստ որի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը (...) գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: Ինչպես նշվեց, մարզպետի որոշումները «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքով դիտվում էին որպես գերատեսչական ակտեր, այսինքն՝ Օրենսդիրը հստակ սահմանել էր, որ ՀՀ վարչական դատարանն իրավասու է ստուգելու մարզպետի նորմատիվ որոշումների՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին համապատասխանությունը:

ՀՀ իրավական համակարգի 2018 թ. բարեփոխումներից հետո մարզպետի նորմատիվ որոշումները ՀՀ վարչական դատավարության կարգով վիճարկելու հնարավորության հարցը միանշանակ կարգավորում չստացավ:

¹⁴ *Խանդանյան Ռ.*, Նորմատիվ բնույթի ներքին (լուկալ) իրավական ակտերը և դատական վերահսկողության հարցերը, - Եր., «Ձանգակ» հրատ., 2023, էջ 88:

¹⁵ Ուժը կորցրել է 07.01.2014 թ.:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղիղ նախատեսված չէ մարզպետի նորմատիվ որոշումների վիճարկման մասին դրույթ, սակայն դրանից ինքնին չպետք է եզրակացնել, որ դրա իրավաչափության դատական ստուգումը բացառվում է: Այս հարցը կապված է երկու առավել ընդհանուր խնդրի հետ.

Նախ՝ պետք է պարզել, թե իրավակիրառողն ինչպե՞ս է ընկալում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ ինստիտուտի էությունը, ինչպե՞ս է մեկնաբանում ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը:

Եթե ՀՀ վարչական դատարանը նախապատվություն տա ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի ոչ թե տառին, այլ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը, ապա համապատասխան դիմումի առկայության դեպքում պետք է ստուգի մարզպետի՝ նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը (նույնիսկ եթե մարզպետի որոշումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում հիշատակված չէ)¹⁶: Մինչդեռ, ինչպես նշվեց, ՀՀ վարչական դատարանում գերակայում է ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը:

Երկրորդ՝ այս դեպքում ՀՀ վարչական դատարանը կրկին պետք է որոշի, թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի որ մեկնաբանությունն է հիմք ընդունում: Եթե այն հիմք ընդունի այդ հոդվածի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, ապա պետք է մարզպետի որոշումը ստուգի միայն ձևական չափանիշի տեսանկյունից: Այս դեպքում Դատարանը պետք է կատարի երկու գործողություն:

1) Դատարանը պետք է ստուգի մարզպետի վիճարկվող որոշումն իր բովանդակությամբ փաստացի նորմատիվ, թե՛ անհատական կամ ներքին իրավական ակտ է:

2) Դատարանում եթե հաստատված համարի, որ մարզպետի որոշումն իր բովանդակությամբ իրոք նորմատիվ իրավական ակտ է, ապա, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, պետք է փաստի, որ մարզպետը, նորմատիվ բնույթի որոշում ընդունելով, դուրս է եկել իր լիազորություններից և այդ որոշումը՝ որպես *ultra vires* ակտ, պետք է ճանաչի անվավեր:

Եթե ՀՀ վարչական դատարանը հիմք ընդունի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ Օրենսդիրը ևս կարող է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, այդ թվում՝ մարզպետին լիազորել ընդունել նորմատիվ որոշումներ, ապա Դատարանը կարող է մարզպետի նորմատիվ որոշումը ստուգել ոչ միայն ձևական, այլ նաև՝ նյութական չափանիշների հիման վրա¹⁷:

Այնուամենայնիվ, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում՝ մարզպետի նորմատիվ բնույթի որոշումը՝ որպես դատական վերահսկողության օբյեկտ, նախատեսված չէ: Գործնականում մարզպետի՝ արտաքին ազդեցությամբ նորմատիվ բնույթի որոշումների դատական կարգով վիճարկելու հարցում անորոշություններից խուսափելու համար, Օրենսդիրը պետք է հիմք

¹⁶ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունից և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո փոփոխության չի ենթարկվել: Այդ հոդվածում որպես դատական վերահսկողության օբյեկտ նշված է «գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր» ձևակերպումը: «Իրավական ակտերի մասին» 2022 թ. ՀՀ օրենքով մարզպետի որոշումները գերատեսչական ակտեր էին, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նման հասկացություն չի գործածվում:

¹⁷ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության և տեքստային-նպատակային մեկնաբանության մասին տես *Ղամբարյան Ա.*, Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում // Օրինականություն, 2023, № 133, էջեր 61-101:

ընդունի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստային-նպատակային մեկնաբանությունը և ՀՀ վարչ. դատ. օր.-ում էքսպլիցիտ սահմանի, որ մարզպետի նորմատիվ իրավական ակտերը դատական վերահսկողության օբյեկտ են:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի *տեքստային-նպատակային մեկնաբանության* տեսանկյունից մարզպետը իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, եթե Օրենսդիրն նրան նման լիազորություն վերապահի: Նախ՝ մարզպետը ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին է, քանի որ ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է մարզպետի նշանակման և ազատման կարգը, նրա սահմանադրական գործառույթը: Երկրորդ՝ մարզպետը «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով լիազորված է ընդունելու որոշումներ, այդ թվում՝ նորմատիվ բնույթի:

Մարզպետի՝ օրենքով նախատեսված որոշ լիազորությունների իրականացումը ենթադրում է արտաքին ներգործություն, որի ապահովման միջոցը նորմատիվ որոշումներն են: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը գնում է հենց «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից նորմատիվ որոշումների մասին: Այսպես՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն.

«Մարզպետը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում՝ բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնածին աղբյուրների հեղանակների վերացման աշխատանքներին»:

Հարց է ծագում՝ մարզպետն այս լիազորությունն իրականացնելու նպատակով ինչ բնույթի որոշում պետք է ընդունի՝ մարզի ամեն մի աշխատունակ բնակչին հասցեագրված անհատական որոշում, թե՛ մարզի բնակչության համար (արտաքին ներգործությամբ) համապարտադիր (նորմատիվ) որոշում: Անկասկած ողջախոհությունից բխում է, որ այս լիազորությունը կարող է իրականացվել առավելապես նորմատիվ որոշում ընդունելու միջոցով: Ընդ որում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 9-րդ մասում՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից հրաժարվելու համար սահմանված է պատասխանատվություն: Այս արգելքը խախտելու դեպքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար սկզբունքային է նաև այն հարցը, թե մարզպետը մարզի աշխատունակ բնակիչներին ինչ կարգով է ներգրավել աշխատանքներին:

Մեկ այլ օրինակ: «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն.

«Մարզպետն առողջապահության բնագավառում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված կարգով կայացնում է կարանտին սահմանելու մասին որոշում»:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 4-րդ ենթակետի համաձայն.

«Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են նաև՝ (...) 4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը, 5) անհրաժեշտ կանխարգելիչ, հա-

կահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Թերևս անվիճելի է, որ մարզպետի սահմանած՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը կամ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը մարզի՝ անորոշ (չանհատականացված) թվով բնակչությանը հասցեագրված (արտաքին ներգործությամբ) վարքագծի պարտադիր կանոններ են, որոնց ամրագրման միակ համարժեք ձևը նորմատիվ որոշումն է¹⁸:

1.3.2. Տեղական հանրաքվեով ընդունված որոշումները: ՀՀ իրավական համակարգում նախատեսված է տեղական հանրաքվեի միջոցով որոշումներ կայացնելու հնարավորություն: Դա նշանակում է, որ այս կամ այն որոշումը, որը կարող է լինել նաև նորմատիվ բնույթի ընդունում է համայնքի բնակչությունը՝ անմիջական ժողովրդաիշխանության միջոցով (ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդված): Այս կապակցությամբ մեջբերենք «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի մի քանի վերաբերելի նորմեր:

1) Համայնքի բնակիչների ներկայացրած հարցը համայնքի ավագանու կողմից չընդունվելու դեպքում հարցը (որոշումը) օրենքով սահմանված կարգով կարող է դրվել տեղական հանրաքվեի («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

2) Հանրաքվե նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, համայնքի ղեկավարը նշանակում է տեղական հանրաքվե կամ մերժում է տեղական հանրաքվեի նշանակումը, եթե տեղական հանրաքվեի դրվող հարցը հակասում է օրենքին («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված):

3) Տեղական հանրաքվեի դրված հարցը կամ որոշման նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց մեկ քառորդը («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մաս):

4) Տեղական հանրաքվեով ընդունված համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ է մտնում տեղական հանրաքվեով ընդունված իրավական ակտի նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համար օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե տեղական հանրաքվեով ընդունված ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս):

5) Տեղական հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակումն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ տեղական հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին որոշումը հրապարակվելուց հետո՝ ութերորդ օրը, եթե այդ հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով դատարան հայցադիմում չի ներկայացվել («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այս նորմերի համադրությունից պարզ է դառնում, որ տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված որոշումը կարող է ձևակերպվել որպես ավագանու որոշում կամ որպես ինքնու-

¹⁸ Այս մասին տես Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Մարզպետների նորմատիվ որոշումները և դրանց նկատմամբ դատական վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2022, № 3 (107), էջեր 9-40:

րույն իրավական ակտ: Տեղական հանրաքվեի արդյունքներն ամրագրվում են ավագանու որոշման ձևով, եթե հանրաքվեն նախաձեռնվել է այն հիմքով, որ բնակիչների ներկայացրած հարցը համայնքի ավագանու կողմից չի ընդունվել («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե տեղական հանրաքվեի արդյունքները ինչպես կձևակերպվեն՝ որպես ավագանու որոշում, թե որպես համայնքի բնակիչների որոշում, միևնույն է դա համայնքի բնակիչների ուղիղ կամքի արտահայտման արդյունք է:

Տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված նորմատիվ բնույթի որոշումները արդյոք կարող են համարվել դատական վերահսկողության օբյեկտ:

Նախ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում տեղական հանրաքվեի արդյունքներում ընդունված որոշումների իրավաչափությունը ստուգելու մասին հատուկ նորմ նախատեսված չէ: Նշված հոդվածում խոսվում է ավագանու որոշումների մասին, սակայն ինչպես նշվեց, տեղական հանրաքվեի արդյունքում կարող է ընդունվել որոշում, որը ձևակերպվում է որպես ինքնուրույն որոշում: Բոլոր դեպքերում, նշված հարցը պետք է ստանա հստակ կարգավորում:

Երկրորդ՝ ՀՀ վարչական դատարանը ինչ կողմից չի նորմի հիման վրա պետք է լուծի համայնքի բնակիչների կողմից անմիջական ժողովրդաիշխանության եղանակով ընդունված որոշման և ՀՀ ազգային ժողովի՝ որպես ներկայացուցչական մարմնի կողմից ընդունված օրենքների հակասության հարցը: Առաջին հայացքից այս պարագայում հակադրության մեջ են գտնվում մի կողմից՝ լոկալ նշանակության, սակայն անմիջական ժողովրդաիշխանության արդյունքում ընդունված որոշումը, մյուս կողմից՝ համապետական նշանակության, սակայն ներկայացուցչական մարմնի ընդունված օրենքը:

Արդյոք կարելի է համայնքի բնակչության կողմից անմիջական ժողովրդաիշխանության արդյունքում ընդունված որոշումը որակել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Եթե պատասխանը լինի դրական, ապա ՀՀ վարչական դատարանը տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված որոշման և օրենքների հակասության հարցը կարող է լուծել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա:

1.3.3. Նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված կարգով տրված՝ պաշտոնական պարզաբանումները, որոնք օրենքով սահմանված կարգով հրապարակվում են: Օրենսդիրը թեև սահմանել է, որ հրապարակվելուց հետո պաշտոնական պարզաբանումը պարտադիր բնույթ չունի, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվելու պաշտոնական պարզաբանումով, իսկ պաշտոնական պարզաբանում տված իրավասու մարմինը պարտավոր է առաջնորդվել իր տված պարզաբանումով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մաս):

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատարանները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածով սահմանված պաշտոնական պարզաբանումները չեն համարում վերահսկողության օբյեկտ (տես ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/2977/05/12 գործով 14.05.2012թ. որոշում):

Կասկածից վեր է, որ պաշտոնական պարզաբանումներն ըստ էության նորմատիվ բնույթի ակտեր են, ունեն արտաքին ներգործություն և կարող են միջամտել մարդու իրավունքներին, ուստի դրանք պետք է գտնվել դատական վերահսկողության ոլորտում: Եթե Օրենսդիրն այս հարցում օրենսդրական փոփոխություններ չձեռնարկի, ապա ՀՀ սահմանադրական դատա-

րանը, ՀՀ Վճռաբեկ դատարանը ունակ են և իրավասու են իրավունքը զարգացնել՝ նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները դատական վերահսկողության օբյեկտների տիրույթ բերելու ուղղությամբ: Այս հարցում օրինակելի է ՌԴ սահմանադրական դատարանի պրակտիկան:

1.3.4. Համատեղ նորմատիվ իրավական ակտերը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում՝ որպես իրավական ակտի տեսակ, նախատեսված է համատեղ նորմատիվ իրավական ակտը: Օրենսդիրը համատեղ նորմատիվ իրավական ակտը բնորոշել է հետևյալ կերպ.

«համատեղ նորմատիվ իրավական ակտը օրենքով ուղղակի նախատեսված դեպքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող երկու կամ ավելի մարմինների համատեղ ընդունած նորմատիվ իրավական ակտ է»:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում համատեղ նորմատիվ իրավական ակտերը՝ որպես դատական վերահսկողության օբյեկտ թեև էքսպլիցիտ նախատեսված չեն, սակայն դա չի նշանակում, որ այն գործող կարգավորումների պարագայում չի համարվում դատական վերահսկողության օբյեկտ: Բանն այն է, որ համատեղ նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող անձինք, ուստի համատեղ նորմատիվ իրավական ակտերն ըստ բովանդակության դասական նորմատիվ իրավական ակտեր են, իսկ ըստ ձևի՝ պարզապես երկու իրավասու սուբյեկտների ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է:

ՀՀ վարչական դատարանն առկա օրենսդրական պայմաններում ունի բավարար հիմքեր ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխով սահմանված կարգով ստուգելու համատեղ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Համատեղ նորմատիվ իրավական ակտը ձևական առումով իրավաչափ է, եթե՝

1) այն ընդունվել է իրավասու մարմինների կողմից, այսինքն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող մարմինների կողմից.

2) Օրենքով ուղղակիորեն նախատեսված է, որ իրավասու մարմինները կոնկրետ հարցով կարող են ընդունել համատեղ նորմատիվ իրավական մարմին:

Այս հարցում հետաքրքիր է ՀՀ առողջապահության նախարարի և Սյունիքի մարզպետի՝ մեկ փաստաթղթով ընդունված ակտը: Այսպես՝ ՀՀ առողջապահության նախարարը 22.09.2022 թ. № 59-Ն հրամանով, իսկ Սյունիքի մարզպետը՝ 04.10.2022 թ. № 391-Ն որոշմամբ հաստատել են մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները¹⁹:

ՀՀ առողջապահության նախարարը և Սյունիքի մարզպետը վերոնշյալ մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատել են մեկ միասնական փաստաթղթով, սակայն այդ ակտն էքսպլիցիտ չեն որակվել որպես համատեղ հրաման: Ավելին՝ ՀՀ առողջապահության նախարարն այդ կանոնները հաստատել է հրամանով, իսկ մարզպետը՝ որոշմամբ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ տվյալ դեպքում

¹⁹ Էլեկտրոնային աղբյուր՝ <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

նրանք փաստացի ընդունել են համատեղ հրաման, սակայն, այդ ակտի անվանումը համատեղ հրաման չդնելով, ամենայն հավանականությամբ փորձել են շրջանցել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումները:

1.3.5. Արտաքին ազդեցությամբ պաշտոնի անձնագրերը: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է: Նշված օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը (...): Օրնակ՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 1379-Լ հրամանով հաստատվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության գլխավոր իրավաբան պաշտոնի անձնագիրը: Լոկալ ակտով հաստատված պաշտոնի անձնագրի 3-րդ բաժինում սահմանված են այդ պաշտոնին ներկայացվող պահանջները, օրինակ՝ Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժի կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժի առկայություն: Պաշտոնի անձնագրերում երբեմն սահմանվում է նաև բարձրագույն կրթություն ունենալու պահանջ:

Գործնականում թեև պաշտոնի անձնագրերն հաստատվում են լոկալ իրավական ակտերով, սակայն այդ անձնագրերը պարունակում է նաև դրույթներ, որոնք ունեն արտաքին ազդեցություն (օրինակ՝ թեկնածուներին ներկայացվող պահանջները), ուստի այդ կանոնների մասով, դրանք պետք է համարվեն նորմատիվ բնույթի ակտերը և ենթակա լինեն դատական ստուգման:

1.3.6. Նորմատիվ բնույթի պայմանագրերը

1.3.6.1. Հաստատման ենթակա միջազգային պայմանագրերը: Իրավական նորմեր կարող են ամրագրվել ոչ միայն դասական («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի) իմաստով նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև նորմատիվ պայմանագրերում: Իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ նորմատիվ պայմանագրերը իրավունքի պաշտոնական աղբյուրներ են, այսինքն՝ նման փաստաթղթերում ամրագրվում են իրավական նորմեր²⁰: Նորմատիվ պայմանագրի օրինակ է՝ միջազգային պայմանագիրը, իրավասության փոխանցման վերաբերյալ պետական իշխանության դաշնային մարմինների և դաշնային սուբյեկտների իշխանության իրավասու մարմինների միջև կնքված պայմանագիրը, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կնքված պայմանագրերը և այլն:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից միջազգային պայմանագրերը որպես դատական վերահսկողության օբյեկտ ճանաչելու հարցը քննարկելիս, նախ պետք է տարբե-

²⁰ Гамбарян А., Даллакян Л., Нормативный договор в системе источников права // Դատական իշխանություն, 2009, № 7/120, էջեր 21-26:

րակել *վավերացված* և *հաստատված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասությունը լուծելու ռեժիմները: Նախապես նշենք, որ ՀՀ վարչական դատավարության կարգով ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ կարող են համարվել միայն հաստատված միջազգային պայմանագրերը:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը, որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Միջազգային պայմանագրերը ՀՀ կառավարության առաջարկությամբ *վավերացնում է* Ազգային ժողովը (ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ Սահմանադրությունը կարգավորում է միայն *վավերացված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասության դեպքում միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերի նախապատվության հարցը, իսկ *հաստատված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասության լուծման վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ կոլիզիոն նորմ նախատեսված չէ, ինչը կարելի է բացատրել սահմանադրաիրավական այնպիսին կարգավորմամբ, որն առաջին հայացքից բացառում է հաստատված միջազգային պայմանագրի և օրենքի միջև հակասության առկայությունը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենքին հակասող նորմեր պարունակող միջազգային պայմանագրերը ենթակա են ոչ թե հաստատման, այլ վավերացման: Այս կապակցությամբ Ա. Ղամբարյանը նշում է երկու նկատառում.

Առաջին՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ միջազգային պայմանագիրը Հանրապետության նախագահի հաստատմանը ներկայացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը եզրակացություն է ներկայացնում միջազգային պայմանագրում օրենքին հակասող նորմերի առկայության մասին: Այն միջազգային պայմանագրերը, որոնք պարունակում են ՀՀ օրենքին հակասող նորմեր, պարտադիր ենթակա են վավերացման:

Երկրորդ՝ օրենքին հակասող նորմեր պարունակող միջազգային պայմանագրերը վավերացնելուց հետո գործում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված 3-րդ մասում ամրագրված կոլիզիոն նորմը, այսինքն՝ պետք է նախապատվություն տալ վավերացված միջազգային պայմանագրին²¹:

Այնուամենայնիվ, հնարավոր է իրավիճակ, որ միջազգային պայմանագիրը հաստատելու պահին այն չի հակասել ՀՀ օրենքին, սակայն հետագայում ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, որի հետևանքով հաստատված միջազգային պայմանագրի և օրենքի միջև ծագել է հակասություն: Ռուսական աղբյուրներում առաջարկվում է նման պայմանագրերը ճանաչել ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ²²:

Միջազգային պայմանագրերը հաստատվում են ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ իմաստով գործադիր իշխանության մարմինների ակտերով, ուստի այս առումով նման տեսակի պայմանագրերը նման են ենթաօրենսդրական ակտերին: Եթե դրկտրինում և գործնականում ճանաչում ստանա այն մոտեցումը, որ հաստատված միջազգային պայմանագրերի համեմատությամբ ՀՀ օրենքներն ունեն բարձր իրավաբանական ուժ, ապա այս դեպքում հաստատված միջազգային պայմանագրերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողություն սահմանելը կունենա օբյեկտիվ հիմնավորում:

²¹ Պետության և իրավունքի տեսություն, Ոսումնական ձեռնարկ, Հեղ. Խումբ, գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4-րդ լրամշակված հրատ, Եր., 2023, էջ 404:

²² Качанов Р.Е., Судебный нормоконтроль в системе механизмов «стратегического правосудия» // Административное и муниципальное право, 2008, № 9, с. 46-50.

1.3.6.2. *Համայնքային պայմանագրերը:* «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ իր որոշմամբ վավերացնում է համայնքի կողմից ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ կնքված պայմանագրերը (համայնքային պայմանագրեր՝ հեղ.):

ՀՀ օրենքներին հակասող համայնքային պայմանագրերի նկատմամբ պետք է սահմանել ուղղակի դատական վերահսկողություն: Այս հարցը հատկապես կարևորվում է, եթե նման պայմանագրերով շոշափվեն մարդու (իրավաբանական անձանց) իրավունքները կամ պետության շահերը:

Եզրակացություններ

Ելնելով տարբեր իրավական համակարգերում նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության դիտարկված դեպքերից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

Առաջինը, դատարանների գործունեությունը առանցքային դեր է խաղում ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների որոշման գործում: Պատմական օրինակները, սկսած *Marbury V. Madison*-ի գործով ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումից, վերջացրած ՀՀ Սահմանադրական դատարանի պրակտիկայով, հաստատում են, որ դատարանները հաճախ ակտիվորեն միջամտում են ընդլայնելու նորմատիվ ակտերի նկատմամբ իրենց վերահսկողության շրջանակը: Երկրորդ, դատարանների միջամտությունը կարող է տեղի ունենալ, չնայած հիմնադիր ակտերում այդպիսի լիազորությունների հստակ համախմբման բացակայությանը: Օրինակ՝ ԵՄ դատարանը և ՀՀ Սահմանադրական դատարանը ճանաչել են միջազգային պայմանագրերի նկատմամբ վերահսկողության հնարավորությունը՝ չնայած հիմնադիր փաստաթղթերում ուղղակի նշման բացակայությանը:

Այսպիսով, դատարանների ակտիվությունը կարևոր գործոն է սահմանադրական ռեժիմի և քաղաքական մշակույթի զարգացման և ամրապնդման գործում:

Անդրադարձել է կատարվել ՀՀ վարչ. դատ. օր.-191-րդ հոդվածով սահմանված դատական վերահսկողության օբյեկտը որոշելու հարցում իմպլիցիտ կերպով «**generalis clausula**» կանոնի կիրառմանը: Հիմնավորվում է, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների. Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղղակիորեն (էքսպլիցիտ) չի նշել, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ բոլոր գործերը, սակայն պատմաիրավական տեսանկյունից հարցը դիտարկելիս, պարզ է դառնում, որ Օրենսդիրը փաստացի հիմք է ընդունել «*generalis clausula*» կանոնը, ըստ որի՝ **հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի ցանկացած ակտը կարող է համարվել դատական վերահսկողության օբյեկտ:**

Նույն հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է, որ չեն հիշատակվում այն մարմինների ակտերը, որոնք օրենքով չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն և ստացվում է, որ ստուգման կարող են ենթարկվել պետական այն մարմինների ակտերը, որոնք ունեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու լիազորություն, իսկ այն պետական մարմինները, որոնք առհասարակ չունեն են-

թաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, փաստացի դուրս են մնում դատական նորմավերահսկողությունից:

Մեր կարծիքով նման մոտեցումը հակասում է նորմատիվ իրավական ակտերի իրավա-
 չափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը, ինչպես նաև
 սահմանափակ շրջանակ նախատեսելը չի համապատասխանում Սահմանադրության կար-
 գավորումներին:

Այսպիսով, հաշվի առնելով կատարված վերլուծությունները՝ եզրահանգում ենք, որ **«Հ
 վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի հիմքում իմպլիցիտ դրված է «generalis clausula» ընդ-
 հանուր կանոնը**, որը զուգակցված է պոզիտիվ տաքսացիայի մեթոդով և որի համաձայն դա-
 տական վերահսկողության ենթակա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ
 բնույթի բոլոր ակտերը, իսկ դրական տաքսացիայի մեթոդով ընդհանուր կանոնը կոնկրե-
 տացված է վերահսկողության ենթակա օբյեկտների որոշակի ցանկով:

Բացի վերոգրյալից՝ կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյուն-
 քում աշխատանքում ներկայացվել են հետևյալ եզրակացությունները.

- Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, որոնք ունեն արտաքին
 գործողություն և հաստատված են օրենքին համապատասխան, ենթակա են դատական վե-
 րահսկողության՝ օրենսդրությանը հակասելու դեպքում: Այս վերահսկողությունը կարևոր է
 ապահովելու համար, որ պետական մարմինները համապատասխանեն օրենքներին և պաշտ-
 պանեն քաղաքացիների իրավունքներն ու շահերը:

- Միջազգային պայմանագրեր - դրանց համապատասխանությունը Հայաստանի Հան-
 րապետության օրենսդրությանը պետք է ապահովվի ինչպես վավերացումից առաջ, այնպես
 էլ հետո: Եթե օրենսդրության փոփոխությունները հակասություններ են ստեղծում վավերաց-
 ված միջազգային պայմանագրի հետ, ապա նախապատվությունը պետք է տրվի վերջինիս:

- Համայնքային պայմանագրերը նույնպես ենթակա են դատական վերահսկողության,
 հատկապես ՀՀ օրենքներին հակասելու դեպքում: Այս վերահսկողությունն անհրաժեշտ է
 օրինականության ապահովման և բոլոր կողմերի շահերի պաշտպանության համար, ներա-
 ղյալ մարդու իրավունքները և պետության շահերը:

Այսպիսով, տարբեր իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը
 առանցքային դեր է խաղում Հայաստանի Հանրապետությունում օրինականության ապահով-
 ման և իրավական կարգի պահպանման գործում:

Ամփոփագիր: Սույն հոդվածում ձեռնարկվում է Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավոր-
 ման մեխանիզմների խորը վերլուծություն՝ կենտրոնացած տարբեր տեսակի իրավական ակտերի, այդ թվում՝ հա-
 մայնքային պայմանագրերի, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի և միջազգային համա-
 ձայնագրերի վրա: Հեղինակը մանրամասն քննարկում է նշված փաստաթղթերի հաստատման և վավերացման
 ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը ազգային օրենսդրությանը, ինչպես նաև ազդեցությունը
 դատական պրակտիկայի և դատական վերահսկողության մեխանիզմների վրա:

Հատուկ ուշադրության է արժանանում իրավական կարգավորման ասպեկտներին տեղական ինքնակառա-
 վարման համատեքստում, ինչպես նաև քաղաքացիների, կազմակերպությունների և պետության իրավունքների և
 շահերի պաշտպանությանը: Հոդվածի նպատակն է բացահայտել հայկական իրավական տարածքում նորմատիվ
 կարգավորման և դատական վերահսկողության առանցքային նրբությունները, ինչպես նաև քննարկել երկրում
 իրավական համակարգի զարգացման մարտահրավերներն ու հեռանկարները: Հեղինակը կիրառում է վերլուծա-
 կան մոտեցում՝ հենվելով արդիական օրենսդրության և արդիական դատական որոշումների վրա՝ նպատակ ունե-

նախով ընթերցողին ներկայացնել քննարկվող հարցերի համակողմանի և խորը ըմբռնումը, ինչպես նաև ընդգծել իրավական ակտերի նշանակությունը հայ ժամանակակից իրավական պրակտիկայում:

Annotation. This article provides a comprehensive analysis of the mechanisms of normative regulation in the Republic of Armenia, focusing on various types of legal acts, including municipal agreements, job position descriptions in the civil service, and international agreements. The authors delve into the procedures for approval and ratification of these documents, their compliance with national legislation, as well as their impact on judicial practice and mechanisms of judicial control.

Special attention is paid to aspects of legal regulation in the context of local self-government, as well as the protection of rights and interests of citizens, organizations, and the state. The aim of the article is to identify key nuances of normative regulation and judicial control in the Armenian legal space, as well as to discuss challenges and prospects for the development of the legal system in the country. Employing an analytical approach and drawing on current legislation and relevant judicial decisions, the authors seek to provide readers with a comprehensive and in-depth understanding of the issues under consideration, while emphasizing the significance of legal acts in contemporary Armenian legal practice.

Аннотация. В данной статье мы предприняли попытку провести глубокий анализ механизмов нормативного регулирования в Республике Армения, сфокусированный на различных видах правовых актов, включая муниципальные договоры, паспорта должностей гражданской службы и международные соглашения. Авторы подробно рассматривают процедуры утверждения и ратификации указанных документов, их соответствие национальному законодательству, а также влияние на судебную практику и механизмы судебного контроля.

Особое внимание уделяется аспектам правового регулирования в контексте местного самоуправления, а также защите прав и интересов граждан, организаций и государства. Цель статьи – выявить ключевые нюансы нормативного регулирования и судебного контроля в армянском правовом пространстве, а также обсудить вызовы и перспективы развития правовой системы в стране. Авторы применяют аналитический подход, опираясь на актуальное законодательство и актуальные судебные решения, с целью представить читателям всестороннее и глубокое понимание рассматриваемых вопросов, а также подчеркнуть значение правовых актов в современной армянской правовой практике.

Բանալի բառեր - Նորմատիվ կարգավորումը, դատական վերահսկողությունը, համայնքային պայմանագրերը, միջազգային պայմանագրերը, պաշտոնի անձնագրերը, օրինականությունը, իրավական պաշտպանությունը, պարտավորությունների կատարումը, քաղաքացիական ծառայությունը, պետության շահերը:

Keywords: Regulation, judicial review, municipal agreements, international treaties, position descriptions, legality, legal protection, obligation enforcement, civil service, state interests.

Ключевые слова: нормативное регулирование, судебный контроль, муниципальные договоры, международные договоры, паспорта должностей, законность, правовая защита, исполнение обязательств, гражданская служба, интересы государства.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խանդանյան Ռ., Դատական վերահսկողությունը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ (պատմաիրավական էվոլյուցիան), Եր., ՀՌՀ հրատ., 2022:

2. Խանդանյան Ռ., Նորմատիվ բնույթի ներքին (լոկալ) իրավական ակտերը և դատական վերահսկողության հարցերը, - Եր., «Չանգակ» հրատ., 2023, էջ 88:

3. Հայրապետյան Ա. Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն), գիտ. խմբ. Ա. Սարգսյան, Եր., Հեղինակային հրատ., 2011, էջ 553:

4. Ղամբարյան Ա., Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնակա-նացումը ՀՀ-ում // Օրինականություն, 2023, № 133, էջեր 61-101:
5. Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Մարզպետների նորմատիվ որոշումները և դրանց նկատմամբ դատա-կան վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում // ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2022, № 3 (107), էջեր 9-40:
6. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատ., -Եր., 2023, էջ 404:
7. Сафонов В. Н., Конституционное правотворчество в деятельности Верховного суда США. Историко-правовое исследование: монография. М., Проспект, 2023, с. 24-25, 71.
8. Брэбан Г. Французское административное право. Пер. с фр. М.: Прогресс, 1988, с. 363.
9. Хартли Т.К., Основы права Европейского сообщества: Пер. с англ. - М.: Закон и право, ЮНИТИ, 1998. С. 90-91.
10. Берени Ш., Самел Л., Барацка Р., Иванчич И., Венгерское административное право / Пер. с венг. М.: Прогресс, 1990. С.461-462; Зеленцов А.Б., Административная юстиция: учебно-методическое пособие. М.: Изд. РУДН, 2009.
11. Зеленцов А.Б., Ястребов О.А., Судебное административное право: учебник. М.: Статут, 2017, с. 234-241.
12. Галлиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н., Административное право: история развития и основные современные концепции. М., Юристъ, 2002:
13. Гамбарян А., Даллакян Л., Нормативный договор в системе источников права // Դատական իշխանու-թյուն, 2009, № 7/120, էջեր 21-26:
14. Качанов Р.Е., Судебный нормоконтроль в системе механизмов «стратегического правосудия» // Административное и муниципальное право. 2008. № 9, с. 46-50.

Էլեկտրոնային աղբյուրներ

1. <https://www.e-draft.am/projects/1430/about>
2. <https://www.e-draft.am/projects/1430/justification>
3. <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

Խանդանյան Ռ. - Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայ-Ռուսական համալսարանի դոկտորանտ, էլիասցե՝ rkhandanyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 27.05.2024 թ., տրվել է գրախոսության 27.05.2024 թ., երաշխավորվել է ի.գ.թ., Հայ-ռուսական համալսարանի դասախոս, Վարչական դատարանի դատավոր Կ. Զարիկյանի կողմից, ըն-դունվել է տպագրության 16.07.2024 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-30>

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Իրավագիտության մագիստրոս,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան*

MARIAM MANUKYAN

*Master of Law,
Member of the RA Chamber of Advocates, Advocate*

МАРИАМ МАНУКЯН

*Магистр права,
Член палаты адвокатов РА, адвокат*

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼԻՍ ՄԱՍ 2.**

**«ՍՏՈՐԱԴԱՍ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԹԵՐԻ ԿԱՍ ՍԽԱԼ
ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ԿԱՍ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»**

**JURISDICTION OF THE RA CIVIL COURT OF APPEAL IN THE
EXERCISE OF ITS POWERS PART 2. “CHARACTERISTICS AND
CRITERIA OF ASSESSMENT OF JUDICIAL ACTS OF THE LOWER COURT
AS DEFECTIVE OR WRONGLY REASONED OR BASED”**

**ЮРИСДИКЦИЯ ГРАЖДАНСКОГО АПЕЛЛЯЦИОННОГО СУДА РА
ПРИ ОСУЩЕСТВЛЕНИИ СВОИХ ПОЛНОМОЧИЙ: ЧАСТЬ 2.
«КРИТЕРИИ И ОСОБЕННОСТИ ОЦЕНКИ НЕВЕРНОЙ,
ИЛИ НЕДОСТАТОЧНОЙ, АРГУМЕНТИРОВАННОСТИ ИЛИ
ОБОСНОВАННОСТИ СУДЕБНОГО АКТА НИЖЕСТОЯЩЕЙ СУДЕБНОЙ
ИНСТАНЦИИ»**

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված եռաստիճան դատական

համակարգի առկայության պայմաններում դժվար է թերագնահատել վերաքննության ինստիտուտի և վերաքննիչ դատարանի տեղն ու դերն այդ համակարգում: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ որպես ՀՀ դատական համակարգի երկրորդ ատյանի, կարևորագույն խնդիրն է՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ինչպես նաև վերջինիս կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը:

Սույն գիտական աշխատությամբ փորձ է արվում բացահայտել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները և առաջարկել նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրքանչյուր գործով:

Ինչպես նաև այդ համատեքստում ներկայացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում և պատասխանել հետևյալ հարցին՝ արդյո՞ք վերաքննիչ դատարանը օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

Հիմնական հետազոտություն

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանվում են վերաքննիչ դատարանի կոնկրետ լիազորություններ¹:

Մասնավորապես, վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանը 1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ վճիռը թողնելով անփոփոխ, կամ 2) այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած վճիռը թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված, վերաքննիչ դատարանը հիմնավորում կամ պատճառաբանում է անփոփոխ թողնված վճիռը:

Այսինքն, վերը նշված իրավանորմի շրջանակում ամրագրված են **վերաքննիչ դատարանի երկու ինքնուրույն, սակայն փոխկապակցված լիազորություններ**, այն է՝

- վերաքննիչ բողոքն անհիմն լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը,
- գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից այն լրացուցիչ պատճառաբանելու կամ հիմնավորելու լիազորությունը:

Պետք է նշել, որ վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորության կիրառման արդյունքում վերաքննիչ դատարանի մոտ առաջանում է իր **որոշումը հիմնավորելու պարտականություն**: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքների համաձայն՝ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը կիրառելիս վերադաս դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել այն հիմնավորումները և շարժառիթները, որոնց հիման վրա բողոքի փաստարկները ճանաչվում են չհիմնավորված և դատական ակտի բեկանման համար հիմք չհանդիսացող²:

¹ ՀՕ-110-Ն, Ընդունման ամսաթիվը՝ 09.02.2018 թ., Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 09.04.2018 թ., ինկորպորացիա՝ Աժ, 23.12.2022:

² Տե՛ս օրինակ Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335; Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրացուցիչ պատճառաբանելու կամ հիմնավորելու լիազորությունը. անդրադառնալով հիշյալ լիազորության բնույթին՝ պետք է նշել, որ այն Վերաքննիչ դատարանի պարտադիր (ոչ հայեցողական) լիազորություն է: ՔԴՕ-ով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է պատճառաբանել/հիմնավորել ընդհանուր իրավասության դատարանի թերի կամ սխալ պատճառաբանված/հիմնավորված վճիռը: Այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող ճիշտ դատական ակտ, սակայն այն թերի կամ սխալ է պատճառաբանված կամ հիմնավորված, վերաքննիչ դատարանը **պարտավոր է** առաջին ատյանի դատարանի դատական ակտի պատճառաբանությունները/հիմնավորումները լրացնել նոր պատճառաբանություններով/հիմնավորումներով (եթե այդ ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված կամ հիմնավորված) կամ ճիշտ պատճառաբանություններով (եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված)³: Վերոգրյալին համապատասխան՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի գ. կետով սահմանվում է միայն վճռի պատճառաբանական մասի դեմ ներկայացվող բողոքների համար նախատեսված պետական տուրքը՝ դրան համապատասխան նախատեսելով Վերաքննիչ դատարանի հետևյալ լիազորություն՝ «բավարարում է վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին»:

Վերոնշյալ վերլուծության արդյունքում ևս մեկ իրավական հարց է առաջանում՝ **ինչպե՞ս է գնահատվում ստորադաս դատարանի դատական ակտի պատճառաբանվածության/հիմնավորվածության «մակարդակը», ինչպե՞ս է գնահատվում դատական ակտի «պատճառաբանված», «չպատճառաբանված», «թերի/ոչ պատշաճ պատճառաբանված» կամ «սխալ պատճառաբանված», «հիմնավորված», «չհիմնավորված», «թերի/ոչ պատշաճ հիմնավորված» կամ «սխալ հիմնավորված» լինելը:**

Վերոնշյալի համատեքստում հարկ է նախ հասկանալ՝ ի՞նչ է նշանակում դատական ակտի պատճառաբանում և դատական ակտի հիմնավորում:

Այսպես՝ ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է՝

2. Դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պարճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 8-րդ հոդվածի՝

1. Դատական ակտը հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական և իրավական հիմքերը:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 9-րդ հոդվածի՝

1. Դատական ակտը պարճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, ապա դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները

³ Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Եր., 2012, թիվ 10 (159), էջ 36:

կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ է չէ ԿԿՊ-ի դատական ակտի կայացման համար:

3. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով:

4. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերացական դատողություններով: Դատարանը չի կարող փաստել, որ գործին մասնակցող որևէ անձ չի կատարել որևէ փաստական հանգամանք ապացուցելու պարտականությունը՝ առանց ցույց տալու, թե ԿԿՊ-ի փաստական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված համարվել գործում առկա ապացույցներով:

5. Այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, ապա դատական ակտում պետք է պատճառաբանվի, **թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:**

Համաձայն ՀՀ ՔԴՕ 66-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝

1. Դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

2. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

3. Դատարանը հետազոտված ապացույցը ճանաչում է անարժանահավատ, եթե դրա հետազոտման, գնահատման կամ այլ ապացույցների հետ համադրման արդյունքով հաստատվում է, որ դրանում պարունակվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանները գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատեն գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների **չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը** դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ **դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ**՝ կողմերի լաված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի

6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է, արդյոք, դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո⁴:

Դատական ակտի պատճառաբանվածությունը ՄԻԵԴ-ը դիտարկել է որպես արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքի պահանջ: Այս պարտականությունը ներառում է առնվազն հստակ անդրադարձ այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ գործի համար⁵: Ավելին, այն գործերը, որոնք կարող են առնչվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել նաև այն հարցը, թե որքանով են դատական ակտերում բերված պատճառաբանությունները եղել բովանդակալից, այլ ոչ՝ ձևական բնույթի (տես, *mutatis mutandis*, Պարադիսոն և Կամպանելլին ընդդեմ Իտալիայի գործով (*Paradiso and Campanelli v. Italy*) [ՄԴ], թիվ 25358/12, «210, 2017 թվականի հունվարի 24»)՝ դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի պահպանված լինելու նկատմամբ իրականացնելով բովանդակային վերահսկողություն:

Դատական ակտի պատճառաբանված լինելու կանոնը պահանջում է, որ դատական ակտը պետք է պարունակի լիարժեք տեղեկատվություն այն ապացույցների մասին, որոնք գնահատվել են, այն փաստերի մասին, որոնք հաստատվել են, ինչպես նաև այն իրավական նորմերի և միաժամանակ դրանց կիրառելի լինելու վերաբերյալ եզրահանգումների մասին, որոնք կիրառվել են: Հաջորդիվ դատական ակտը պետք է արտացոլի դատարանի կողմից իրականացված այս երեք գործընթացների վերաբերյալ դատողությունների ընթացքը և այդ դատողություններից բխող եզրահանգումները:

Վերոշարադրյալ իրավանորմերից և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության⁶:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանել, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներով մեկնաբանել և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման շրջանակներում դիրքորոշում է հայտնել դատական ակտի պատճառաբանվածության և հիմնավորվածության «գնահատման չափանիշների» վերաբերյալ:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորության երկրորդ բաղադրատարրի, այն է՝ «այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած վճիռը թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված, վերաքննիչ դատարանը հիմնավորում կամ պատճառաբանում է անփոփոխ թողնված վճիռը» վերաբերյալ դիրքորոշումների մեջ օգտագործել է «լրացուցիչ» տերմինը, ինչի հետ համաձայն ենք: Այսինքն, վերաքննիչ դատարանն

⁴ Տե՛ս, օրինակ, Սալոմե ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզը ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ:

⁵ Տե՛ս Ռուիզ Տորիան ընդդեմ Իսպանիայի գործը (*Ruiz Torija v. Spain*), 1994 թվականի դեկտեմբերի 9, «29-30, Շարք A թիվ 303-A), Հիգգինսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի գործը (*Higgins and Others v. France*), 1998 թվականի փետրվարի 19, «42-43, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1998-I):

⁶ Տե՛ս ԲԴԽ-69-Ո-Կ-17 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ներսիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը:

ունի ստորադաս դատարանի դատական ակտը բացառապես լրացուցիչ պատճառաբանելու/ հիմնավորելու կամ սխալ պատճառաբանություններն ու հիմնավորումները ճշտելու լիազորություն և ոչ թե դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանել/հիմնավորելու պարտականություն: Այսպես,

Համաձայն ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածի 3-րդ մասի՝

3. Անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի՝

2. Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

9) դատական ակտը չունի պատճառաբանական մաս.

Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը չի կարող պատճառաբանել ամբողջությամբ, քանի որ եթե ստորադաս դատարանի դատական ակտում բացակայում է պատճառաբանական մասը, ապա տվյալ վճիռը ենթակա է բեկանման և ոչ թե պատճառաբանման/հիմնավորման: Նորից ենք արձանագրում, որ ստորադաս դատարանի վճիռն, ըստ էության, ճիշտ եզրափակիչ մաս ունենալու դեպքում վերաքննիչ դատարանի կողմից պատճառաբանվում կամ հիմնավորվում է, եթե այն սխալ կամ թերի է պատճառաբանված/հիմնավորված, ոչ թե ընդհանրապես հիմնավորված/պատճառաբանված չէ:

Շատ հետաքրքրական է օրենսդրի օգտագործած ձևակերպումն այս մասով, այն է՝ «**դատական ակտը չունի պատճառաբանական մաս**»: **Կրկին հարց է առաջանում՝ նշված ձևակերպումը նշանակում է, որ դատական ակտը բացարձակապես չունի պատճառաբանական մաս, թե առկա է պատճառաբանական մաս, բայց այնքան չի համապատասխանում ՀՀ օրենսդրության դրույթներին, որ «գնահատվում է» բացակայող:**

Կարծում ենք՝ պետք է լայն մեկնաբանել և պատճառաբանական մասի բացակայություն դիտարկել նաև այն դեպքը, երբ դատական ակտը «գրեթե պատճառաբանված» չէ:

Գնահատման առակա է նաև «գրեթե չպատճառաբանված» դատական ակտ որակումը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պրակտիկան բազմազան է և հնարավոր չէ հստակ և որոշակի չափանիշներ ձևավորել վերոգրյալ մասով, կարծում ենք՝ «գրեթե չպատճառաբանված» են համարվում այն դատական ակտերը, որոնցից պարզ չէ դատարանի եզրահանգումների ընթացքը, այսինքն՝ ինչու է դատարանի եկել այս կամ այն եզրահանգման, համադրված չեն ապացույցներն ու գործով քննարկման ենթարկված փաստերը, ինչպես նաև փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի վերաբերյալ վերլուծությունն է թերի կամ բացարձակ բացակայում է, լիարժեք տեղեկատվություն չեն պարունակում այն ապացույցների մասին, որոնք գնահատվել են, այն փաստերի մասին, որոնք հաստատվել են:

Այսինքն, ընդհանրական առումով, կարծում ենք, որ դատական ակտը «գրեթե չպատճառաբանված» է, երբ անաչառ դիտորդի (դատական ակտին ծանոթացողի) մոտ չի ձևավորվում դատական ակտով դատարանի կողմից կատարված վերլուծության, դիրքորոշման և եզրահանգման ընթացքի վերաբերյալ որոշակիություն:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը դատական ակտի պատճառաբանական մասի վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ⁷:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության իրավուն-

⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2010 թվականի հունիսի 15-ի թիվ ՍԴՈ-896, 1 փետրվարի 2022 թ. թիվ ՍԴՈ- 1628 որոշումները:

քի բաղադրիչ հանդիսացող դատական ակտի պատճառաբանվածության պահանջի մասին նախկինում արտահայտված դիրքորոշումները, գտել է, որ *Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սույն բաղադրիչը դատական քննության որակի առաջնային չափանիշ է, իսկ դատական ակտի պատճառաբանության բացակայությունը կասկածի տակ է առնում դատարանի կողմից տվյալ դատական ակտի կայացմամբ արդարադատության նպատակին համահունչ գործունեությունը:*

Կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության գնահատման առաջնային չափանիշը, անկախ դատական ակտի նկատմամբ ձևավորված հանրային կարծիքից կամ կողմերի կամ հասարակության կամ դրա մի մասի վերաբերմունքից, տվյալ գործով փաստերի և իրավունքի հարցերի վերաբերյալ **դատական ակտի հիմքում ընկած ողջամիտ և համոզիչ պատճառաբանությունն է:** Ավելին, դատավարական կողմերի մրցակցող և հակասող շահերի բախման պայմաններում ընթացող դատական վճեքում դատական ակտի պատճառաբանության բացակայությունը նման պատճառաբանության առկայության իրավական պահանջի պայմաններում կարող է սասանել կողմերի և հանրության վստահությունն առ այն, որ բացակայում են տվյալ դատական ակտը կանխորոշող այլ՝ արդարադատության նպատակների հետ չառնչվող պատճառներ:

Քաջի դրանից՝ դատական ակտի պատճառաբանվածությունը կողմի համար այն արդյունավետորեն բողոքարկելու և նման բողոքարկման հաջողության գնահատականի հիմք է:

Միաժամանակ, դատական ակտի պատճառաբանվածության պահանջն ուղղված է դատարանների կողմից նույնանման գործերով ձևավորվող պրակտիկայի հստակ ուղենիշների ամրագրմանը, որի նպատակն է ապահովել իրավունքի մեկնաբանության և կիրառության կանխատեսելիությունը, բացառել կամայական որոշումների հավանականությունը՝ դատական ակտերի հիմքում ընկած պատճառաբանությունների հրապարակայնության պայմաններում բարձրացնելով դատարանների հաշվետվողականությունը:

Ի վերջո, վերը նշված բոլոր նկատառումներով հանդերձ, և քաջի անհատի արդար դատաքննության սահմանադրական իրավունքից և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Կոնվենցիայի 6-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 2200 A (XXI) բանաձևով հաստատված միջազգային դաշնագրի 14-րդ հոդված) ստանձնած պարտավորության մաս լինելուց, **դատական ակտի պատճառաբանվածությունը նաև դատավորի մասնագիտական վարքագծին առաջադրվող և միջազգայնորեն ճանաչված սկզբունք է⁸:**

Պետք է փաստել նաև, որ սույն հարցին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ այդպիսով ևս մեկ անգամ հաստատելով դատական ակտի պատճառաբանված լինելու կարևորությունն ու անհրաժեշտությունը⁹: Մասնավորապես՝ նշելով՝ «(...) *Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և մինչույն ժամանակ հնարավորություն է սրբեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:*

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմա-

⁸ Տե՛ս ԵԴԽԵ Պատավորների մագնա կարտա (Հիմնարար սկզբունքներ), 17/11/2010 թ., կետ 16:

⁹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ-3/0045/01/13 քրեական գործով 28.03.2014 թվականին կայացված որոշման 12-րդ կետը:

նափակում է վերադաս դատական արյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ «Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման»:

Վերահաստատելով *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը մի շարք այլ որոշումներով ևս անդրադարձել է քննարկվող հարցին¹⁰:

Եզրակացություն

Վերոգրյալի համատեքստում հետևություն ենք անում, որ պրակտիկայում բավականին բարդ է դառնում «գնահատելը» դատական ակտի պատճառաբանված/հիմնավորված լինել/չլինելու կամ թերի/անթերի պատճառաբանված/հիմնավորված լինելու հանգամանքները: Եթե գործը փոքր-ինչ հեշտանում է դատական ակտի սխալ պատճառաբանված/հիմնավորված լինելու դեպքում (չնայած, այս դեպքում ևս իրավական գնահատումն էական և առանցքային նշանակություն ունի և դրանով իսկ՝ իր ուրույն բարդությունը), ապա վերոնշյալ դեպքերում բավականին խնդրահարույց է դառնում «գնահատումը»:

Ուստի, յուրաքանչյուր գործով դատարանը պետք է հստակ գնահատի՝ արդյոք ստորադաս դատարանի դատական ակտը պատշաճ կարգով պատճառաբանված և հիմնավորված է, թե՛ ոչ, իսկ անհրաժեշտության դեպքում, հիմնավորի և/կամ պատճառաբանի ստորադաս դատարանի դատական ակտը: Այս համատեքստում էականորեն բարձրանում է Վերաքննիչ դատարանի պրոֆեսիոնալ լինելու անհրաժեշտությունը: Ընդ որում՝ նման գնահատման հիման վրա Վերաքննիչ դատարանը պետք է ընտրի իր լիազորություններից կոնկրետ կիրառելին, ինչպես նաև դատական ակտում հիմնավորի դրա ընտրությունը, որպեսզի գործին մասնակցող անձանց համար որոշակի լինեն Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված լիազորության ընտրության հիմքերն ու հիմնավորումները:

Ամփոփագիր: Գիտական հետազոտության շրջանակում փորձ է արվում բացահայտել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները և առաջարկել նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրաքանչյուր գործով:

Ինչպես նաև այդ համատեքստում ներկայացնել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում և պատասխանել հետևյալ հարցին՝ արդյո՞ք Վերաքննիչ դատարանը օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

Վետազոտության արդիականությունը պայմանավորված է զարգացող իրավական պրակտիկայով, Վերաքննիչ դատարանի լիազորությունների բազմազանությամբ և դրանց բովանդակության խրթինությամբ:

Սույն աշխատության հիմնական նպատակներն են՝

- Համակարգային վերլուծության արդյունքում վեր հանել Վերաքննիչ դատարանի լիազորությունների ընտրության չափանիշներն ու դրանց առանձնահատկությունները,

¹⁰ Տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը:

- Իրականացնել իրավական վերլուծություն՝ բացահայտելով ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները,
- Առաջարկել ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման նոր չափանիշներ, որոնք առավել նպատակային/տեղային կլինեն յուրքանայուր գործով:

- ՀՀ Օրենսդրության կոնկրետ հոդվածների լայն և նեղ մեկնաբանությունների ներկայացումը, դրանց բացահայտումն ու հիմնավորումը:

- Իրավական անորոշության հաղթահարմանն ուղղված մեկնաբանությունների վերհանումն ու հիմնավորումը:

Գիտական աշխատության խնդիրներ են պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Ո՞րոնք են ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման գոյություն ունեցող չափանիշները: Արդյո՞ք գոյություն ունեցող չափանիշները բավարար են նման գնահատում իրականացնելու համար:

2. Արդյո՞ք ՀՀ Վերաքննիչ դատարանի հայեցողությունը բացարձակ է ՀՀ ՔԴՕ սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա լիազորությունների ընտրության հարցում, այն պարագայում, երբ գործի փաստական հանգամանքների համատեքստում կարող է (առկա է իրավական հնարավորություն) կիրառվել կոնկրետ լիազորություն:

3. Արդյո՞ք ՀՀ Վերաքննիչ դատարանը չպետք է ունենա ՀՀ ՔԴՕ-ով սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա իր լիազորություններից կոնկրետ մեկի ընտրությունը պատճառաբանելու/հիմնավորելու օրենսդրական պարտականություն և/կամ արդյո՞ք ներկայումս ՀՀ Վերաքննիչ դատարանը չունի նման օրենսդրական պարտականություն:

Annotation. Within the framework of scientific research, an attempt is made to determine the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified, and to propose new criteria that will be more targeted/relevant in each specific case.

And also in this context, to present the scope of discretion of the RA Civil Court of Appeal (hereinafter also the Court of Appeal) in the matter of choosing its powers and answer the following question: does the Court of Appeal have legislative duties and/or should not have them in terms of justifying the choice of its own powers.

The main goals of this work are:

- As a result of a systematic analysis, to identify the criteria for choosing the powers of the RA Court of Appeal and their features,

- Conduct a legal analysis by defining the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or improperly substantiated or justified.

- Propose new criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified, which would be more targeted/relevant in each specific case.

- Presentation of broad and narrow interpretations of specific articles of the RA legislation, their disclosure and justification.

- Identification and justification of comments aimed at overcoming legal uncertainty.

Problems of the scientific paper answered the following questions:

1. What are the existing criteria for assessing whether the judicial acts of the lower court are incomplete or unfounded or justified? Are the existing criteria sufficient for such an assessment.

2. Is the discretion of the Court of Appeals of the Republic of Armenia absolute in the matter of the selection of powers defined by the Civil Procedure Code of the Republic of Armenia, in the event that a specific power may be applied (there is a legal possibility) in the context of the factual circumstances of the case?

3. Shouldn't the RA Court of Appeals have a legislative duty to justify the choice of its powers to be exercised as a result of the examination of the appeal filed against the judgment defined by the RA Civil Procedure Code and/or does the RA Court of Appeals not currently have such a legislative duty?

Аннотация. В рамках научного исследования делается попытка определить существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными, и предложить новые критерии, которые были бы более целенаправленными/локальными в каждом конкретном случае.

А также в этом контексте представить рамки усмотрения гражданского Апелляционного суда РА (далее также Апелляционный суд) в вопросе выбора своих полномочий и ответить на следующий вопрос: не имеет ли Апелляционный суд законодательных обязанностей и/или не должен иметь их в плане обоснования выбора собственных полномочий.

Основными целями данной работы являются:

- в результате системного анализа выявить критерии выбора полномочий Апелляционного суда РА и их особенности;
- провести правовой анализ, определив существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или неправильно обоснованными или обоснованными;
- предложить новые критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными, которые были бы более целенаправленными/актуальными в каждом конкретном случае;
- представление широких и узких толкований конкретных статей законодательства РА, их раскрытие и обоснование;
- выявление и обоснование комментариев, направленных на преодоление правовой неопределенности.

Задачи научной статьи – ответить на следующие вопросы:

1. Каковы существующие критерии оценки того, являются ли судебные акты суда низшей инстанции неполными или необоснованными или обоснованными? Достаточно ли существующих критериев для проведения такой оценки;
2. Является ли усмотрение Апелляционного суда РА абсолютным в вопросе выбора полномочий, подлежащих применению по результатам рассмотрения апелляционной жалобы, поданной против решения, установленного УПК РА, в том случае, когда в контексте фактических обстоятельств дела могут (имеется правовая возможность) быть применены конкретные полномочия;
3. Не должен ли Апелляционный суд РА иметь законодательную обязанность обосновать/аргументировать выбор одной из своих полномочий, подлежащих применению в результате рассмотрения апелляционной жалобы, поданной на решение, установленное УПК РА, и/или не имеет ли в настоящее время Апелляционный суд РА такой законодательной обязанности.

Բանալի բառեր - Վերաքննիչ դատարան, լիազորություն, պարճառարանված, գնահատման չափանիշներ, հիմնավորվածություն:

Keywords: Court of Appeals, authority, reasoned, evaluation criteria, validity.

Ключевые слова: апелляционный суд, полномочия, аргументировано, критерии оценки, обоснованность.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ-իրավական

1. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ Վճռաբեկ

դատարանի 2012թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով: ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2021 թ. թիվ ԱՎԴ/2827/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

3. Սալուվն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ:

4. ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 և ՀՀ Սահմանադրական դատարանի 1 փետրվարի 2022 թ. թիվ ՍԴՈ- 1628 որոշումները:

Տեսական գրականություն

1. Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 268:

2. Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, 335 էջ, Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, 268 էջ:

Ինտերնետային աղբյուրներ

1. www.arlis.am
2. www.datalex.am

Մանուկյան Մ. - Իրավագիտության մագիստրոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ MariamManukyan.Law@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 15.05.2024 թ., տրվել է գրախոսության 15.05.2024 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-41>

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության
կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

GEVORG ISRAYELYAN

*Candidate of Law, Associate Professor,
Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy of Sciences of the Republic of Armenia,
lecturer of the Law Department at Eurasia International University*

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

*кандидат юридических наук, доцент,
Начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия*

**ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԶՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**CURRENT PROBLEMS OF THE GENERAL VICTIMOLOGICAL
PREVENTION OF THE COMPUTER THEFT IN THE REPUBLIC OF
ARMENIA**

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕГО ВИКТИМОЛОГИЧЕСКОГО
ПРЕДУПРЕЖДЕНИЯ КОМПЬЮТЕРНОГО ХИЩЕНИЯ В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ**

Ներածություն

Տեսական ժամանակի ընթացքում քրեական զոհաբանության հիմնական հայեցակարգե-
րը հիմնվել են հանցավորի և տուժողի միջև անմիջական, հաճախ ֆիզիկական կապի վրա,
ինչպես օրինակ՝ բռնություն գործադրելու եղանակով ավազակությունը: Սակայն ժամանակա-

կից պայմաններում, երբ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում նշանակալի դերակատարություն ունի համակարգչային ապահովումը, վերը նշված հայեցակարգերը մասամբ կորցնում են արդիականությունը¹: Խնդիրն այն է, որ որոշակի հանցագործությունների, ինչպես օրինակ՝ համակարգչային հափշտակությունների մեծ մասի պարագայում բացակայում է հանցավորի և տուժողի անմիջական կապը: Այդուհանդերձ, դա չի հերքում հանցագործության մեխանիզմում զոհաբանական գործոնի դերը: Ընդհակառակը, քննարկվող հանցագործությունների մեխանիզմում, որպես կանոն, վճռորոշ նշանակություն ունի հենց զոհաբանական գործոնը:

Հարկ է նշել, որ խնդրո առարկան Հայաստանի Հանրապետությունում գիտական մակարդակով ուսումնասիրված չէ, ինչն էլ պայմանավորում է այս հետազոտության արդիականությունը:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել համակարգչային հափշտակության մեխանիզմում զոհաբանական գործոնի դերը և նշանակությունը, իսկ խնդիրներն են՝ ներկայացնել ֆիզիկական անձ տուժողի անձնային, վարքային հատկանիշները և հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը և դրա հիման վրա առաջարկել ընդհանուր զոհաբանական կանխարգելման միջոցներ:

Հիմնական հետազոտություն

Համակարգչային հափշտակության մեխանիզմում զոհաբանական գործոնի դերը և առանձնահատկությունները

Տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը տրամաբանորեն հանգեցրել է համակարգչային հափշտակությունների թվի աճի, ինչի հիմնական պատճառը զոհաբանական գործոնն է²:

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ համակարգչային հափշտակությունների մեխանիզմի զոհաբանական կողմն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. Բազմաթիվ հանցագործությունների պարագայում զոհաբանները (վիկտիմոլոգները) հանցագործի և զոհի (տուժողի) շփմանը որոշակի հոգեբանական ներդաշնակություն են վերագրում: Ենթադրվում է, որ զոհն ընտրվում է ոչ թե պատահական, այլ ճշգրիտ չափանիշներով և բնութագրերով: Հանցագործն ու զոհը հոգեբանորեն համընկնում են միմյանց հետ, զոհաբանության (վիկտիմոլոգիայի) հիմնադիրներից մեկի՝ Հանս Ֆոն Գենտիգի (1888–1974) խոսքով՝ «ինչպես կողպեքն ու բանալին»³: Համակարգչային հափշտակության պարագայում իրողությունն այլ է: Մեր հետազոտությունների արդյունքները փաստում են, որ դեպքերի մեծամասնության պարագայում նշված հանցանքը կատարվում է տուժողների պատահական ընտրության հիման վրա:

2. Համակարգչային հափշտակության պարագայում հանցավոր վարքի մեխանիզմի անկյունաքարը տուժողի հանդեպ հանցավորի անմիջական ներգործության բացակայու-

¹ Տե՛ս *Израелян Г.*, Кибервиктимология: понятие и составляющие элементы // Օրենքի պատվար, № 16, 2023, էջ 264:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (վերջին մուտք՝ 01.03.2024):

³ Տե՛ս *Жмуров Д.В.*, Кибервиктимность как новая категория виктимологии постмодерна // Азиатско-тихоокеанский регион: экономика, политика, право, 2021, № 2, էջեր 115-118:

թյունն է, սեփական հանցավոր գործողությունները հնարավորինս քողարկելու ձգտումը: Երբեմն տուժողները նույնիսկ չեն էլ կասկածում, որ վնաս են կրել կամ դրա մասին անմիջապես չեն իմանում: Գործելու նման եղանակը, որպես կանոն, երաշխավորում է հանցավորի անվտանգությունը, վերացնում տուժող կողմի հաշվեհարդարի հնարավորությունը⁴:

3. Դատական զոհաբանությունում կարևոր նշանակություն ունեն գոհաձին անձնային և իրադրային գործոնները: Առաջինը անհատի խոցելիությունն է, իսկ երկրորդը՝ զոհային վարքը պայմանավորող արտաքին միջավայրի պայմանները: Երկու դեպքում էլ տուժողն ակտիվ է, նա է խթանում հանցավոր վարքն իր խոցելիությամբ կամ իրադրային վարքով: Համակարգչային հափշտակության պարագայում երբեմն հանցավորի և տուժողի միջև դետերմինացիոն կապերը բարդանում են և չեն սպառվում պատճառականությամբ կամ կողմերի փոխազդեցության պայմաններով⁵: Որպես օրինակ կարող են ծառայել այն դեպքերը, երբ բանկի աշխատողը համապատասխան տվյալը փոխանցում է մեկ այլ անձի կամ այն օգտագործում է սեփական հանցավոր, շահադիտական նպատակներով: Նման պարագայում տուժողի անձնային և վարքային հատկանիշները որևէ ազդեցություն չեն ունենում քրեաբանական իրադրության վրա:

Տուժողի անձնային և վարքային հատկանիշները, հանցավորի և տուժողի փոխհարաբերությունների բնույթը համակարգչային հափշտակության մեխանիզմում

Համակարգչային հափշտակության մեխանիզմում գլխավոր դերը, որպես կանոն, պատկանում է զոհային գործոնին: Համակարգչային հափշտակության դեպքերի վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հիշատակված հանցագործությունների կատարումը գերազանցապես պայմանավորում է տուժողի անձնային, վարքային հատկանիշները, իսկ երբեմն նաև հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը:

Տուժողներին բնութագրական անձնային հատկանիշներն են դյուրահավատությունը, անշրջահայացությունը, թեթևամտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու նվազ կարողությունները:

Նշված անձնային հատկանիշներին համապատասխան՝ կոնկրետ իրադրությունում տուժողները, որպես կանոն, դրսևորում են դասավորվող իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողություն, հայտնվում են մոլորության մեջ, երբեմն էլ անհեռատեսորեն հաստատում են վտանգավոր կապեր:

Ուսումնասիրված դեպքերի մեծամասնության պարագայում հանցավորը և տուժողը որևէ հարաբերությամբ կապված չեն լինում: Օրինակ՝ (...) քրեակատարողական հիմնարկի 37-ամյա կալանավոր Զ.-ն, հանցավոր ճանապարհով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու նպատակով, 2021 թվականի հունիսից մինչև 2022 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում, հասանելիություն ստանալով շուրջ 5 տասնյակ քաղաքացու «Իդրամ» դրամապանակներին, կատարել է 39.803.498 ՀՀ դրամ գումարի համակարգչային հափշտակություն: Նա «Viber» և «WhatsApp» հավելվածներով զանգահարել է տարբեր անձանց՝ հայտնելով, թե իբրև սխալմամբ գումար է փոխանցել նրանց «Իդրամ» դրամապանակներին և խնդրել է տրամադրել նրանց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառերը: Դրանք ստանալուց հետո Զ.-ն հասանելիություն է ստացել այդ քաղաքացիների «Իդրամ» դրամապանակներին և, համապատասխան տվյալը մուտքագրելով, նրանց անունից կնքել է վարկային պայմանագրեր:

⁴ Տե՛ս *Израелян Г.*, նշված աշխ., էջ 266:

⁵ Տե՛ս *Жмуров Д.В.*, նշված աշխ., էջ 115-118:

Մեկ այլ օրինակ. 2021 թվականի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 05:30-ի սահմաններում, Բ.-ն գտնվել է Երևան քաղաքի (...) փողոցում տեղակայված համակարգչային սրահում, «Adjarabet» կայքի իր՝ (...) հեռախոսահամարով բացված անձնական էջով կատարել է խաղադրույքներ: Այդ ընթացքում անմիջապես նրա կողքին նստած անծանոթ երիտասարդը տեսել է Բ.-ի «Adjarabet» կայքի գաղտնաբառը: Որոշ ժամանակ անց այդ անձը հեռացել է սրահից: Դրանից մոտ 2 րոպե անց, երբ Բ.-ն շարունակել է խաղը, նրա հեռախոսահամարին հաղորդագրություն է ստացվել այն մասին, որ «Adjarabet» կայքում գրանցված իր հաշվի տվյալները փոխվել են: Տուժողը զանգել է «Adjarabet», որտեղից իրեն տեղյակ են պահել, որ «Adjarabet» կայքի անձնական էջում իր հեռախոսահամարը փոխվել է (...) հեռախոսահամարով, և նշված հեռախոսահամարն օգտագործող անձն իր էջից կանխիկացրել է 69.000 ՀՀ դրամ գումար:

Երբեմն հանցավորին և տուժողին կապում են որոշակի հարաբերություններ: Դրանք կարելի է դասակարգել երկու խմբի.

1) Հանցանքի կատարումից տևական ժամանակ առաջ ձևավորված հարաբերություններ:

Առանձին դեպքերում հանցանք կատարող անձն ու տուժողը ծանոթ են լինում միմյանց, նրանց կապում են ընկերական, ազգակցական, հարևանական, սիրային և այլ բնույթի տևական կապեր: Նման պարագայում հանցավորը չարաշահում է այդ հարաբերությունների ընթացքում ձևավորված վստահությունը և կատարում հանցանք: Օրինակ՝ Ա.-ն ու Բ.-ն գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ: Բ.-ն վստահել է Ա.-ին քարտային հաշվի գաղտնաբառ, որը կատարել է Բ.-ի դրամական միջոցների հափշտակություն և անհետացել:

Մեկ այլ օրինակ. պատիժը կրելու ընթացքում գումար հափշտակելու դիտավորությամբ (...) քրեակատարողական հիմնարկից իր կողմից ապօրինի օգտագործվող բջջային հեռախոսների միջոցով ստանալով համացանցի հասանելիություն՝ Ա.-ն մուտք է գործել համացանցի «Odnoklasniki.ru» կայք, որտեղ, բացելով (...) անվամբ անհատական էջ, ծանոթացել է Մ.-ի հետ, նրա հետ ստեղծել կեղծ մտերմիկ հարաբերություններ: Հետագայում, Մ.-ի վստահությունը չարաշահելու եղանակով, Ա.-ն նրանից պահանջել է բանկային քարտի թվային տվյալները, որոնց միջոցով կատարել է Մ.-ի դրամական միջոցների հափշտակություն, ապա սոցիալական կայքի իր անհատական էջի «Ընկերներ» բաժնից ջնջել է Մ.-ին, փոխել անհատական էջի անունը, անջատել հեռախոսահամարը:

2) Հանցանքի կատարումից համեմատաբար կարճ ժամանակ առաջ ծագած հարաբերություններ:

Հաճախ հանցավորը և տուժողը միմյանց ծանոթ չեն լինում, նրանց միջև հարաբերություն ծագում է հանցանքի կատարումից անմիջապես առաջ՝ հանգամանքների որոշակի դասավորության արդյունքում: Այսպես, ռուս Կ.-ն սոցիալական կայքի միջոցով ծանոթություն է հաստատում ազգությամբ հայ Տ.-ի հետ, առաջարկում գնալ թատրոն և տոմսի համար վճարելու նպատակով նրան համոզում է բանկային քարտի տվյալները լրացնել իր կողմից ուղարկված՝ ֆիշինգային կայքում ստեղծված կեղծ վճարային համակարգի հղմանը: Տ.-ն լրացնում է բանկային քարտի տվյալները, կատարում վճարում, սակայն ստանում է մերժում և առաջարկ՝ դիմելու վաճառքը սպասարկող բաժնին: Դիմելով այդ բաժնին՝ տուժողից ճշտում են քարտին առկա ողջ գումարը և, իմանալով դա, հափշտակում այն: Նման եղանակով կատարվող հափշտակությունների պարագայում հանցավորները չեն կանխիկացնում գումարը, այլ, որպես կանոն, ձեռք են բերում կրիպտոարժույթ, որի շարժը վերահսկելի չէ:

Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման միջոցները

Համակարգչային հափշտակությունների ընդհանուր զոհաբանական կանխարգելումը բնորոշվում է որպես սոցիալական տարբեր ինստիտուտների գործունեություն, որն ուղղված է զոհային վարքագծի ձևավորմանը նպաստող և հանցագործության կատարումը պայմանավորող գործոնների չեզոքացմանը⁶:

Համակարգչային հափշտակությունների ընդհանուր զոհաբանական կանխարգելման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Բնակչության շրջանում անցկացնել համակարգչային հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, մասնավորապես՝

1) կազմակերպել զոհաբանական իրադրությունում համարժեք վարքի դրսևորման հոգեբանական թրեյնինգներ,

2) անցկացնել զոհային վարքի նախականիումն ապահովող գործոնների վերաբերյալ դասախոսություններ, խմբային հոգեթերապիաներ⁷:

2. Նպատակաուղղված օգտագործել մեդիայի հնարավորությունները, մասնավորապես՝

1) իրականացնել մեդիահրապարակումներ զոհային վարքի ձևավորմանը նպաստող գործոնների և հետևանքների վերաբերյալ,

2) տեղեկացնել լսարանին համակարգչային հափշտակություն կատարող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ մեկնաբանելով գործող օրենսդրության դրույթները, ինչը խնդրո առարկա հանցատեսակի լատենտայնության զոհաբանական կանխարգելման գործուն միջոց է⁸:

3. Դպրոցներում, այլ ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դաստիարակության ուղղվածություն ունեցող պարապմունքներ, որոնց ընթացքում կպարզաբանվի, թե ինչպես չդառնալ համակարգչային հափշտակության տուժող, ինչպես ապահովել սեփական տեղեկատվական անվտանգությունը, կուսուցանվի տարբեր իրավիճակներում համարժեք վարքի դրսևորման ձևերը (ճիշտ վարվելաձևը, վստասկար սովորությունների չեզոքացումը, նոր հարաբերությունների ստեղծման հարցում խտրական մոտեցումը և այլն)⁹:

4. Իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ այն մասին, թե ինչպես խուսափել զոհածին իրավիճակից, ինչպիսի վարքագիծ դրսևորել համացանցային կասկածելի ծանոթությունների առաջարկ ստանալիս, ում դիմել համակարգչային հափշտակությունից տուժելու դեպքում, ինչպես նաև տեղեկատվություն տարածել համակարգչային հափշտակություններ կատարողի անձի առանձնահատկությունների, հանցանքի կատարման արդի ձևերի մասին:

⁶ Տե՛ս Իսրայելյան Գ. Վ., Քրեական զոհաբանություն (Բնութագիրը և բաղադրիչները): Մենագրություն /Գ. Վ. Իսրայելյան, Եր., Հեղ. հրատ., 2023, էջ 73:

⁷ Տե՛ս Երովա Կ.Մ., Երովա Ի.Ա., Психология виктимного поведения молодежи // Виктимология 1 (11) /2017, էջեր 24-25:

⁸ Տե՛ս Փարխոմենո Կ.Վ., Եվդոկիմով Կ.Մ., Предупреждение компьютерной преступности в Российской Федерации: интегративный и комплексный подходы // Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права, 2015, Т. 9, № 2, էջ 272:

⁹ Տե՛ս Զեյկով Դ.Ա., Виктимологические аспекты предупреждения компьютерного мошенничества. Дисс. ... к.ю.н. Владимир, 2002 // <https://www.disserscat.com/content/viktimologicheskie-aspekty-preduprezhdeniya-kompyuternogo-moshennichestva> (վերջին մուտք՝ 01.03.2024):

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ.

1. Տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը տրամաբանորեն հանգեցրել է համակարգչային հափշտակությունների թվի աճի, ինչն անխուսափելիորեն պայմանավորված է զոհաբանական գործոնով:

2. Համակարգչային հափշտակություններից ֆիզիկական անձ տուժողներին բնութագրական անձնային հատկանիշներն են դյուրահավատությունը, անշրջահայացությունը, թեթևամտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու նվազ կարողությունները: Նշված անձնային հատկանիշներին համապատասխան՝ կոնկրետ իրադրությունում տուժողները, որպես կանոն, դրսևորում են դասավորվող իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողություն, հայտնվում մոլորության մեջ, երբեմն էլ անհեռատեսորեն հաստատում են վտանգավոր կապեր:

3. Հանցադեպերի մեծամասնության պարագայում հանցավորը և տուժողը որևէ հարաբերությամբ կապված չեն լինում: Հազվադեպ նրանց կապում են մինչև հանցանքի կատարումը ձևավորված հարաբերություններ:

4. Համակարգչային հափշտակությունների ընդհանուր զոհաբանական կանխարգելման նպատակով անհրաժեշտ է բնակչության շրջանում անցկացնել համակարգչային հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, նպատակաուղղված օգտագործել մեդիայի հնարավորությունները, մասնավորապես՝ իրականացնել համապատասխան բովանդակությամբ մեդիահարապարակումներ, դպրոցներում, այլ ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դաստիարակության ուղղվածություն ունեցող պարապմունքներ, իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ այն մասին, թե ինչպես խուսափել զոհաձին իրավիճակից, ինչպիսի վարքագիծ դրսևորել համացանցային կասկածելի ծանոթությունների առաջարկ ստանալիս, ում դիմել համակարգչային հափշտակությունից տուժելու դեպքում, ինչպես նաև տեղեկատվություն տարածել համակարգչային հափշտակություններ կատարողի անձի առանձնահատկությունների, հանցանքի կատարման արդի ձևերի մասին:

Ամփոփագիր: Տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը և լայնորեն կիրառումը, առցանց եղանակով բանկային գործառնությունների կատարման հնարավորությունը հանգեցրել է համակարգչային հափշտակությունների թվի աճի, ինչն անխուսափելիորեն պայմանավորված է զոհաբանական գործոնով:

Կատարված հետազոտության արդյունքում հեղինակին հաջողվել է բացահայտել համակարգչային հափշտակություններից տուժողների անձնային, վարքային առանձնահատկությունները, հանցավորի հետ փոխհարաբերությունների բնույթը: Այսպես, տուժողներին բնութագրական անձնային հատկանիշներն են դյուրահավատությունը, անշրջահայացությունը, թեթևամտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու նվազ կարողությունները: Նշված անձնային հատկանիշներին համապատասխան՝ կոնկրետ իրավիճակում տուժողները, որպես կանոն, դրսևորում են դասավորվող իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողություն, հայտնվում են մոլորության մեջ, երբեմն էլ անհեռատեսորեն հաստատում են վտանգավոր կապեր: Հանցադեպերի մեծամասնության պարագայում հանցավորը և տուժողը որևէ հարաբերությամբ կապված չեն լինում: Հազվադեպ նրանց կապում են մինչև հանցանքի կատարումը ձևավորված հարաբերություններ:

Հաշվի առնելով վերագրյալը՝ հեղինակի կարծիքով՝ համակարգչային հափշտակությունների ընդհանուր զոհաբանական կանխարգելման նպատակով անհրաժեշտ է բնակչության շրջանում անցկացնել համակարգչային հափշտակությունների զոհաբանական հարցերով սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, իրականացնել

նել համապատասխան բովանդակությամբ մեդիա հրատարակումներ, դպրոցներում, այլ ուսումնական հաստատություններում կազմակերպել զոհաբանական դատարարական ուղղվածություն ունեցող պարապմունքներ, իրավապահ մարմինների միջոցով բնակչության շրջանում անցկացնել իրազեկման միջոցառումներ:

Annotation. The development and widespread use of information and communication technologies, the possibility of online banking transactions have led to an increase in the number of computer thefts, which is inevitably due to the victimological factor.

As a result of the conducted research, the author was able to identify the personal and behavioral characteristics of victims of computer theft, the nature of the relationship with the victim and the perpetrator. Thus, the personal characteristics of the victims are gullibility, imprudence, frivolity, low ability to use information technology. In accordance with these personal characteristics, victims in a particular situation, as a rule, demonstrate an inability to correctly assess the situation, are misled, and sometimes thoughtlessly establish dangerous connections. In most cases, the perpetrator and the victim are not related in any way. Rarely do they have a relationship that developed before the crime was committed.

Taking into account the above, in the author's opinion, in order to general victimological prevention of the computer theft, it is necessary to hold seminars, discussions and other events among the population on victimological issues of these crimes, carry out media publications of appropriate content, organize victimological and educational activities in schools and other educational institutions, and conduct explanatory work by law enforcement agencies measures of acceptance.

Аннотация. Развитие и широкое использование информационно-коммуникационных технологий, возможность совершения банковских операций в режиме онлайн привели к увеличению количества компьютерных хищений, что неизбежно обусловлено виктимологическим фактором.

В результате проведенного исследования автору удалось выявить личностные и поведенческие признаки жертв компьютерных хищений, характер взаимоотношений жертвы и преступника. Так, личностными признаками потерпевших являются доверчивость, неосмотрительность, легкомыслие, низкие способности пользования информационными технологиями. В соответствии с указанными личностными особенностями потерпевшие в конкретных условиях, как правило, демонстрируют неспособность правильно оценить ситуацию, оказываются в заблуждении, иногда необдуманно устанавливают опасные связи. В большинстве случаев преступник и потерпевший никак не связаны между собой. Редко их связывают отношения, сложившиеся до совершения преступления.

Учитывая изложенное, по мнению автора, с целью общего виктимологического предупреждения компьютерных хищений необходимо среди населения проводить семинары, дискуссии и другие мероприятия по виктимологическим вопросам указанных преступлений, осуществить медиа-публикации соответствующего содержания, в школах и других образовательных учреждениях организовать занятия виктимологического-воспитательного характера, правоохранительными органами проводить разъяснительные мероприятия.

Բանալի բառեր - համակարգչային հափշտակություն, տուժող, ընդհանուր զոհաբանական կանխարգելում:

Keywords: computer theft, victim, general victimological prevention.

Ключевые слова: компьютерное хищение, потерпевший, общее виктимологическое предупреждение.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իսրայելյան Գ. Վ., Քրեական զոհաբանություն (Բնութագիրը և բաղադրիչները): Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Եր., Հեղ. հրատ., 2023, 116 էջ:

2. Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում
// https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf:

3. Исраелян Г., Кибервиктимология: понятие и составляющие элементы // Орենքի պատվար, № 16, 2023, էջեր 264-269:
4. Жмуров Д.В., Кибервиктимность как новая категория виктимологии постмодерна //Азиатско-тихоокеанский регион: экономика, политика, право, 2021. № 2. С. 113-122.
5. Зыков Д.А., Виктимологические аспекты предупреждения компьютерного мошенничества. Дисс. ... к.ю.н. Владимир, 2002 // <https://www.dissercat.com/content/viktimologicheskie-aspekty-preduprezhdeniya-kompyuternogo-moshennichstva>:
6. Пархоменко С.В., Евдокимов К.Н., Предупреждение компьютерной преступности в Российской Федерации: интегративный и комплексный подходы // Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. 2015. Т. 9, № 2. С. 265–276.
7. Юрова К.И., Юров И.А., Психология виктимного поведения молодежи // Виктимология 1 (11) /2017. С. 23-26:

Իսրայելյան Գ. - ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ g_i_1979@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 19.03.2024 թ., տրվել է գրախոսության 19.03.2024 թ., երաշխավորվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, Ա. Մնացականյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-49>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս
ԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս

ADELINA SARGSYAN
*PhD in Law,
Lecturer of the Department of Criminal Law and
Criminal Procedure Law of the
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

ANUSH HAKOBYAN
*PhD in Law,
Lecturer of the Department of Criminal Law and
Criminal Procedure Law of the
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН
кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета

АНУШ АКОПЯН
кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета

**ՅԱՏՐՈԳԵՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

SOME FEATURES OF THE SUBJECTIVE SIDE OF IATROGENIC CRIMES

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ СУБЪЕКТИВНОЙ СТОРОНЫ ЯТРОГЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի
ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E012):*

Ներածություն

Բուժաշխատողների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարումը հաճախ կապված է հիվանդի առողջությանը տարբեր աստիճանի վնաս և նույնիսկ մահ պատճառելու հետ: Նշված պայմաններում կարևոր նշանակություն ունի տարբեր բնույթի բժշկական միջամտությունների իրականացման ընթացքում բժշկական աշխատողների կողմից վնաս պատճառելու սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունների վերլուծությունը: Յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ կողմի պարզաբանումը կարևոր է, առաջին հերթին՝ կատարվածը որակելու համար, երկրորդ՝ հաշվի է առնվում պատժի անհատականացման ժամանակ, և երրորդ՝ քրեաբանական տեսանկյունից, կախված անզգուշության տեսակից, ենթադրվում են կանխարգելիչ ազդեցության տարբեր միջոցներ:

Անդրադառնալով յատրոգեն հանցագործությունների կատարման մեղքի ձևերին, որն առանցքային նշանակություն ունեն հասկացության սահմանման համար, իրավական դոկտրինում առկա է երկու հիմնական տեսակետ: Գիտնականների մի մասը պնդում է, որ յատրոգեն հանցագործությունները կարող են կատարվել միայն անզգուշության (ինքնավստահության և անփութության) տեսքով, մյուսները՝ և՛ դիտավորությամբ (ուղղակի և անուղղակի), և՛ անզգուշությամբ: Առաջին տեսակետի կողմնակիցների կարծիքով՝ յատրոգեն հանցագործությունները հանրային վտանգավոր արարքներ են, որոնք կատարվել են բացառապես անզգուշությամբ, արտահայտվում են բժշկական աշխատողների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների խախտմամբ (չկատարում կամ ոչ պատշաճ կատարում): Երկրորդ տեսակետի կողմնակիցները դիտարկում են ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշությամբ կատարված գործողությունները (Ի. Նիկիտինա, Ն. Օգներուբով, Յա. Ստարոստին):

Հիմնական հետազոտություն

Առողջապահության ոլորտի մասնագետների կողմից կատարված յատրոգեն հանցագործությունների ճնշող մեծամասնությունը կատարվում է անփութությամբ կամ հանցավոր ինքնավստահությամբ: Հատուկ ուշադրության են արժանի հենց հանցավոր ինքնավստահությամբ կատարվող հանցագործությունները, որոնք սահմանակից են անուղղակի դիտավորության հետ և, հետևաբար, հանրային մեծ վտանգ են ներկայացնում: «Հանցավոր ինքնավստահությունը սոցիալապես վտանգավոր ներխուժում է անորոշություն, ինչը պետական, հասարակական և քաղաքացիների անձնական շահերը կախվածության մեջ է դնում այն հանգամանքներից, որոնք սուբյեկտը (իր համար ակնհայտ) չի վերահսկում»²:

Որպես կանոն, բժշկական աշխատողների մասնագիտական հանցագործությունների հետ կապված առանձնանում են երկու հիմնական կատեգորիաներ՝ «մասնագիտական ոչ կոմպետենտություն» (կամ այլ կերպ ասած՝ «հանցավոր տգիտություն») և «մասնագիտական

¹ Пашинян Г.А., Ившин, И.В., Профессиональные преступления медицинских работников против жизни и здоровья. М.: Медицинская книга, 2006, с. 62.

² Гринберг М.С., Указ. соч., с. 188.

անբարեխղճություն», որոնցից յուրաքանչյուրը պահանջում է համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ: Այնուամենայնիվ, հանցավոր ինքնավստահության հիմքում առավել հաճախ ընկած է մասնագիտական անբարեխղճությունը, որի դեպքում անձը կանխատեսում է իր գործողությունների/անգործության սոցիալապես վտանգավոր հետևանքները, բայց ինքնավստահորեն ակնկալում է դրանց կանխարգելումը/վրա չհասնելը: Անբարեխղճությունը բնութագրվում է նրանով, որ բուժաշխատողները թույլ են տալիս որոշակի մասնագիտական խախտումներ՝ անուշադրության, անփութության, պարտականությունների նկատմամբ ձևական մոտեցում ցուցաբերելու պատճառով: Ինչպես նշում է Ի. Տյաժկովան՝ «Հանցավոր ինքնավստահության դեպքում մեղավորը գիտակցում է իր գործողությունների կամ անգործության հնարավոր հասարակական վտանգը՝ հավատալով, որ եթե նման պահվածքը ենթադրում է վտանգավոր հետևանքներ, ապա այս կոնկրետ դեպքում դրանք չեն լինի»:

Գործնականում դժվարություններ են առաջանում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշելու, թե կոնկրետ ինչն է առաջացրել սխալ ախտորոշման և հետագայում սխալ բուժման մարտավարությունը՝ մասնագիտական տգիտությունը, թե՛ մասնագիտական անբարեխղճությունը: Հետաքրքրական են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Մասնավորապես, հարցվածների 38,6 %-ը նշել է, որ առավել տարածված է մասնագիտական անբարեխղճությունը, մինչդեռ 42,1 %-ի կարծիքով՝ մասնագիտական գիտելիքների պակասը: Այն հարցին, թե որն է բժշկական աշխատողների մասնագիտական պարտականությունների ոչ պատշաճ և/կամ անբարեխիղճ կատարելու պատճառը, քաղաքացիների 42,1 % նշել է բժշկական կրթության որակը, 44,7 %՝ անտարբերությունն աշխատանքի արդյունքների նկատմամբ, ինչը, իր հերթին, վկայում է մասնագիտական անբարեխղճության մասին: Իսկ հարցվածների 18,4 %-ը նշել է բարոյական արժեքների փոփոխության մասին, ինչն արդիականացնում է մասնագիտական էթիկայի դասընթացների հարցը:

Այսպես՝ Ֆ. Բերդիչևսկին նկարագրել է մի դեպք, երբ բժիշկը նշանակել է քլորէթիլային անեստեզիա, որը շատ փոքր միջակայք ունի թունավոր և բուժական դոզաների միջև, հակացուցված է ծանր հիվանդի համար, որը տառապում էր սրտանոթային համակարգի, երկկամների հիվանդությամբ, հեմոռոյով: Բժշկի գործողությունները գնահատելիս հանձնաժողովը նշել է, որ հիվանդին չցուցված քլորէթիլային նարկոզի կիրառումը չի վկայում վերջինիս նկատմամբ վիրաբույժի անուշադիր և անբարեխիղճ վերաբերմունքի մասին, սակայն բացատրվում է նրա ոչ բավարար որակավորմամբ³:

Նշվածի համատեքստում հետաքրքրական է անդրադարձ կատարել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԿԴ1/0043/01/10 գործի շրջանակում 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կայացված դատավճռին: (...) Գ. Գյուրջյանն, աշխատելով Աբովյանի ԲԿ ՓԲԸ-ի պոլիկլինիկայում որպես բժիշկ մասսվածքաբան, իր մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարելու հետևանքով չի հայտնաբերել և չի ախտորոշել 2010 թ. փետրվարի 8-ին Աբովյանի ԲԿ ՓԲԸ-ի պոլիկլինիկայում իր կողմից հետազոտված հիվանդ Հ. Սողոմոնյանի հիմնական մասսվածքը՝ ձախ ազդրոսկրի վերին երրորդականի փակ կոտրվածքը, ինչի հետևանքով մինչև 21.02.2010 թ. այդ ուղղությամբ չեն կատարվել համապատասխան բուժումներ, որի արդյունքում զարգացած արյունա-ֆիբրինային թրոմբոէմբոլիայից անզուլույթամբ առաջացել է հիվանդի մահը:

³ Сенокосова Е.К., Проблемы криминологической и уголовно-правовой оценки профессиональной некомпетентности и недобросовестности при оказании медицинской помощи // Вестник Омского университета. Серия «Право». 2015. No 3 (44). С. 173.

Դատական ակտի համաձայն՝ հիվանդի մոտ հիմնական վսասը չի հայտնաբերել անձի անբարեխղճության հետևանքով, ինչը, սակայն, մեր կարծիքով, վիճելի պնդում է: Նշված պարագայում խոսքը մասնագիտական տգիտության մասին է, բայց ոչ անբարեխղճության: Իսկ դրա չբացահայտումն իր հերթին հանգեցրել է ոչ լիարժեք բուժման, այն է՝ ախտորոշիչ և բուժական յատրոգենիայի:

Հանցագործության սուբյեկտիվ կողմի վերլուծության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Ա. Թամրազյանի Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ/0183/01/09 գործի շրջանակներում 2009 թվականին հոկտեմբերի 23-ին կայացված դատավճիռը:

Գործի հանգամանքների և վկաների ցուցմունքների հիման վրա բժիշկը տեղեկացվել է առկա գանգոլեդային վնասվածքի մասին, սակայն նման դեպքերում անհրաժեշտ ռենտգեն հետազոտություն չի կատարել: Այս դեպքում դատապարտյալի գործողությունների հասարակական վտանգավորության բարձրացման մասին (ինչը, մեր կարծիքով, նաև բացառում է անփութությունը նրա գործողություններում) վկայում է նրա կեղծ հայտարարությունը, որ «եթե իմանայի առկա վնասվածքի մասին (տուժողի անկում), ես անպայման նրան կհոսպիտալացնեի»: Տվյալ դեպքում իր արարքի բացասական հետևանքների առաջացման կանխատեսումը և հիվանդին հոսպիտալացնելու և ռենտգեն ախտորոշման ընթացակարգ կատարելու գործողությունների չկատարումը վկայում են Ա. Թամրազյանի անբարեխիղճ, ձևական վերաբերմունքի մասին իր մասնագիտական պարտականությունների կատարման նկատմամբ, իր անգործության բացասական հետևանքների չհանգեցնելու հանցավոր ինքնավստահորեն հաշվարկի մասին: Այս դեպքում բժիշկը, դրսևորելով հանցավոր ինքնավստահություն, անտեսել է անհրաժեշտ հետազոտությունների կատարումը:

Մասնագիտական տգիտության արդյունքում բուժաշխատողի կողմից անփութության դրսևորման մեկ այլ օրինակ է Ա. Մնացականյանի գործով կայացված թիվ ԱՐԴ /0107/01/10 որոշումը: Չնայած սրտի շրջանում հիվանդի սիստոմատիկ գանգատներին, բժիշկ Ա. Մնացականյանը սխալ ախտորոշում է կատարել, ինչն էլ իր հերթին հանգեցրել է սխալ բուժման: Մասնավորապես՝ բժշկի գործողություններում առկա է եղել նաև անգործություն, ինչը դրսևորվել է նրանով, որ Ա. Մնացականյանը հիվանդին չի ուղարկել հետազոտ անհրաժեշտ հետազոտման և բուժման, որն իր հերթին հանգեցրել է հիվանդի մահվան:

Մեկ այլ գործով բժիշկ Լ. Ոսկանյանի կողմից Ա. Գրիգորյանի բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելիս մասնագիտական պարտականություններն իրականացվել են ոչ պատշաճ: Այն է՝ Ա. Գրիգորյանին նախավիրահատական և հետվիրահատական շրջանում արյան մեջ բարձրացած գլյուկոզայի պարունակության պայմաններում ներարկվել է տվյալ դեպքում հակացուցված 5 օ/օ-ոց 500 մլ-ական գլյուկոզա, իսկ հետվիրահատական շրջանում առաջացած բարդությունները պարզելու և նրա բուժօգնության ցուցաբերման համապատասխան տակտիկան մշակելու նպատակով չեն կատարվել շտապ հետազոտություններ: Կատարել է վաղ/ժամանակից շուտ/ էքստրաբացիա՝ արհեստական շնչառության խողովակը դուրս է հանել շնչափողի լուսանցքից, ինչի պատճառով հիվանդի մոտ առաջացել է հիպօքսիա՝ օրգանիզմի թթվածնով մատակարարման անբավարարություն, այնուհետև շնչառության կանգ, ինչն էլ անգուշությամբ առաջացրել է Ա. Գրիգորյանի մահը:

Հանցավոր անփութությունը ենթադրում է, որ բուժաշխատողը գիտակցում է իր գործողությունների բնույթը, ինչպես նաև գիտակցում է որ խախտում է վարքի որոշակի կանոններ: Բժշկական աշխատողի մասնագիտական կոմպետենտությունից է կախված հիվանդին օգնելու պարտականությունների շրջանակը: Հետևաբար, անփութության օբյեկտիվ չափանիշը

որոշվում է բժշկական աշխատողի մասնագիտական կոմպետենտությամբ⁴: Այստեղ հարկ է նշել, որ Լ. Ոսկանյանը, խախտելով որոշակի կանոններ, կանխատեսել կամ պետք է և կարող էր կանխատեսել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, եթե ցուցաբերեր բուժաշխատողի համար անհրաժեշտ ուշադրություն:

Հանցավոր անփութության օրինակը հստակ կարելի է ցույց տալ Ալիսա Բաբայանի գործով թիվ ԼԴ/0235/01/11 որոշման համատեքստում: «... Իր մասնագիտական պարտականությունների նկատմամբ դրսևորելով անփույթ և անբարեխիղճ վերաբերմունք, դրանք կատարել է ոչ պատշաճ՝ անհրաժեշտ ծավալով չի իրականացրել բուժվող հիվանդի արյան և մեզի ընդհանուր հետազոտությունները, ամենօրյա բուժզննման ընթացքում մանրամասն չի հետազոտել և չի նկարագրել նրա օբյեկտիվ վիճակը՝ սրտի լսման, ռիթմի, զարկերակային ճնշման տվյալները, թոքերի լսման և կրծքավանդակի բախման արդյունքները, շնչառության հաճախականության տվյալները, չի կատարել կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտություն, էլեկտրոսրտագրություն, մանրամասն չի նկարագրել հիվանդի նյարդաբանական վիճակը և դինամիկայում չի կրկնել անհրաժեշտ հետազոտությունները, որի հետևանքով Նորայր Մելքոնյանին լիարժեք և ճիշտ ախտորոշում չի դրել»:

Հիվանդը անհիմն դուրս է գրվել հիվանդանոցից և ուղարկվել տուն, որտեղ էլ վրա է հասել վերջինիս մահը: Այս դեպքում, վերլուծելով բուժաշխատողի գործողությունների սուբյեկտիվ կողմը, անհրաժեշտ է նշել, որ Ա. Բաբայանը, կատարելով իր մասնագիտական պարտականությունները, խախտելով բժշկական միջոցառումների իրականացման սահմանված կանոնները, չկանխատեսելով իր անգործության սոցիալապես վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չնայած անհրաժեշտ ուշադրությամբ և նախախնամությամբ պետք է և կարող էր կանխատեսել այդ հետևանքները, դրսևորելով հանցավոր անփութություն, պատշաճ ուշադրություն չի դարձրել հիվանդի վիճակի վերահսկմանը և բոլոր անհրաժեշտ միջոցառումների անցկացմանը:

Բժշկական աշխատողների կողմից կատարված յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ կողմը վերլուծելիս անհրաժեշտ է քննարկել նաև մեկ այլ կարևոր հարց, այն է՝ անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության տարբերակումը: Հանցավոր ինքնավստահության և անուղղակի դիտավորության հիմնական տարբերությունը կամային տարրի բովանդակությունն է:

Եթե անուղղակի դիտավորության դեպքում բուժաշխատողը գիտակցաբար թույլ է տալիս հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, հավանություն է տալիս դրանց, ապա հանցավոր ինքնավստահության դեպքում առկա չէ ոչ միայն նման ցանկություն, այլ նաև այդ հետևանքների գիտակցված թույլատրում: Հանցավոր ինքնավստահության դեպքում բուժաշխատողը համոզված է դրանց կանխման հարցում և բացասաբար է վերաբերվում դրանց:

Այսպիսով, վառ օրինակ է Խ-ի նկատմամբ կայացված դատավճիռը, որն, ունենալով միջնակարգ բժշկական կրթություն և տարբեր մերսման հավաստագրեր, լիցենզիայի ժամկետը լրանալուց հետո շարունակել է զբաղվել բժշկական պրակտիկայով: Չնայած Խ-ի տեղեկացվածությանը Պ-ի տեղական անզգայացնող խմբի նովոկաինի նկատմամբ ավերգիկ ռեակցիայի առկայության մասին (որը ներառում է լիդոկաինը), նա ինքնուրույն կատարել է ներմկանային պարավերտեբրալ ներարկումների երեք սեսիս՝ լիդոկաինի 10 % լուծույթի վեց միլիլիտր և Կենսալոգ-40 դեղամիջոցի մեկ միլիլիտր չափաբաժնով: Ներարկման երրորդ սեսիսից

⁴ Пашинян А.Г., Ившин И.В., Профессиональная неосторожность деяний медицинских работников // Медицинский совет, выпуск № 2, 2009, с. 10.

հետո Պ-ն ավերգիկ ռեակցիա է ունեցել անաֆիլակտիկ ցնցման տեսքով, ինչը հանգեցրել է նրա մահվան: Դատելով գործի հանգամանքներից՝ Խ-ն ցանկացել է նյութական վարձատրություն ստանալ, և հիվանդի մահը դժվար թե այն արդյունքն էր, որին նա ձգտում էր: Խ-ն չէր կարող հույս դնել (թեկուզ և ինքնավստահորեն), որ իր արարքի հետևանքները կկանխվեն, բայց անտարբեր էր վերաբերվում դրանց⁵:

Միևնույն ժամանակ, Անուշավան Կարապետյանի գործով որոշման մեջ նկատվում են հանցավոր ինքնավստահության հատկանիշներ և նրա կողմից ակտիվ գործողություններ՝ ուղղված հանրորեն վտանգավոր հետևանքների կանխարգելմանը: «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ Ս. Գրիգորյանի վիրահատությանը՝ որպես անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, մասնակցել է ամբաստանյալ Ա. Կարապետյանը, որը 2008 թ. օգոստոսի 5-ին՝ ժամը 1830-ի սահմաններում, կատարելով Ս. Գրիգորյանի մինչվիրահատական պատրաստությունը, չի իրականացրել մինչվիրահատական շրջանում պարտադիր կատարման ենթակա անհրաժեշտ հետազոտություններ, որոնց արդյունքով հնարավոր կլիներ որոշելու Ս. Գրիգորյանի իրական վիճակը՝ դրա ծանրության աստիճանը, և իրականացնել ադեկվատ վիրահատական միջամտություն, ադեկվատ ընդհանուր անզգայացում, իսկ հետվիրահատական շրջանում՝ բուժման ճիշտ տակտիկայի ընտրություն:

Բացի դրանից՝ Ս. Գրիգորյանին բուժօգնություն ցուցաբերելու ընթացքում ամբաստանյալ Ա. Կարապետյանի կողմից իրականացված վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի միջոցառումները պատշաճ ու հիվանդի վիճակին համապատասխան ծավալով չեն իրականացվել, մասնավորապես՝ հնարավորություն ունենալով անհրաժեշտ հետազոտությունների իրականացման միջոցով Ս. Գրիգորյանի մոտ ախտորոշել թոքերի խիստ արտահայտված թարախային միաձուլվող արքցեսվող պնևմոնիա, ամբաստանյալ Ա. Կարապետյանն իրականացրել է վերջինիս ինքնուրույն շնչառության ստուգման փորձեր, ինչը կատարելը նպատակահարմար չի եղել, քանի որ նման գործողությունները նույնպես կարող են նպաստել առանց այն էլ թոքերի խանգարված ֆունկցիայի առավել ընկճմանը՝ շնչառական անբավարարության զարգացմամբ, հետևաբար՝ հիպօքսիայի խորացմամբ:

Եզրակացություն

Ամփոփելով վերը նշվածը՝ հարկ է նշել, որ բուժաշխատողի կողմից իր մասնագիտական պարտականությունների ոչ պատշաճ կատարման սուբյեկտիվ բնութագիրն ունի օբյեկտիվ պատճառներ և ենթադրում է բժշկական գործունեության իրականացման որոշակի կանոնների առկայություն և դրանց չկատարում: Միևնույն ժամանակ, բուժաշխատողի կողմից կատարվող յատրոգեն հանցագործությունները վերլուծելիս, բացի մասնագիտական կանոնների խախտման փաստը հաստատելուց, անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչն է ընկած բուժաշխատողի հանցավոր վարքի հիմքում: ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածը, որտեղ նշվում է Բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին, հնարավոր է լրացնել «Մասնագիտական պարտականությունների նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով» դրույթով:

Կարևոր նշանակություն ունի բժշկական աշխատողի հանցավոր վարքի ներքին հոգեբանական բովանդակությունը կազմող հանցավոր տգիտության և անբարեխիղճության մասին նշումը: Չարդարացված ռիսկի ձգտումը, ինքնահանգստացման բանաձևի սովորական

⁵ *Нагорная И.И.*, Уголовно-правовая охрана жизни и здоровья человека при оказании медицинских услуг: сравнительно-правовой анализ // Уголовно-правовая охрана жизни и здоровья человека при оказании медицинских услуг: сравнительно-правовой анализ, 2014, с. 128.

օգտագործումը, ընդունված որոշումները խորհելու և հնարավոր հետևանքները կանխատեսելու սովորության բացակայությունը, անվտանգության նկատմամբ անտարբերությունը (սեփական և ուրիշների) նույնպես բնութագրում են անզգուշությամբ կատարվող հանցագործությունները⁶:

Մասնագիտական տգիտության հիման վրա բուժաշխատողների հանցավոր գործողությունները որակելու համար մեղքի ձևերի այլընտրանքը կարող են լինել մեղքի երկու ձև ունեցող հանցագործությունները, որոնք երկու անկախ հանցագործությունների իրավական միավորում են, որոնցում մեկը դիտավորյալ է, իսկ երկրորդը՝ անզգուշ⁷:

Հաշվի առնելով քրեաբանական առանձնահատկությունները և մասնագիտական տգիտության մեծ վտանգը՝ նպատակահարմար ենք համարում քրեական օրենսգրքում այս կատեգորիան ամրագրելու հարցի քննարկումը: Առաջին հայացքից հանցավոր տգիտությունը միանգամայն տեղավորվում է անփութության շրջանակում: Սակայն անհրաժեշտ է տարանջատել այդ հասկացությունները: Անփութության դեպքում անձը պատշաճ ուշադրությամբ և հայեցողությամբ կարող էր և պետք է կանխատեսեր իր արարքի հանրորեն վտանգավոր հետևանքները, մինչդեռ մասնագիտական տգիտության դեպքում անձը զրկված է այդ հնարավորությունից՝ ոչ կոմպետենտության և անհրաժեշտ գիտելիքների բացակայության պատճառով:

Այն դեպքում, եթե անփութությունը, ինչպես նշվեց, իրավիճակային երևույթ է (նույն իրավիճակում կարող էր և չլինել շփոթություն, կանոնների մոռացում), ապա տգիտությունը, որպես կանոն, վերակարգային է. այն անխուսափելիորեն հանգեցնում է սխալների և կորուստների. վաղ թե ուշ քննարկվող իրադարձությունները չէին կարող տեղի չունենալ: Եթե անփութությունը՝ կոնկրետ դեպքում անկանխատեսելի երևույթ է, ապա տգիտությունը, ինչպես և դրա հակառակը՝ բուժաշխատողի կոմպետենտությունը՝ ենթարկվում է ամբողջական վերահսկողության՝ քննություններ, ստուգումներ և այլն: Այն անձինք, ովքեր պարտավոր են այդպիսի վերահսկողություն իրականացնել, պատասխանատու են տգետ անձին սոցիալ-տեխնիկական և այլ ոլորտներում ընդգրկելու համար⁸:

ՌՍՖՍՀ քրեական օրենսգրքում ամրագրված էր հողված, որը պատասխանատվություն էր նախատեսում անձի կողմից առանց անհրաժեշտ գիտելիքներ ունենալու բժշկական գործունեություն ծավալելու համար (Հոդված 221, Ապօրինի բուժում):

Այսպիսով, հանցավոր անփութության և հանցավոր ինքնավստահության հիմնական տարբերությունն այն է, որ հանցավոր անփութության դեպքում բուժաշխատողն անգամ վերացական ձևով չի կանխատեսում հանրային վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը: Ինչպես արդարացիորեն է նշել Ա.Ռարոզը, «հանրային վտանգավոր հետևանքների առաջացումը կանխատեսելու պարտավորությունը կարող է բխել օրենքի ուղղակի հրահանգներից՝ հատուկ կանոններից, հանցագործի մասնագիտական, պաշտոնական կամ այլ գործառնություններից, ինչպես նաև համակեցության ընդհանուր պարտադիր կանոններից»⁹:

⁶ Лунев В.В., Преступное поведение: мотивация, прогнозирование, профилактика, М., 1980, с. 65-66.

⁷ Гордеев В.И., Филимонов А.Е., Грань неосторожности и умысла в квалификации деяний медицинских работников при невежественном (безграмотном) исполнении ими своих профессиональных обязанностей // Уголовная ответственность медицинских работников: вопросы теории и практики. Сборник статей по материалам Всероссийского научно-практического круглого стола: 3 марта 2017 г. // Северо-Западный филиал ФГБОУ ВО «Российский государственный университет правосудия» / Под общ. ред. Е. Н. Рахмановой, доктора юридических наук, доцента. — СПб.: ИД «Петрополис», 2017, с. 61.

⁸ Гринберг М.С., Преступное невежество // Вестник Омского университета, 2011, с. 189.

⁹ Пароз А.И., Субъективная сторона и квалификация преступлений. М., 2001, с. 52.

Դատական պրակտիկայի, ինչպես նաև գործնական դեպքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը ոչ թե մեկ, այլ մի քանի բուժաշխատողների հաջորդական գործողությունների արդյունք է, ուստի թույլ է տալիս քննարկել նման դեպքում հանրային վտանգավորության բարձրացման հարցը, երբ անբարենպաստ արդյունքն առաջացել է մի քանի սուբյեկտների գործողությունների հետևանքով: Կարևոր նշանակություն պետք է տրվի հենց երկու կամ ավելի բուժաշխատողների հաջորդական կամ միաժամանակյա բժշկական միջամտություններին, ինչը, իր համակցությամբ հանգեցրել է հանրորեն վտանգավոր հետևանքների: Այսինքն՝ համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ հիվանդին բժշկական օգնություն ցուցաբերելիս մի քանի բուժաշխատողներ տեղյակ էին և գիտակցում էին հիվանդին բժշկական օգնություն ցուցաբերելու իրենց գործողությունների փոխադարձ և հաջորդական բնույթը: Ասվածը վկայում է հանցավոր յատրոգենիայի մի քանի տեսակների դրսևորման մասին. Օրինակ՝ բժշկի անգործությունը, ով չի կատարել բոլոր անհրաժեշտ հետազոտությունները, իրենից ներկայացնում է ախտորոշիչ յատրոգենիա, որն իր հերթին կարող էր հանգեցնել բուժման սխալ տակտիկայի (բուժական յատրոգենիա) կամ սխալ վիրաբուժական տակտիկայի (վիրաբուժական յատրոգենիա):

Ա. Ռաշիդյանը նույնպես նշում է, որ հաշվի առնելով համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու հանրային վտանգավորության բարձր աստիճանը, անհրաժեշտ է ընդունել նաև քրեական օրենսգրքում համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու ինստիտուտի նախատեսման հրատապ գործնական անհրաժեշտությունը¹⁰:

Բժշկական օգնության նկարագրված թերությունները իրական պոտենցիալ հնարավորություն են ստեղծում յատրոգենիայի առաջացման համար, որը կարող է հանգեցնել է հիվանդի մահվան կամ առողջությանը ծանր վնաս պատճառելուն: Այսպիսով, խոսքը, այսպես կոչված, բժշկական աշխատողների «մասնագիտական տգիտության» կամ «մասնագիտական անբարեխղճության» շղթայի մասին է, որն առաջացնում է մեկ հանրորեն վտանգավոր հետևանք:

Վերը նշված գործողությունները չեն կարող որակվել որպես հանցակցություն, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այնպիսի երկրների քրեական օրենսգրքում, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Շվեդիան, ԱՄՆ-ը, նախատեսված է հանցակցություն ոչ միայն դիտավորյալ, այլև անզգույշ հանցագործության մեջ: Այնուամենայնիվ, վերը նշված դեպքում կարող ենք խոսել համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու մասին, որի ընթացքում մի քանի անձինք կատարում են մեկ հանցավոր արարք, կամ տեղի է ունենում մեկ հանցավոր արդյունք¹¹:

Ա. Ավետիսյանը համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելը սահմանում է որպես քրեափրավական երևույթ, որը իրենից ներկայացնում է հանցագործությունների մասնակիցների բազմակարծության այնպիսի տեսակ, որտեղ մի քանի անձինք անզգույշությամբ կատարում են մեկ հանցավոր արարք կամ առաջացնում են մեկ հանցավոր արդյունք: Համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու խնդիր-

¹⁰ *Рашидян А.А.*, Проблемы реализации уголовной ответственности за групповые преступления // автореф. дисс. канд. юрид. наук. ... Ер., 2017, с. 17.

¹¹ *Ермолович Я.Н.*, Неосторожное сопричинение вреда в преступлениях, сопряженных с нарушением специальных правил // *Право в Вооруженных Силах – Военно-правовое обозрение.* – 2019. – № 2 (259). – с. 76-86.

որ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում գիտական և տեխնոլոգիական առաջընթացի, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում տեխնիկական սարքավորումների աճի պայմաններում, որտեղ սպասարկումն անհնար է առանց տեխնիկական անձնակազմի հավաքական գործունեության¹²:

Որոշ գիտնականներ, համարելով, որ համատեղ հանցավոր գործունեությունը հնարավոր է նաև հանցակցության ինստիտուտից դուրս՝ համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու տեսքով, առաջարկում են ստեղծել համապատասխան քրեափրավական նորմ¹³: Վ. Ներսեսյանը նշում է. «Եթե մեկ անզգույշ հանցագործություն կատարելիս դրան փոխկապակցված կերպով մասնակցել են մի քանի անձինք, ինչը հանգեցրել է նրանց համար մեկ հանցավոր արդյունքի սպառնալիքի ստեղծմանը կամ առաջացմանը, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով, ապա կատարվածը պետք է որակվի որպես համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառել: Նման անձանցից յուրաքանչյուրին ամբողջությամբ մեղսագրվում է կատարված հանցագործության հանցակազմը: Հանցագործության կատարման մեջ մասնակցության տարբեր աստիճանը ազդում է այդ անձանց պատասխանատվության և պատժի տարբերակման և անհատականացման վրա»¹⁴:

Համատեղ անզգույշ գործունեությունը և հանցակցությունը նույնական երևույթներ չեն, չնայած դրանք ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ: Համատեղ անզգույշ գործունեությունն հանցակցության ինստիտուտից դուրս է, դրանք իրենց սոցիալական նշանակությամբ տարբերվում են¹⁵:

Մանկաբարձ-գինեկոլոգ Ն-ն և մանկաբարձուհի Վ-ն ծննդաբերության ժամանակ բժշկական օգնություն են ցուցաբերել մղման շրջանի՝ պտղի արտաքսման շրջանի վերջին փուլում ծննդաբերության վարման մարտավարության և տեխնիկայի խախտումներով: Միևնույն ժամանակ, ծննդաբերություն վարող Ն-ն պտղի արտաքսման ընթացքում ճնշում է գործադրել ծննդկանի արգանդի հատակին, իսկ Վ-ն, գլխի և ուսի հատվածի դժվար հեռացման դեպքում ցուցաբերել է ոչ ադեկվատ մանկաբարձական նպաստ՝ պտղի գլխի ձգում (կում) և ռոտացիա (պտտում) ուսերի հեռացման դժվարության պատճառով, ինչը բժշկական օգնության ցուցաբերման դեֆեկտ է: Արդյունքում ծնվել է կենդանի, լիարժեք երեխա՝ աջ վերին կապոցի վնասվածքով: Այս վնասվածքը որակվում է որպես առողջությանը ծանր վնաս, որը պատճառվել է անզգույշությամբ Ն-ի և Վ-ի կողմից: Դատարանի կողմից հաստատվել է, որ ծառայությունը մատուցվել է համատեղ, հանրորեն վտանգավոր հետևանքը տեղի է ունեցել համատեղ գործողությունների արդյունքում, բայց դատարանը հաստատված չի համարել հանցակցության առկայությունը: Իսկապես, Ն-ն մանկաբարձուհու հետ համատեղ ծննդօգնության ծառայություն է մատուցել: Սակայն ծառայության մատուցմանը համատեղ մասնակցելը դեռ չի նշանակում հանցագործության համատեղ կատարում: Ն-ն պետք է պատասխանատվություն կրի միայն այն հետևանքների համար, որոնք պատճառահետևանքային կապի մեջ են իր իսկ գործողու-

¹² Аветисян С.С., Проблемы правовой регламентации неосторожного сопричинения вреда // Десятая Годичная научная конференция (30 ноября – 4 декабря 2015г.): Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть I. – Ер.: Изд-во РАУ, 2016. – с. 39,

¹³ Бохан А.П., Петрашева Н.В., Соучастие в неосторожном преступлении: миф или реальность? // LEX RUSSICA. № 5 (114), май, 2016, с. 220.

¹⁴ Нерсисян В., Уголовная ответственность сопричинителей вреда по неосторожности // Российская юстиция. 1999, № 10, с. 44.

¹⁵ Нерсисян В.А., Неосторожная вина (в условиях научно-технической революции). Учебное пособие / Нерсисян В.А.; Отв. ред.: Сперанский И.А. – М.: РИО ВЮЗИ, 1988, с. 67.

թյունների հետ: Հետևանքների անմիջական պատճառն այն գործողություններն էին, որոնք ձեռնարկել է մանկաբարձուհի Վ.-ն (ձգում և ռոտացիա)¹⁶: Մանկաբարձության կանոնների համաձայն՝ անընդունելի է գլխի պտույտներով նպաստել կախիչների ներքին շրջադարձին¹⁷:

Համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է հոգեբանական փոխհարաբերություն համակատարողների միջև, որը կարող է դրսևորվել երկու մակարդակով. Առաջին մակարդակը ֆիզիկական փոխազդեցության փոխադարձ իրազեկումն է, այսինքն՝ այլ անձի կողմից օգնության փաստը, որը բնորոշ է քրեական պատասխանատվության չենթարկվող անձանց հետ համատեղ վնաս պատճառելուն և անուղղակի վնասին: Երկրորդ մակարդակը համատեղ կատարված արարքի անօրինական բնույթի փոխադարձ գիտակցումն է, որը բնորոշ է հանցագործությանը մեղսակցությանը և անզգույշ համատեղ վնաս հասցնելուն: Հանցագործների միջև հոգեբանական հարաբերությունների բացակայությունը, նույնիսկ նրանց կատարած արարքների ժամանակային և տարածքային համընկնմամբ (օրինակ, ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառահետևանքային կապերի միախառնմամբ), բացառում է համատեղ վնասը¹⁸:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է նշել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում յատրոգեն հանցագործության սուբյեկտիվ կողմի հաստատման կարևորությունը՝ կատարվածը ճիշտ որակելու և բուժաշխատողի պատասխանատվությունը անհատականացնելու համար: Առանձնացնելով բուժաշխատողների կողմից վնաս պատճառելու հիմքում ընկած երկու հիմնական բացասական երևույթները՝ առաջարկում ենք քրեական օրենսգրքում օրենսդրական մակարդակով նախատեսել այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «բժշկական (մասնագիտական) անբարեխղճությունը» և «բժշկական (մասնագիտական) տգիտությունը»: Նշվածն իր հերթին ենթադրում է բուժաշխատողների անբարեխղճության և տգիտության կանխարգելման արդյունավետ համակարգված պետական քաղաքականության իրականացում: Որպես հնարավոր ուղղություններ կարելի է նշել բուժաշխատողների որակավորման բարձրացման շարունակական ծրագրերի իրականացումը, հատկապես՝ բժշկական օգնության տրամադրման տեխնոլոգիաների կատարելագործման հետ կապված, բուժաշխատողների իրավագիտակցության բարձրացումը, նրանց անբարեխղճության վերացմանն ուղղված բժշկական էթիկայի դասընթացների համակարգված անցկացումը, կադրային քաղաքականության պատշաճ իրականացումը՝ բուժաշխատողների գերձանրաբեռնվածությունը և համապատասխան կադրերի պակասը բացառելու նպատակով:

Բուժաշխատողների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարումը վերահսկելու նպատակով նպատակահարմար է թվում բժշկական հաստատություններում օժանդակ մոնիտորինգի համակարգի ապահովումը:

Հաշվի առնելով յատրոգեն հանցագործությունների առանձնահատկությունները, սուբյեկտիվ կողմի հաստատման դժվարությունները՝ նպատակահարմար ենք համարում նախ՝ քննիչների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացումը, և երկրորդ՝ հետազայում յատրոգեն հանցագործությունների քննության համար մասնագիտաց-

¹⁶ Щепельков В.Ф., Стойко Н.Г., Доказывание причинной связи и вины по делам об ятрогенных преступлениях: комментарий к одному случаю // Вестник Санкт-Петербургского университета. Право, 2015, с. 85-86.

¹⁷ Жилыев Н.И., Жилыев Н.Н., Сопель В.В., Акушерство. Фантомный курс. Киев: Книга плюс, 2002, 240 с.

¹⁸ Сопричинение вреда без признаков соучастия в доктрине уголовного права: автореферат дис. ... кандидата юридических наук: 12.00.08 / Мелешко Денис Анатольевич; [Место защиты: Акад. Генер. прокуратуры РФ]. - Москва, 2016. - 29 с.

վաժ ստորաբաժանումների ստեղծումը:

Հաշվի առնելով ոչ թե մեկ, այլ մի քանի բուժաշխատողների հետևողական և համատեղ գործողությունների արդյունքում հիվանդների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու հասարակական վտանգավորության բարձր աստիճանը, առաջարկում ենք քրեական օրենսգրքում նախատեսել համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու մասին նորմը:

Ամփոփագիր: Սույն հոդվածում վերլուծության է ենթարկվել բուժաշխատողների կողմից կատարված յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ կողմի քրեաիրավական և քրեաբանական բնութագրերը: Հայաստանի Հանրապետության տարբեր գիտական աշխատությունների և դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա եզրակացություն է արվում, որ բուժաշխատողների կողմից կատարվող հանցագործությունների հիմքում, որպես կանոն, ընկած է անփութությունը: Միաժամանակ նշվում է բուժաշխատողների հանցավոր ինքնավստահությանը կատարվող հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանի բարձրացման մասին:

Առաջարկվում է բժշկական աշխատողների համակցված գործողությունների պատճառով անզգույշ վնաս պատճառելու նորմի նախատեսումը:

Յատրոգեն հանցագործությունների վերաբերյալ դատական պրակտիկայի նյութերը, Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները ծառայել են որպես իրականացված հետազոտության էմպիրիկ հիմք:

Հեղինակներն առաջարկում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ամրագրել բուժաշխատողների անզգույշության հիմնական դրսեւորումներից մեկը, այն է՝ մասնագիտական տգիտությունը, որը բնութագրվում է անձի մոտ համապատասխան մասնագիտական գիտելիքների, հմտությունների, կարողությունների բացակայությամբ:

Հաշվի առնելով իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում բժշկության ոլորտում հատուկ գիտելիքների բացակայությունը և յատրոգեն հանցագործությունների քննության ընթացքում առաջացած դժվարությունները՝ հեղինակներն առաջարկում են քննիչների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես նաև յատրոգեն հանցագործությունների քննության համար մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծում:

Annotation. This article provides criminal-legal and criminological characteristics of the subjective side of iatrogenic crimes committed by medical workers. Based on the analysis of various academic works and judicial practice of the Republic of Armenia, it is concluded that the crimes committed by medical workers, as a rule, are based on negligence. At the same time, it is noted that there is an increased degree of public danger of crimes committed due to the frivolity of medical workers. It is concluded that it is necessary to consolidate the norm of careless co-infliction of harm as a result of consistent actions of medical workers. Materials from judicial practice on iatrogenic crimes, the results of sociological surveys conducted in various regions of the Republic of Armenia served as the empirical basis for the study.

The authors put forward a proposal regarding the consolidation in the Criminal Code of the Republic of Armenia of one of the main manifestations of negligence of medical workers, namely, professional ignorance, characterized by a person's lack of relevant professional knowledge, skills, and abilities.

Taking into account the lack of special knowledge in the field of medicine among law enforcement officers and the difficulties encountered in the investigation of iatrogenic crimes, the authors proposed the organization of professional retraining courses for investigators, as well as the creation of specialized units for the investigation of iatrogenic crimes.

Аннотация. В настоящей статье приводится уголовно-правовая и криминологическая характеристика субъективной стороны ятрогенных преступлений, совершаемых медицинскими работниками. На основе анализа различных научных трудов и судебной практики Республики Армения делается вывод о том, что в основе совершаемых медицинскими работниками преступлений, как правило, лежит небрежность. Одновременно отмечается о

повышенной степени общественной опасности преступлений, совершаемых по легкомыслию медицинских работников. Делается вывод о необходимости закрепления нормы о неосторожном сопричинении вреда, как результата последовательных действий медицинских работников. Материалы судебной практики по ятрогенным преступлениям, результаты проведенных социологических опросов в различных областях Республики Армения послужили эмпирической базой проведенного исследования. Авторами выдвигается предложение относительно закрепления в уголовном кодексе Республики Армения одного из основных проявлений неосторожности медицинских работников, а именно – профессионального невежества, характеризующегося отсутствием у лица соответствующих профессиональных знаний, навыков, умений. Учитывая отсутствие специальных познаний в области медицины у сотрудников правоохранительных органов и затруднения, возникающие в процессе расследования ятрогенных преступлений, авторами предложена организация курсов профессиональной переподготовки для следователей, а также создание специализированных подразделений для расследования ятрогенных преступлений.

Բանալի բառեր - յափրոգեն հանցագործություններ, անազնվություն, փգիփություն, բուժաշխատող, յափրոգեն հանցագործության կանխարգելում, համակցված գործողությունների Կապրծառով անզգույշ վնաս Կապրծառե-
ԼԼ:

Keywords: iatrogenic crimes, dishonesty, ignorance, medical worker, prevention of iatrogenic crime, careless co-infliction of harm.

Ключевые слова: ятрогенные преступления, недобросовестность, невежество, медицинский работник, предупреждение ятрогенной преступности, неосторожное сопричинение вреда.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Пашинян Г.А., Ившин И.В., Профессиональные преступления медицинских работников против жизни и здоровья. – М.: Медицинская книга, 2006. – 196 с.
2. Сенокосова Е.К., Проблемы криминологической и уголовно-правовой оценки профессиональной некомпетентности и недобросовестности при оказании медицинской помощи // Вестник Омского университета. Серия «Право», 2015. № 3 (44). – С. 171-178.
3. Пашинян А.Г., Ившин И.В., Профессиональная неосторожность деяний медицинских работников // Медицинский совет, выпуск № 2, 2009. – С. 10.
4. Нагорная И.И., Уголовно-правовая охрана жизни и здоровья человека при оказании медицинских услуг: сравнительно-правовой анализ // Уголовно-правовая охрана жизни и здоровья человека при оказании медицинских услуг: сравнительно-правовой анализ, 2014. – 215 с.
5. Лунеев В.В., Преступное поведение: мотивация, прогнозирование, профилактика. – М., 1980. – 137 с.
6. Гордеев В.И., Филимонов А.Е., Грань неосторожности и умысла в квалификации деяний медицинских работников при невежественном (безграмотном) исполнении ими своих профессиональных обязанностей // Уголовная ответственность медицинских работников: вопросы теории и практики. Сборник статей по материалам Всероссийского научно-практического круглого стола: 3 марта 2017 г. // Северо-Западный филиал ФГБОУВО «Российский государственный университет правосудия» / Под общ. ред. Е.Н. Рахмановой, доктора юридических наук, доцента. – СПб: ИД «Петрополис», 2017. – 216 с.
7. Гринберг М.С., Преступное невежество // Вестник Омского университета. 2011. – С. 186-191.
8. Рарог А.И., Субъективная сторона и квалификация преступлений. – М., 2001. – 133 с.
9. Рашидян А.А., Проблемы реализации уголовной ответственности за групповые преступления // Автореф. дисс. канд. юрид. наук. ... – Ер., 2017. – 22 с.
10. Ермолович Я.Н., Неосторожное сопричинение вреда в преступлениях, сопряженных с нарушением

- специальных правил // Право в Вооруженных Силах – Военно-правовое обозрение. – 2019. – № 2 (259). – С. 76-86.
11. Аветисян С.С., Проблемы правовой регламентации неосторожного сопричинения вреда // Десятая Годичная научная конференция (30 ноября – 4 декабря 2015 г.): Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть I. – Ер.: Изд-во РАУ, 2016. – С. 39-43.
12. Бохан А.П., Петрашева Н.В., Соучастие в неосторожном преступлении: миф или реальность? // LEX RUS-SICA. № 5 (114), май 2016. – С. 217-224.
13. Нерсесян В., Уголовная ответственность сопричинителей вреда по неосторожности // Российская юстиция. 1999. № 10 – С. 44-45.
14. Нерсесян В.А., Неосторожная вина (в условиях научно-технической революции): Учебное пособие / Нерсесян В.А.; Отв. ред.: Сперанский И.А. - М.: РИО ВЮЗИ, 1988. – 96 с.
15. Щепельков В.Ф., Стойко Н.Г., Доказывание причинной связи и вины по делам об ятрогенных преступлениях: комментарий к одному случаю // Вестник Санкт-Петербургского университета. Право. 2015. – С. 84-93.
16. Жиляев Н.И., Жиляев Н.Н., Сопель В.В., Акушерство. Фантомный курс. – Киев: Книга плюс, 2002. – 240 с.
17. Мелешко Д.А., Сопричинение вреда без признаков соучастия в доктрине уголовного права// автореферат дис. ... кандидата юридических наук : 12.00.08 / Мелешко Денис Анатольевич; [Место защиты: Акад. Генер. прокуратуры РФ]. - Москва, 2016. – 29 с.

Սարգսյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ adelina-sargsyan@mail.ru:

Հակոբյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ anush.hakobyan@rau.am:

Ներկայացվել է խմբագրություն 12.02.2024 թ., տրվել է գրախոսության 12.02.2024 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ծաղիկյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-62>

ՀՌԻՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ*

HRIPSIME KHACHATRYAN

*PhD, Associate Professor, Police Lieutenant Colonel,
Head of the Department of Criminal Law and Criminology of the Educational
Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia*

РИПСИМЕ ХАЧАТРЯН

*к.ю.н., доцент, подполковник полиции,
начальник кафедры уголовного права и криминологии
Образовательного комплекса МВД РА*

**ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ԵՎ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

**COMPULSORY EDUCATIONAL MEASURES IN THE CONTEXT OF
THE FORMER AND NEW CRIMINAL CODES OF THE REPUBLIC OF
ARMENIA (COMPARATIVE LEGAL ANALYSIS)**

**ПРИНУДИТЕЛЬНЫЕ МЕРЫ ВОСПИТАТЕЛЬНОГО ХАРАКТЕРА В
КОНТЕКСТЕ УТРАТИВШЕГО СИЛУ УК И НОВОГО УК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)**

Ներածություն

Հանցավորության կանխարգելման առաջատար ուղղություններից է անչափահասների հանցավորության կանխարգելումը: Ինչպես նշում է Ա.Դուշկինը, այն բարդ գործընթաց է՝ իրենից ներկայացնող պետական և սոցիալական բարդ համալիր առաջադրանք, որը հնարավոր է լուծել միայն օրենսդիր և գործադիր իշխանության, իրավապահ մարմինների, այլ պետական մարմինների և հասարակության համատեղ ջանքերով¹: Այդ բարդ առաջադրանքում

¹ Տե՛ս *Душкин А. С.*, Психолого-педагогические средства и меры предупреждения преступности несовершеннолет-

իր ուրույն տեղն ունի անչափահասների քրեական պատասխանատվության հետ կապված հիմնահարցը:

Նկատենք՝ անչափահասների նկատմամբ ազատագրկման ձևով պատժի կիրառումը քրեակատարողական քաղաքականության մարտավարական ուղղություն է: Ինչպես ցույց է տալիս մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները², հանցանք կատարած անչափահասների քրեական պատասխանատվությունն իրացվել է, մեծամասամբ, ազատագրկման ձևով պատիժ նշանակելով, սակայն պատիժը կրելուց հետո կարճ ժամանակ անց կամ փորձաշրջանի ընթացքում անչափահասը կատարում է նոր հանցանք: Ինչն արդյունավետության իմաստով մտահոգիչ է և նոր լուծում է պահանջում:

Անչափահասների քրեական պատասխանատվության ինստիտուտը մշտապես գտնվում է օրենսդրի ուշադրության կենտրոնում: Դա վկայում է այն մասին, որ օրենսդիրը փորձում է հնարավորինս կատարելագործել այն և դրանով իսկ ձևավորել առավել արդյունավետ պրակտիկա:

Հիմնական հետազոտություն

Մասնագիտական գրականության մեջ քրեական պատասխանատվությունից ազատելը բնորոշվում է, որպես պետական իրավասու մարմնի որոշում՝ կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած անձի նկատմամբ պատիժ կամ քրեափրավական ներգործության այլ միջոց չկիրառելու մասին³:

Անչափահասների առնչությամբ օրենսդրությունը նախատեսում է ոչ միայն պատժի նշանակման, այլ նաև քրեական պատասխանատվությունից և պատժից ազատման առանձնահատկություններ, ինչն ակներև է քրեական քաղաքականության բարեփոխումների արդյունքում ընդունված նոր ՀՀ քրեական օրենսգրքում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008)11 հանձնարարականում սահմանված՝ «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» կետ 2-ի վերլուծությունից հետևում է, որ անչափահասների նկատմամբ պատիժներ կամ նրանց հանցավոր վարքագծին արձագանքելու այլ եղանակներ նշանակելիս առաջնահերթություն պետք է տրվի դաստիարակչական բնույթի, կանխարգելիչ և վերականգնողական միջոցներին: Այսինքն, եթե հնարավոր է պատժի նպատակներին հասնել անչափահասի նկատմամբ ոչ թե պատիժ, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով, ապա պետք է ընտրվի քրեափրավական արձագանքման այդ տարբերակը⁴:

Կարևոր ենք համարում նաև արձանագրել, որ վերոնշյալ հանգամանքն արձանագրվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) մի շարք դատական ակտերում⁵:

них// Проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовно-исполнительной системы России: Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 27 апреля 2012 г.) / Отв. ред. В.Ф. Лапшин. – Вологда: ВИПЭ ФСИН России, 2012, էջ 92:

² Տե՛ս օրինակ՝ *Խաչատրյան Հ. Մ.*, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. Ատենախոսություն, էջեր 114-152:

³ Տե՛ս *Лобова Е.Н.*, Преступность несовершеннолетних в вопросы освобождения их от уголовной ответственности// Российский следователь, 2009, N10, էջ 19:

⁴ Տե՛ս «European Rules on Juvenile Offenders Subject to Penalties or Other Measures», Council of Europe Committee of Ministers Recommendation No. CM/Rec (2008)11, [https://sites.unicef.org/tdad/councilofeuroperec08\(1\).pdf](https://sites.unicef.org/tdad/councilofeuroperec08(1).pdf).

⁵ Տե՛ս T. And V. v. The United Kingdom case of ECHR, Charlotte Walsh. Youth Justice and Neuroscience: A Dual-Use Dilemma// British Journal of Criminology (2011) 51, էջ 21-39:

Վ. Ա. Վոլկովի կարծիքով՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները կարելի է դիտարկել որպես անչափահասների հանցավորության դեմ պայքարի փոխզիջումային կամ այլընտրանքային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս հասնելու քրեական պատասխանատվության նպատակներին ոչ ավանդական եղանակով⁶:

Խոսքը վերաբերում է հանցանք կատարած անչափահասների նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներին (այսուհետ՝ նաև ԴԲՀՄ): Հարկ է նկատել, որ ի տարբերություն 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի, 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով փոփոխության է ենթարկվել ԴԲՀՄ-ների տեսակներն ու բովանդակությունը: Մասնավորապես, նախկին օրենսդրության համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող էր ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտներ, որ նրա ուղղվելը հնարավոր էր ԴԲՀՄ-ների կիրառմամբ, ընդ որում՝ անչափահասի նկատմամբ դատարանը կարող էր նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով: Ինչպես նաև դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող էր նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ: Բացի դրանից՝ անչափահասի նկատմամբ կարող էր միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց:

Նոր օրենսդրության համաձայն՝ եթե անչափահասն առաջին անգամ է մեղադրվում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը հիմնավորում է, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է ԴԲՀՄ կիրառելով:

Գործող իրավակարգավորումներով դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հնարավոր է քննարկել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների պարագայում, սակայն կարծում ենք, հաշվի առնելով անչափահասների «քրեականացման» բարձր վտանգը, կարելի օրենսդրական նման արգելքը վերացնել, և անկախ հանցանքի ծանրությունից Դատարանին վերապահել՝ որոշելու քրեական պատասխանատվությունից ազատելու կամ չազատելու նպատակահարմարության հարցը:

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները հիմնված են ոչ թե պատժի, այլ ինչպես բխում է իրենց անվանումից, դաստիարակության վրա: Այդ միջոցներն իրականացվում են անչափահասի կողմից իր գործողությունների բացասական հետևանքները գիտակցելու և հետագայում նմանատիպ արարքները կանխարգելելու համար⁷:

Այնքանով, որքանով անչափահասներն իրենց տարիքով և հուզական զարգացման աս-

⁶ Տե՛ս *Волков К.А.*, Специальный вид освобождения от уголовной ответственности несовершеннолетних: вопросы теории и судебной практики // Российский следователь. 2015-9, с. 15-17:

⁷ Տե՛ս *Пригожина В.С.*, Особенности освобождения несовершеннолетних от уголовной ответственности // Российский следователь. 2016-8, էջ 18:

տիճանով համարվում են հատուկ սուբյեկտ, հետևաբար քրեաիրավական նորմերը, որոնք կարգավորում են քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունները, աչքի են ընկնում իրենց լոյալությամբ, այլ կերպ այն ենթադրում է քրեական պատասխանատվությունից ազատելու առավել լայն հնարավորություն⁸:

Նմանօրինակ ինստիտուտի գոյությամբ պետությունն ապահովում է անչափահասի իրավունքները, գործնական տեսանկյունից հնարավորություն է տալիս անկանոն հոգեկան աշխարհ ունեցող անչափահասին գիտակցելու, թե ինչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ իր արարքի հետևանքով, իսկ մարդասիրության տեսանկյունից՝ անչափահասին տրվում է հնարավորություն ապագայում դատապարտվածի պիտակին չարժանանալու համար:

Անչափահասներն աչքի են ընկնում պակաս շրջահայացությամբ, ինչը պատճառ է դառնում հանցագործության՝ չմտածելով հետևանքների մասին: Անչափահասների հոգեբանական դիմագիծը գտնվում է հոգեբանների ուշադրության կենտրոնում: Առավել հաճախ այս կատեգորիայի անձանց շրջանում գերիշխող տեղ է զբաղեցնում այնպիսի բացասական գծեր, ինչպիսիք են անպատասխանատվությունը, ագրեսիվությունը, նեգատիվիզմը, ծուլությունը, որոնք, ընդհանուր առմամբ, բացասաբար են անդրադառնում անչափահասների վարքի վրա⁹:

Հետևաբար կարելի է արձանագրել, որ անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատուկ ինստիտուտի ներդրմամբ պետությունը նպատակ է ունի ապահովել անչափահասի բազմակողմանի զարգացումը:

Ըստ գործող կարգավորումների՝ անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1) տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով,

2) պատճառած փաստը հարթելու պարտականություն դնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում,

3) ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով,

4) ուսման անցնելը, ուսումը շարունակելը, տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը,

5) հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը:

Ինչպես տեսնում ենք, ԴԲՀՄ-ները փոփոխվել են և՛ քանակական, և՛ բովանդակային առումով: Նախկինում որպես ԴԲՀՄ կարող էր կիրառվել նախազգուշացում, ինչը նոր օրենսդրությամբ նախատեսված չէ: Իսկ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով ԴԲՀՄ-ը վերափոխվել է որպես տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁹ Տե՛ս *Яхонтова О.С., Яхонтов Р.Н.*, Отдельные аспекты личности несовершеннолетнего преступника// Уголовное законодательство: вчера, сегодня, завтра. 2021, էջ 280:

հանձնելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով: Այսինքն՝ դատարարակազմակազմի բնույթի հարկադրանքի այս միջոցի դեպքում փոփոխվել է ոչ միայն այն կիրառելու ժամկետը, այլ նաև այն սուբյեկտների ցանկը, ովքեր պատասխանատու են այս միջոցի կիրառման համար: Կարծում ենք, այս փոփոխությունն անհրաժեշտ էր, քանի որ նախկինում դատարանը, կիրառելով ԴԲՀՄ, անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողությունը դնում էր ծնողների և համապատասխան վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա: Մեր նախկին հետազոտության¹⁰ շրջանակում արդեն անդրադարձել ենք այս հարցին՝ նշելով, որ այն անարդյունավետ է, քանի որ ծնողներն առանց այդ պարտավորության էլ անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնում են, եթե դա արդյունավետ լիներ, ապա անչափահասը չէր հայտնվի այդ կարգավիճակում: Բացի դրանից՝ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դատարարական, կրթության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման մասին:

Այս միջոցը տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելու՝ նշված մարմինների պահանջները կատարելու պարտականություն դնելն է: Տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինն անչափահասի անձի կարիքների անհատական գնահատման հիման վրա պետք է կազմի վերասոցիալականացման ծրագիր, որը և կիրականացվի նշանակված ժամկետում:

Դատարարակազմակազմի բնույթի հարկադրանքի հաջորդ միջոցը՝ պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելն է՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում: Ի տարբերություն նախկին օրենսդրության՝ որտեղ պատճառած վնասը հարթելու ժամկետն օրենսդրորեն սահմանված չէր և թողնված էր դատարանին՝ նոր օրենսդրությամբ հստակեցվել է պատճառած վնասը հարթելու առավելագույն ժամկետը, որն օրենսդիրը սահմանել է առավելագույնը 6 ամիս ժամկետում:

Դատարարակազմակազմի բնույթի հարկադրանքի այս միջոցը կիրառվում է՝ հաշվի առնելով անչափահասի և նրա ընտանիքի գույքային դրությունը, ինչպես նաև նրա համապատասխան հմտությունները կամ աշխատանքային ունակությունները, որպեսզի անչափահասն ինքնուրույն կարողանա հարթի պատճառված վնասը:

Դատարարակազմակազմի բնույթի հարկադրանքի հաջորդ միջոցն է՝ ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով: Այստեղ ևս, նախկին օրենսդրության համեմատ փոփոխության է ենթարկվել այս միջոցի կիրառման առավելագույն ժամկետը, որը, նախկին 6 ամսվա փոխարեն, սահմանվել է առավելագույնը 1 տարի ժամկետ: Այս միջոցը կարող է նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ որոշակի անձանց հետ շփվելու կամ օրվա որոշակի ժամերին տնից դուրս գտնվելու առանց տեղական ինքնակառավարման դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում:

Դատարարակազմակազմի բնույթի հարկադրանքի հաջորդ միջոցն է՝ ուսման անցնելը, ուսումը շարունակելը, տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը: Այս միջոցը նախկինում, որպես ինքնուրույն միջոց, նախատեսված չի եղել, սակայն

¹⁰ Տես *Խաչատրյան Հ.*, Անչափահասների խմբային հանցավորություն, Մենագրություն, 2020 թ., էջ 216:

այն կիրառվել է ժամանցի ազատության սահմանափակման և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանման համատեքստում: Սակայն նոր օրենսդրությամբ այն նախատեսվել է որպես դաստիարակչական բնույթի հարկադրանքի առանձին միջոց:

Նշված միջոցի բովանդակությունն այն է, որ անչափահասին կարող են աջակցել ուսումնական հաստատություն վերադառնալու կամ ուսում անցնելու հարցում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պարտավորեցնեն դա իրականացնելուն, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու պահանջ ներկայացնեն, իհարկե օրենսդիրը նշում է 21 տարին չլրացած անձին, սակայն կարծում ենք, որ այն վերաբերելի է նաև անչափահասին:

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի հաջորդ միջոցն է՝ հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը: Տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններն առանձին կամ համագործակցելով միմյանց և այլ մարմինների հետ կազմում են հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագիր կամ միջոցառում, կամ վերականգնողական ծրագիր կազմում է վերականգնողական հաստատությունը, և նման ծրագրի կամ միջոցառման մասնակցությունը պարտադիր է անչափահասի նկատմամբ:

Ակնհայտ է, որ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքն առավել իրատեսական է մոտեցել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների սահմանմանը, դրանց մեջ կարևորելով հատկապես կրթության բաղադրիչը¹¹:

Ուշագրավ է այն փաստը, որ ի տարբերություն նախկին օրենսդրության, որտեղ ԴԲՀՄ-ներն ամրագրող 91-րդ հոդվածից բխում է, որ անչափահասի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց, իսկ նոր օրենսդրության համապատասխան նորմի 3-րդ մասն ամրագրում է, որ 21 տարին չլրացած անձի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց: Այսինքն, ստացվում է, որ այդ նորմի տառացի մեկնաբանմամբ անչափահասի նկատմամբ կարող է կիրառվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մեկ միջոց:

Սակայն, կարծում ենք, որ այս դրույթը պետք է տարածվի նաև անչափահասների նկատմամբ, քանի որ ԴԲՀՄ-ների վերլուծությունից պարզ է դառնում, որ միայն մեկ միջոցի ընտրությունը հաճախ ոչ միշտ կարող է հանգեցնել դրական արդյունքի: Մասնավորապես, եթե, օրինակ՝ անհրաժեշտ է կիրառել պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելը, ապա, հարց է առաջանում արդյո՞ք, օրինակ, առանց տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելու կարող ենք ունենալ դրական արդյունք: Կարծում ենք, որ միայն մեկ միջոցի ընտրությունը բավարար չէ, և կոնկրետ դեպքով դատարանը կարող է միաժամանակ անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի մեկից ավելի հարկադրանքի միջոց նշանակի:

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը հնարավոր է իրակա-

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022թ., էջ 204:

նացնել միայն մեկ անգամ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքն ուղղակիորեն ամրագրում է, որ ԴԲՀ-ի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նոր հանցագործության համար ազատվել քրեական պատասխանատվությունից՝ ԴԲՀ կիրառելով:

Իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի կողմից արարքը կատարվի մինչև 2021 թվականն ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, մինչդեռ վերջինս նկատմամբ վարույթն իրականացվի գործող կարգավորումներով: Նմանօրինակ պարագաներում իրավակիրառը կարող է բախվել քրեաիրավական նորմի ընտրության հարցի հետ, եթե պարզի, որ, օրինակ, գործող կարգավորումներն առավել բարենպաստ են հանցանք կատարած անձի համար, քան արարքի պահին գործողը: Սակայն, առաջ ընկնելով, պետք է փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ մինչև եզրափակիչ դատավարական ակտ կայացնելը հետադարձ ուժ ունի արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունը: Իսկ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա **հատկապես նախատեսված է օրենքով:**

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված դրույթը ակնհայտորեն չի համարվում ընդ արարքի հանցավորությունը վերացնող և ընդ պատիժը մեղմացնող օրենք, այլ համարվում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք, իսկ նման օրենքը հետադարձ ուժ ունի, եթե դա հատկապես նախատեսված է օրենքով:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքն օրինական ուժի մեջ դնելու մասին 2022 թ. հունիսի 9-ին ընդունված օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ հատուկ նշում առկա չէ 2021 թ. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածին հետադարձ ուժ տալու վերաբերյալ¹²:

Իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել նաև այնպիսի իրավիճակներ, երբ անչափահաս տարիքում հանցանք կատարելու համար գործի քննության վերջնական փուլում անձը դառնա 22 տարեկան: Ընդ որում՝ Դատարանը հանգի այն եզրահանգման, որ անձը կարող էր ազատվել քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ սահմանված դրույթի կիրառմամբ, եթե վերջնական ակտը կայացվեր ավելի վաղ:

Կարծում ենք՝ նմանաբնույթ դեպքերում, երբ անչափահաս տարիքում հանցանքի կատարման առնչությամբ նախաքննությունն ու դատաքննությունն անցել են հատուկ վարույթներով, դատարանների կողմից այս ինստիտուտի հնարավոր կիրառմանը չանդրադառնալն այն պատճառաբանությամբ, որ վերջնական ակտ կայացնելիս մեղադրյալի 21 տարին լրացել է, չի բխում անձի իրավունքից, քանզի եթե, օրինակ՝ դատաքննությունն անցներ ողջամիտ ժամկետում, հետևաբար անչափահաս տարիքում հանցանք կատարած անձը, որի 21 տարին լրացած չէր լինի դատաքննության ավարտին, *iter alia*, կունենար ռեալ հնարավորություն քրեական պատասխանատվությունից ազատվելու նաև խնդրո առարկա հատուկ նորմի ուժով:

Գտնում ենք, որ նմանօրինակ իրավիճակում իրավունքի գերակայության պահպանման սկզբունքից ելնելով դատարանները կարող են քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված ինստիտուտի կիրառման հնարավորությունը, ու եթե իրավակիրառը հանգի այն եզրահանգման, որ մեղադրյալն այդ նորմի ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվության, կարող է որոշում կայացնել անձին քրեական պատաս-

¹² Ի տարբերություն դրա՝ ՀՀ քրեական օրենսգրքն օրինական ուժի մեջ դնելու մասին 2022թ. հունիսի 09-ին ընդունված օրենքում հատուկ նշում կա առ այն, որ դատավաճառությունը կարգավորող նորմին, որպես այլ կերպ բարելավող նորմի, պետք է տալ հետադարձ ուժ:

խանատվությունից ազատելու՝ առանց ԴԲՀՄ-ներ նշանակելու, քանզի այդ միջոցներն օրենքի տառացի մեկնաբանությամբ, ինչպես նաև դրանց բովանդակության հաշվառմամբ, կարող են կիրառվել միայն անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի նկատմամբ:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով վերլուծությունը, ցանկանում ենք ընդգծել, որ անչափահասների քրեական պատասխանատվությունից ազատելու այս կարևորագույն ինստիտուտի օրենսդրական կատարելագործման քաղաքականությունն ակներև է, ինչն ապագայում կապացուցվի նաև պրակտիկայում:

Այսպիսով, անչափահասներին կամ 21 տարին չլրացած անձանց դաստիարակչական միջոցներ կիրառելով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի լավարկման նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասից հանել «ոչ մեծ կամ միջին ծանրության դրույթը», իսկ հոդվածի 3-րդ մասում կատարել լրացում, այն է՝ «անչափահասի կ 21 տարին չլրացած անձի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց»:

Ամփոփագիր: Հեղինակն աշխատությունը նվիրել է անչափահասների հանցավորության կանխարգելման և անչափահասների վերասոցիալականացման համար կարևոր նշանակություն ունեցող հարցի՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների համեմատադրական վերլուծությանը՝ նախկին և գործող քրեական օրենսգրքերի համատեքստում:

Կատարված ուսումնասիրության արդյունքում անդրադարձ է կատարվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների քանակական և որակական փոփոխություններին, քննարկվել է այդ փոփոխությունների դրական և բացասական նշանակությունները: Մասնավորապես, գործող օրենսդրությամբ նախատեսված է դաստիարակչական բնույթի հարկադրանքի հինգ միջոց՝ նախկին չորսի փոխարեն, բացի դրանից՝ նախազգուշացումը, որպես հարկադրանքի միջոց, առհասարակ դուրս է եկել, իսկ մնացած երեքն էլ բովանդակային առումով կամ լրացվել են, կամ փոփոխվել: Նախատեսվել են երկու նոր միջոցներ՝ ուսման անցնելը, ուսումը շարունակելը, տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը և հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը: Առաջինը, որպես ինքնուրույն միջոց, նախատեսված չի եղել նախկին օրենսդրությամբ, սակայն կիրառվել է ժամանցի ազատության սահմանափակման և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանման համատեքստում, իսկ երկրորդ միջոցը նորամուծություն է ՀՀ օրենսդրության համար:

Հետազոտության արդյունքները հեղինակի կողմից ամփոփվել են գործնական նշանակություն ունեցող եզրահանգումների ու առաջարկությունների ձևաչափով:

Annotation. The author devoted his work to a comparative legal analysis of the issue of importance for the prevention of juvenile delinquency and the resocialization of juveniles, and compulsory educational measures in the context of the former and current criminal codes.

As a result of the conducted research, quantitative and qualitative changes in compulsory educational measures were touched upon, and the positive and negative meanings of these changes were discussed. In particular, the current legislation provides for five compulsory educational measures instead of the previous four, in addition, warning as a compulsory educational measure is generally excluded, and the remaining three are either supplemented or modified in content. Two new measures were envisaged: completion of studies, continuation of studies, admission to work through the mediation of a municipality and participation in a special educational, sports, cultural or social program or event or rehabilitation program in a rehabilitation institution. The first measure was not envisaged for by previous legislation as an

independent measure, but was applied in the context of restricting leisure freedom and establishing special requirements for the behavior of juveniles, and the second measure is an innovation in the legislation of the RA.

The results of the study were summarized by the author in the format of conclusions and suggestions of practical importance.

Аннотация. Автор посвятил работу сравнительно-правовому анализу вопроса, имеющего важное значение для предупреждения преступности несовершеннолетних и ресоциализации несовершеннолетних, а именно принудительным мерам воспитательного характера, в контексте утратившего силу и действующего уголовных кодексов.

В результате проведенного исследования были затронуты количественные и качественные изменения принудительных мер воспитательного характера, обсуждены положительные и отрицательные значения этих изменений. В частности, в действующем законодательстве предусмотрено пять мер принудительного характера, а в утратившем силу кодексе были предусмотрены четыре меры, кроме того, предупреждение как мера принуждения отсутствует, а остальные три по содержанию были либо дополнены, либо изменены. Предусмотрены две новые меры: прохождение обучения, продолжение обучения, поступление на работу при посредничестве органа местного самоуправления и участие в специальной образовательной, спортивной, культурной, общественной программе или программе реабилитации в реабилитационном учреждении. Первая мера не была предусмотрена предыдущим законодательством как самостоятельная мера, но применялась в контексте ограничения свободы досуга и установления особых требований к поведению несовершеннолетних, а вторая мера является нововведением в законодательстве РА.

Результаты исследования были обобщены автором в формате выводов и предложений, имеющих практическое значение.

Բանալի բառեր - անչափահաս, քրեական օրենսգիրք, քրեական պատասխանատվություն, դատարան, դատարանական ընդհանուր հարկադրանքի միջոցներ, պատիժ:

Keywords: juvenile, Criminal Code, criminal liability, court, compulsory educational measures, punishment.

Ключевые слова: несовершеннолетний, Уголовный кодекс, уголовная ответственность, суд, принудительные меры воспитательного характера, наказание.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Խաչատրյան, Անչափահասների խմբային հանցավորություն, Մենագրություն, 2020 թ., էջ 216:
2. Հ. Մ. Խաչատրյան, «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում», թեկ. ատենախոսություն, էջեր 114-152:
3. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թ., էջ 204:
4. “European Rules on Juvenile Offenders Subject to Penalties or Other Measures”, Council of Europe Committee of Ministers Recommendation No. CM/Rec (2008)11, [https://sites.unicef.org/tdad/councilofeuropejrec08\(1\).pdf](https://sites.unicef.org/tdad/councilofeuropejrec08(1).pdf)
5. T. And V. v. The United Kingdom case of ECHR, Charlotte Walsh. Youth Justice and Neuroscience: A Dual-Use Dilemma//. British Journal of Criminology (2011) 51, էջ 21–39:
6. Волков К. А., Специальный вид освобождения от уголовной ответственности несовершеннолетних: вопросы теории и судебной практики //Российский следователь, 2015-9, էջեր 15-17:
7. Душкин А.С., Психолого-педагогические средства и меры предупреждения преступности несовершеннолетних// Проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирова-

ния уголовно-исполнительной системы России: Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 27 апреля 2012 г.) / Отв. ред. В.Ф. Лапшин. – Вологда: ВИПЭ ФСИН России, 2012, էջեր 114-152:

8. Лобова Е. Н., Преступность несовершеннолетних в вопросы освобождения их от уголовной ответственности// Российский следователь, 2009, N10, էջ 19:

9. Пригожина В. С., Особенности освобождения несовершеннолетних от уголовной ответственности // Российский следователь. 2016-8, էջ 18:

10. Яхонтова О. С., Яхонтов Р. Н., Отдельные аспекты личности несовершеннолетнего преступника// Уголовное законодательство: вчера, сегодня, завтра. 2021, էջ 280:

Խաչատրյան Հ. – ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, էլիասցե՝ hripsimemheri@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 15.05.2024 թ., տրվել է գրախոսության 15.05.2024 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մելիքսեթյանի կողմից, ընդունվել է տպագրության 16.07.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-72>

ՆԱԻՐԱ ՅՕԳՐԱԲՅԱՆ

*кандидат юридических наук, доцент,
заведующая кафедрой уголовного права и уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета*

ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ*

NAIRA ZOHRABYAN

PhD in Law, Associate Professor,
Head of the Department of Criminal Law and Criminal Procedure Law,
Institute of Law and Politics of the Russian-Armenian University

СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ К ОПРЕДЕЛЕНИЮ КОНКУРЕНЦИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

MODERN APPROACHES TO THE DEFINITION OF COMPETITION OF CRIMINAL LAW NORMS

Введение

Прежде чем представить разные подходы к определению понятия «конкуренция», необходимо уяснить смысловую нагрузку представленного термина:

- конкуренция – соперничество; борьба за достижение больших выгод, преимуществ¹;
- конкуренция (от лат. *concurrentia*) – соперничество, любое антагонистическое отношение, связанное с борьбой за существование, за доминирование, за пищу, пространство и другие ресурсы между организмами (видами, особями)²;
- конкуренция (позднелатинское *concurrentia*, от *concurrere* ‘сталкиваться’) – соперничество, соревнование людей, групп, организаций в достижении сходных целей, лучших результатов в определенной общественной сфере.³

¹ Ожегов С.И., Шведова Н.Ю., Толковый словарь русского языка. – М. – 1992. – с. 284.

² Экологический энциклопедический словарь. – Кишинев: Главная редакция Молдавской советской энциклопедии. И.И. Дедю. – 1989.

³ Современная энциклопедия / [Авт.-сост. Гусев Игорь Евгеньевич]. – Минск: Харвест. – 1999.

Конкуренция – объективное правовое явление, оно существовало в разные периоды становления как армянского права, так и российского права. Конкуренция способствовала систематизации законодательства, устранению противоречий. Изучение различных подходов к определению понятия «конкуренция» и его наличию в уголовном праве и законодательстве, является предпосылкой совершенствования уголовного законодательства.

Отметим, что некоторые юристы в принципе не признают такую правовую категорию. И лишь доктрина уголовного права обращается к понятию, формам и видам конкуренции уголовно-правовых норм. Отметим, что впервые в УК РА в статье 52 представлены некоторые из видов конкуренции уголовно-правовых норм.

Основное исследование

Рассмотрим доктринальные подходы к определению конкуренции уголовно-правовых норм.

Под конкуренцией норм понимается наличие нескольких уголовных законов, в равной мере предусматривающих наказуемость данного деяния.⁴

При конкуренции имеет место одно преступное деяние, которое с большей или меньшей полнотой охватывается признаками каждой из двух или более уголовных норм.⁵

Конкуренция уголовно-правовых норм имеет место быть в том случае, когда совершено одно деяние, подпадающее под признаки двух и более уголовно-правовых норм.⁶

Под конкуренцией уголовно-правовых норм предусмотрено такое положение, когда одно и то же преступление охватывается несколькими статьями Особенной части УК, из которых для квалификации должна быть применена лишь одна статья, содержащая все признаки соответствующего состава преступления.⁷

Как видно из вышеприведенных определений, суть сводится к выбору одной нормы при наличии охвата конкретного деяния двумя или несколькими уголовно-правовыми нормами.

Конкуренция норм – это регулирование одного уголовно-правового отношения одновременно двумя или более нормами, приоритетной из которых всегда является одна норма.⁸

Под конкуренцией уголовно-правовых норм понимается наличие двух и более уголовно-правовых норм, в равной мере претендующих на применение при квалификации одного конкретного деяния. В то время как коллизия – это столкновение двух или нескольких противоположных норм, претендующих на применение.⁹

В то же время в научной доктрине встречаются иные мнения, в частности:

«Конкуренция уголовно-правовых норм – это коллизия».¹⁰

Авторы вышеуказанного определения искажают содержание термина «коллизия», под которым понимается столкновение норм права, разногласие, противоречие. Считаем

⁴ Герцензон А.А., Квалификация преступления. – М. – 1947. – с. 4.

⁵ Малков В.П., Совокупность преступлений. – Казань. – 1974. – с. 178.

⁶ Кудрявцев В.Н., Теоретические основы квалификации преступлений. – М.: Государственное изд-во юридической литературы. – 1963. – с. 243.

⁷ Пинчук В.И., Квалификация преступлений при их совокупности: конспект лекций. – Л. – 1988. – с. 42.

⁸ Иногамова-Хегай Л.В., Конкуренция норм уголовного права: диссер. на соискание д.ю.н. – М. – 1999. – с. 24.

⁹ Кондратьева И.О., Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых норм. Тр. Совр. гуманитар. акад. – М.. – 2010, №7. – С.14.

¹⁰ Черданцев А.Ф., Толкование советского права. – М.: Юридическая литература. – 1979. – с. 5. Власенко Н.А., Коллизионные нормы в советском праве. – Иркутск, 1984. – с. 15. Незнамова З.А., Коллизии в уголовном праве. Екатеринбург. – 1994. – с. 20.

недопустимым наличие коллизии в уголовном законодательстве. Вместе с тем, обращаем ваше внимание на то, что в уголовном праве могут существовать межотраслевые и даже внутриотраслевые коллизии. Существенное значение среди первых принадлежит коллизии конституционных норм с нормами других отраслей права. Коллизия норм конституционного и уголовного права заслуживает отдельного исследования, и эта тема не будет затрагиваться в рамках данной статьи. Относительно коллизий между Общей и Особенной частью УК, отметим, что часть их них имеет субъективную причину, например, нарушение правил юридической техники, отсутствие согласованности предписаний Общей и Особенной частей. Например, в санкциях особенной части УК содержится наказание в размере максимально превышающее размер, установленный для этого вида наказания в Общей части УК. Отдавая приоритет уголовной норме общей части, мы разрешаем данную коллизию. Мы согласны в данном случае оперировать термином «коллизия». Что касается обозначения термином «коллизия» смежные, отличающимся по одному или двум признакам составы преступления, то это неверно, поскольку, как мы знаем, что законодатель конструирует составы преступлений по отличительным признакам, присущим только этому преступному деянию, отличающемся как от общего понятия преступления, так и от иных составов. И даже когда уголовно-правовые нормы Особенной части представлены не идеально, они выражают волеизъявление законодателя, которое нельзя ограничить правилами. Считаем, что в любом случае необходимо исключить наличие коллизий между нормами Особенной части УК.

На наш взгляд описанные выше ситуации можно преодолеть различными способами: исключение противоречащей Общей части уголовно-правовой нормы, приведение в соответствие, согласование. В российском уголовном законодательстве данная проблема встречается чаще, и этому есть объяснение. УК РФ был принят в 1996 г. по сегодняшний день были криминализованы много деяний, около 50 составов преступлений, и зачастую они принимались без учета положений Общей части. С армянским уголовным законодательством все обстоит более оптимистично: 5 мая 2021 г. был принят концептуально новый Уголовный кодекс, и вопрос соответствия норм Общей и Особенной частей был решен именно благодаря принятию нового УК.

Заслуживает внимания определение конкуренции уголовно-правовых норм, данное Б.В. Шакиным: «Под конкуренцией уголовно-правовых норм понимается такое положение, когда при квалификации преступления или при решении иного вопроса в процессе применения уголовно-правовой нормы, на применение к данному конкретному случаю претендуют две или больше уголовно-правовые нормы, не противоречащие друг другу, **находящиеся между собой в глубокой зависимости, частично совпадающие между собой по содержанию и рассчитанные на регулирование рассматриваемого вопроса с различной степенью обобщения и полноты (выделено Н.Ю.)**, при этом применению подлежит только одна из конкурирующих уголовно-правовых норм¹¹. Считаем, что именно это определение наиболее полно представляет суть конкуренции уголовно-правовых норм в рамках Особенной части. Такое определение конкуренции уголовно-правовых норм, в принципе исключает наличие коллизии между нормами специальной части уголовного законодательства.

Существует множество видов конкуренции уголовно-правовых норм (содержательная, темпоральная, пространственная, иерархическая, общая и специальная норма, норма

¹¹ Шакин Б.В., Квалификация преступлений и конкуренция уголовно-правовых норм // Сибирский юридический вестник. – 2002, № 1. – с. 23.

части и целого, общая и исключительная норма, неоднократная конкуренция общей и специальной норм, нормы-части, нормы-целого. Отдельно также выделяют конкуренцию привилегированных составов, привилегированного и отягчающего составов, отягчающих составов преступлений. Именно последняя классификация конкуренции и была представлена в статье 52 УК РА, наличие которой исходит из интересов правоприменительной деятельности, способствует единообразному применению уголовно-правовых норм, формированию единообразной судебной практики. Полностью разделяем точку зрения Л.В. Инногамовой-Хегай, которая утверждает, что следует различать «конкуренцию уголовно-правовых норм, возникающих в процессе регулирования уголовно-правового отношения при квалификации преступления, конкуренцию норм при назначении наказания, конкуренцию норм при освобождении от ответственности и освобождения от наказания».¹² В рамках настоящей статьи для нас представляют интерес только те виды конкуренции, которые влияют на квалификацию преступления. Однако научная мысль не придерживается единообразия в вопросе о том, какие виды конкуренции уголовно-правовых норм влияют на квалификацию преступления. Уголовный кодекс РА в статье 52 впервые закрепил нормы, предусматривающие правила выбора нормы, при наличии двух и более статей, относящихся к одному и тому же деянию, но отличающихся по одному признаку. В части 1 вышеупомянутой статьи предусмотрено, что при конкуренции уголовно-правовых норм, деяние квалифицируется по одной статье, части статьи или пункту статьи. Естественно, что предпочтение дается той статье, которая наиболее полно отражает признаки совершенного деяния. В целом приветствуя подход армянского законодателя, предусмотревшего специальную уголовно-правовую норму о конкуренции норм, отметим все же, что в ней не отражены все виды конкуренции, а предпочтение дано наиболее чаще встречающимся видам конкуренции.

В рамках настоящего исследования мы акцентировали внимание на конкуренцию общей и специальной норм и конкуренцию части и целого. Однако здесь также все неоднозначно¹³. Обобщая мнения ученых, выделим следующие виды конкуренции уголовно-правовых норм, влияющие на квалификацию преступления: конкуренция общей и специальной нормы, части и целого, **специальных** норм.

Что касается конкуренции части и целого, то в теории уголовного права имеются различные мнения. А.Н. Трайнин считал ее поглощением составов¹⁴, В.П. Малков рассматривал как поглощение преступлений¹⁵, а Н.Ф. Кузнецова относил к квалификации сложных преступлений, совокупности преступлений и единичных преступлений¹⁶.

Не понятно, почему некоторые рассматривают конкуренцию части и целого как поглощение, другие – как совокупность.

¹² Инногамова-Хегай Л.В., Конкуренция уголовно-правовых норм при квалификации преступления. – М. – 2002.

¹³ Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений. – с. 211, 213. См. также: Толкаченко А.А., Теоретические основы квалификации преступлений. – М. – 2004. – с. 43; Корнеева А.В., Теоретические основы квалификации преступлений. – М. – 2006. – с. 140; Назаренко Г.В., Ситникова А.И., Теоретические основы квалификации преступлений. – М., 2009. – с. 62 и др.; Агаев И.Б., Совокупность преступлений: понятие, виды, наказуемость. – М. – 2003. – с. 156-157; Кадников Н.Г., Квалификация преступлений и вопросы судебного толкования. – М. – 2011. – с. 43. Ранее об этом же писали: Куринов Б.А., Научные основы квалификации преступлений. – М. – 1984. – с. 177; Горелик А.С., Конкуренция уголовно-правовых норм. – с. 14; Черненко Т.Г., Множественность преступлений по российскому уголовному праву. – Кемерово. – 2007. – с. 120.

¹⁴ Трайнин А.Н., Общее учение о составе преступления. – М. – 1957. – с. 254.

¹⁵ Малков В.П., Совокупность преступлений (вопросы квалификации и назначения наказания). – с. 124.

¹⁶ Кузнецова Н.Ф., Проблемы квалификации преступлений. – с. 126.

В.Б. Шакин отрицает наличие конкуренции части и целого¹⁷, ссылаясь на мнение В.П. Малкова, что «конкурирующие нормы находятся между собой в глубокой взаимосвязи», при которой, «если бы одна из двух конкурирующих норм к моменту применения была отменена, то подлежащий урегулированию случай мог быть разрешен на основе оставшейся нормы права.¹⁸

Именно в этом и заключается конкуренция части и целого. Если будет отменена норма-часть, то применяется норма-целое. Если будет отменена норма-целое, будет применяться норма-часть, считаем, что в этом случае квалификация будет неполной. В доктрине уголовного права существует мнение, что конкуренция норм со смягчающими и отягчающими обстоятельствами, конкуренция норм со смягчающими обстоятельствами, конкуренция норм с отягчающими обстоятельствами разновидности конкуренции специальных норм.¹⁹ Мы склонны не разделять данное утверждение, считая, что здесь нет конкуренции, и мы не одиноки в нашем суждении (см. Благов Е.В.²⁰).

Что касается конкуренции общей и специальной норм, то следует отметить, что УК РФ в ч.5 ст. 52 (УК РФ в ст. 17) регламентирует правило разрешения данной конкуренции, отдавая предпочтение специальной норме. Анализируя случаи утраты силы специальной нормы, приходим к выводу, что квалификация будет осуществляться по общей норме. Например, ст. 200 УК РФ «Обман потребителей» была исключена из Уголовного кодекса Федеральным законом от 8 декабря 2003 г., деяния по обману потребителей, думаем должны охватываться нормой о мошенничестве (ст. 159 УК РФ). На практике они могут квалифицироваться иначе. Отсутствие четкой позиции законодателя приводит к тому, что судебно-следственная практика определяет уголовно-правовую политику.

Заключение

Ниже приведенные предложения по совершенствованию уголовного законодательства, по нашему мнению, способствует единообразному применению уголовно-правовых норм и становлению унифицированной практики.

Если преступление предусмотрен несколькими статьями или частями статьи, одна из которых содержит состав преступления, отражающий любой случай совершения определенного деяния, а другая – один из случаев совершения этого деяния, то совокупность преступлений отсутствует, и уголовная ответственность наступает по статье или части статьи, особо предусматривающей совершенное преступления.

Если деяние предусмотрено несколькими статьями, одна из которых содержит состав преступления, отражающий совершенное деяние в целом, а другая – лишь частично, совокупность преступлений отсутствует, и уголовная ответственность наступает по статье, полностью предусматривающей совершенное преступления.

¹⁷ Шакин В.Б., Преодоление конкуренции уголовно-правовых норм при квалификации преступлений: автореф. дис. ... канд. юрид. наук. – М. – 2004. – с. 15.

¹⁸ Малков В.П., Совокупность преступлений (вопросы квалификации и назначения наказания). – с. 180-181.

¹⁹ Малков В.П., Там же., с. 183-187; Куринов Б.А., Научные основы квалификации преступлений. – с. 178; Малыхин В.И., Квалификация преступлений: Теоретические вопросы. – Куйбышев, 1987. – с. 43; Костарева Т.А., Квалифицирующие обстоятельства в уголовном праве (понятие, законодательная регламентация, влияние на дифференциацию ответственности). – Ярославль. – 1993. – с. 149; Никонов В.А., Основы теории квалификации преступлений (алгоритмический подход). – Тюмень. – 2001. – с. 172-174; Черненко Т.Г., Множественность преступлений по российскому уголовному праву. – с. 123-125 и др.

²⁰ Благов Е.В., Квалификация при совершении преступления. – М. – 2009. – с. 79-84.

Аннотация. В статье рассмотрены доктринальные подходы к определению конкуренции уголовно-правовых норм, соотношение коллизии и конкуренции в уголовном праве. Также проанализированы виды конкуренции, причины ее возникновения, а также способы преодоления. Автор акцентировал внимание на некоторые виды конкуренции уголовно-правовых норм, оказывающих существенное влияние на квалификацию преступления. В рамках настоящего исследования автор уделил особое внимание конкуренции общей и специальной норм и конкуренции части и целого, с анализом научных подходов и правоприменительной практики. Обобщая мнения ученых, автор проанализировал также конкуренцию специальных норм.

Приведенные автором предложения по совершенствованию уголовного законодательства, способствуют единообразному применению уголовно-правовых норм и становлению унифицированной практики.

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում են քրեաիրավական նորմերի մրցակցությունը որոշելու դոկտրինալ մոտեցումները, քրեական օրենսդրության մեջ կոլիզիայի և մրցակցության հարաբերակցությունը: Վերլուծվում են նաև մրցակցության տեսակները, դրա առաջացման պատճառները, ինչպես նաև հաղթահարման ուղիները: Հեղինակը շեշտը դրել է քրեական իրավունքի նորմերի մրցակցության որոշ տեսակների վրա, որոնք էական ազդեցություն են ունենում հանցագործության որակման վրա: Այս ուսումնասիրության շրջանակում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությանը, մասի և ամբողջի մրցակցությանը, վերլուծելով գիտական մոտեցումները և իրավակիրառ պրակտիկան:

Ամփոփելով գիտնականների կարծիքները՝ հեղինակը վերլուծել է նաև հատուկ նորմերի մրցակցությունը:

Քրեական օրենսդրության կատարելագործման հեղինակի առաջարկները նպաստում են քրեական իրավունքի նորմերի միասնական կիրառմանը և միասնական պրակտիկայի հաստատմանը:

Annotation. The article considers doctrinal approaches to the definition of competition of criminal law norms, the ratio of conflict and competition in criminal law. The types of competition, the causes of its occurrence, as well as ways to overcome it are also analyzed. The author focused on some types of competition of criminal law norms that have a significant impact on the qualification of a crime. In the framework of this study, the author paid special attention to the competition between general and special norms and competition between parts and the whole, with an analysis of scientific approaches and law enforcement practice. Summarizing the opinions of scientists, the author also analyzed the competition of special norms. The author's proposals for improving criminal legislation contribute to the uniform application of criminal law norms and the establishment of unified practice.

Ключевые слова: конкуренция, коллизия, квалификация, виды конкуренции.

Բանալի բաներ - մրցակցություն, կոլիզիա, որակում, մրցակցության տեսակներ:

Keywords: competition, conflict, qualification, types of competition.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Ожегов С.И., Шведова Н.Ю., Толковый словарь русского языка. – М. – 1992. – 907 с.
2. Экологический энциклопедический словарь. – Кишинев: Главная редакция Молдавской советской энциклопедии. И.И. Дедю. – 1989. – 406 с.
3. Современная энциклопедия. / [Авт.-сост. Гусев Игорь Евгеньевич]. – Минск: Харвест. – 1999. – 349 с.
4. Герцензон А.А., Квалификация преступления. – М. – 1947. – 25 с.
5. Малков В.П., Совокупность преступлений. – Казань. – 1974. – 307 с.
6. Кудрявцев В.Н., Теоретические основы квалификации преступлений. государственное изд-во юридической литературы. – М. – 1963 г. – 324 с.
7. Пинчук В.И., Квалификация преступлений при их совокупности: конспект лекций. – Л. – 1988. – 43 с.

8. Иногамова-Хегай Л.В., Конкуренция норм уголовного права: диссер. на соискание д.ю.н. – М. – 1999. – 333 с.
9. Кондратьева И.О., Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых норм. Тр. Совр. гуманист. акад. – М. – 2010, №7. – с. 14.
10. Черданцев А.Ф., Толкование советского права. – М.: Юридическая литература. – 1979. – 166 с.
11. Власенко Н.А., Коллизионные нормы в советском праве. – Иркутск. – 1984. – 99 с.
12. Незнамова З.А., Коллизии в уголовном праве. – Екатеринбург. – 1994. – 372 с.
13. Шакин Б.В., Квалификация преступлений и конкуренция уголовно-правовых норм // Сибирский юридический вестник. – 2002, № 1. – 25 с.
14. Иногамова-Хегай Л.В., Конкуренция уголовно-правовых норм при квалификации преступления. – М. – 2002. – 260 с.
15. Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений. – 301 с.
16. Толкаченко А.А., Теоретические основы квалификации преступлений. – М. – 2004. – 128 с.
17. Корнеева А.В., Теоретические основы квалификации преступлений. – М. – 2006. 141 с.
18. Назаренко Г.В., Ситникова А.И. Теоретические основы квалификации преступлений. – М. – Юрлитинформ. – 2010. – 149 с.
19. Агаев И.Б., Совокупность преступлений: понятие, виды, наказуемость. – М. – 2003. – 197 с.
20. Кадников Н.Г., Квалификация преступлений и вопросы судебного толкования. – М. – 2011. – 470 с.
21. Куринов Б.А., Научные основы квалификации преступлений. – М. – 1984. – 181 с.
22. Горелик А.С., Конкуренция уголовно-правовых норм. – 67 с.
23. Черненко Т.Г., Множественность преступлений по российскому уголовному праву. – Кемерово. – 2007. – 203 с.
24. Трайнин А.Н., Общее учение о составе преступления. – М. – 1957. – 363 с.
25. Малков В.П., Совокупность преступлений (вопросы квалификации и назначения наказания). – 307 с.
26. Кузнецова Н.Ф., Проблемы квалификации преступлений. – 328 с.
27. Шакин В.Б., Преодоление конкуренции уголовно-правовых норм при квалификации преступлений: автореф. дис. ... канд. юрид. наук. – М. – 2004. – 21 с.
28. Малыхин В.И., Квалификация преступлений: Теоретические вопросы. – Куйбышев. – 1987. – 97 с.
29. Костарева Т.А., Квалифицирующие обстоятельства в уголовном праве (понятие, законодательная регламентация, влияние на дифференциацию ответственности). – Ярославль. Автореферат – 1993. – 21 с.
30. Никонов В.А., Основы теории квалификации преступлений (алгоритмический подход). –Тюмень. – 2001. – с. 172–174.
31. Черненко Т.Г., Множественность преступлений по российскому уголовному праву. – 201 с.
32. Благов Е.В., Квалификация при совершении преступления. – М. – 2009. – 188 с.

Зограбян Н. – кандидат юридических наук, доцент, заведующая кафедрой уголовного права и уголовно-процессуального права Института права и политики Российско-Армянского университета, эл. почта: naira.zohrabyan@rau.am.

Статья представлена в редакцию 14.06.2024 г., отправлена на рецензию 14.06.2024 г., рецензент: д.ю.н., профессор, судья уголовной палаты Кассационного суда РА, профессор Российско-Армянского университета С. Аветисян. Принята к публикации: 16.07.2024.

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-79>

ՍՈՒՐԵՆ ԲԱԴԻՆՅԱՆ
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

SUREN BAGHINYAN
PhD student at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

СУРЕН БАГИНЯН
Соискатель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

**ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**SPECIFICS OF INVESTIGATIVE EXAMINATION OF DOCUMENTS
DURING THE INVESTIGATION OF THE CASES OF HIGH TREASON**

**ОСОБЕННОСТИ СЛЕДСТВЕННОГО ОСМОТРА ДОКУМЕНТОВ
ПРИ РАССЛЕДОВАНИИ УГОЛОВНЫХ ПРОИЗВОДСТВ
ПО ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЕ**

Ներածություն

Պետական դավաճանության գործերով քրեական վարույթի ընթացքում իրականացվող քննչական գործողությունների շարքում առանցքային նշանակություն ունի փաստաթղթի քննչական զննությունը, ուստի պետական դավաճանության գործերով վարույթների քննության ընթացքում փաստաթղթի քննչական զննության անանձնահատկությունների ուսումնասիրությունը կրիմինալիստիկական տակտիկայի կարևորագույն հիմնախնդիրներից է ներկայում՝ հատկապես հաշվի առնելով ժամանակակից տեղետվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերն ու միտումները: Որպես ասվածի հիմնավորում՝ արժե նաև հիշատակել նոր քրեադատավարական օրենսդրությամբ որոշ քննչական գործողությունների թվային տարրատեսակների իրականացման հնարավորության ամրագրումը:

Փաստաթղթի քննչական զննության կարևորությունն այս տեսակ գործերի քննության համար պայմանավորված է նրանով, որ, որպես կանոն, պետական դավաճանության անմիջական օբյեկտ հանդիսացող տեղեկություններն ամրագրված են լինում փաստաթղթերում, այլ կերպ ասած՝ դրանք փոխանցվում են փաստաթղթի տեսքով: Նկատի ունենալով վերոգրյալը, ինչպես նաև հետազոտության ամբողջության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ան-

դրադառնալ փաստաթուղթ հասկացությանը, վերլուծել դրա ինչպես քրեադատավարական, այնպես էլ կրիմինալիստիկական ասպեկտները, դրա հիման վրա ներակայացնել քննարկող տեսակի հանցագործությունների քննության ընթացքում փաստաթղթերի քննչական զննության պայմաններն ու տակտիկական առանձնահատկությունները, որոնք, *inter alia*, պայմանավորված են նաև օրենսդրությամբ նախատեսված գաղտնի փաստաթղթաշրջանառության կարգավորումներով:

Հիմական հետազոտություն

Հատկանշական է, որ պետական դատավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմի իրականացման թիրախում հիմնականում հայտնվում է գաղտնի փաստաթղթաշրջանառությունը: Նշված հանգամանքով էլ պայմանավորված՝ փաստաթղթի քննչական զննության քրեադատավարական և տակտիկական առանձնահատկությունների տեսանկյունից կարևորվում է ինչպես թղթային, այնպես էլ թվային և այլ կրիչների վրա ամրագրված տեղեկատվության ուսումնասիրումը՝ զննումը:

Բանասիրական իմաստով փաստաթուղթ հասկացությունը բնորոշվում է հետեվյալ կերպ. «Օրինական կազմված որևէ թուղթ, որը կարող է ծառայել իբրև ապացույց մեկի այս կամ այն իրավունքի կամ պարտականության կատարման դրույմենտ: Անձի փաստաթուղթ-օրինական հիմնարկից տված վկայական, որի մեջ հավաստիացվում է որևէ անձ, նրա ով լինելը, քանի տարեկան լինելը, սոցիալական դրությունը, պարապմունքը և այլն»¹: Իրավագիտության մեջ, ընդհանուր առմամբ, փաստաթուղթ ասելով՝ նկատի են ունենում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի նյութական ամրագրման ձևը²:

Ինչ վերաբերում է փաստաթուղթ հասկացության քրեադատավարական բնորոշմանը, ապա համաձայն ՀՀ ՔԴՕ 96-րդ հոդվածի 1-ին մասի՝ արտավարությանի փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս:

Պետական դավաճանության գործերի քննության տեսանկյունից ուշագրավ է քննարկող հոդվածի 3-րդ մասի սահմանումը, համաձայն որի՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը կարող են ճանաչվել արտավարությանի փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ քրեադատավարական իմաստով փաստաթղթերի շարքին են դասվում նաև համեմատական հետազոտման համար ստացվող նմուշները (ձեռագրի, կնիքի դրոշմի, մատնադրոշմի և այլն), քանի որ դրանցում պարունակվում են փաստական տվյալներ, որոնց օգնությամբ փորձագետը պարզում է քննիչին հետաքրքրող փաստի առկայությունը կամ բացակայությունը³:

¹ Մայխասենց Սյր., Հայերեն բացատրական բառարան, հատոր 2, Երևան, 1945, էջ 490:

² Տեն Կորխով Յ. Գ., Криминалистическое исследование документов, ВЗЮИ, М., 1972, էջ 25:

³ Տեն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, 2000, էջ 339:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, արդարացի չէ փաստաթուղթ դիտարկել միայն գրավոր ակտը⁴ և այս առումով միանգամայն համամիտ ենք նաև պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանի համանման տեսակետի հետ, քանի որ գիտատեխնիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ առաջընթացի և դրանց զարգացման միտումների այսօրվա պայմաններում տեղեկատվության կրիչների տեսակներն անընդհատ ընդլայնվում են: Ժամանակի ընթացքում փաստաթղթերը դառնում են տեղեկատվության կարևոր կրիչներ⁵:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ կրիմինալիստիկայի տեսանկյունից փաստաթուղթը բնութագրվում է որպես քրեական դատավարության համար նշանակություն ունեցող տեղեկատվության նյութական կրիչ⁶: Ըստ այդմ՝ փաստաթղթերի շարքում կարող են հանդես գալ տեսանյութը, համակարգչային ծրագիրը, ֆոտոփաստաթղթերը և այլն: Որպես փաստաթղթի նյութ կարող են ծառայել բոլոր տեսակի թղթերը, ստվարաթղթերը, մագաղաթը, ֆոտոթուղթը, ժապավենը, թվային կրիչը և այլն: Փաստաթղթում այս կամ այն փաստի կամ հանգամանքի մասին տեղեկություն կարող է պարունակվել տառերով, թվերով, սղագրական կամ գծագրական նշաններով, նկարների, պատկերների և այլնի միջոցով: Փաստաթղթում տեղեկություններ կարող են ամրագրվել անմիջապես մարդու կամ տարատեսակ տեխնիկական միջոցների, այդ թվում գրաշարժողական հմտությունների, լուսանկարչական, կինոնկարահանման, ձայնագրողական, համակարգչային և այլ տեխնիկական միջոցներով:

ՀՀ ՔԴՕ 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զննումը վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու, ենթադրյալ հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու նպատակով տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի, առարկայի, փաստաթղթի բովանդակության, կենդանու, մարդու կամ կենդանու դիակի տեսողական ուսումնասիրությունն է:

Հատկանշական է, որ փաստաթղթի քննչական զննումը կարող է կատարվել ինչպես քննչիչ աշխատասենյակում, այնպես էլ դրա հայտնաբերման վայրում, առանձին քննչական գործողության ձևաչափով կամ այլ քննչական գործողության շրջանակում: Ըստ այդմ՝ ՀՀ ՔԴՕ 226-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զննության ընթացքում քննիչն ինքնուրույն կամ փորձագետի օգնությամբ վերցնում է հետքեր, առարկաներ, փաստաթղթեր, ինչպես նաև այլ օբյեկտներ, որոնք կարող են ունենալ ապացուցողական նշանակություն, իսկ նույն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ այլ քննչական գործողության ժամանակ հայտնաբերված օբյեկտների զննումը կատարվում է այդ քննչական գործողության ընթացքում, իսկ զննման արդյունքներն ամրագրվում են տվյալ քննչական գործողության արձանագրության մեջ:

Բոլոր դեպքերում քննչական զննության տակտիկական արդյունավետության տեսանկյունից կարևորվում է փաստաթուղթ հասկացության բազմաշերտ բնույթի ըմբռնումը:

Այս իմաստով ուշագրավ է նաև վերը վկայակոչված հոդվածի 6-րդ մասի սահմանումն առ այն, որ հանրամատչելի համակարգչային ծրագրերի, համացանցային կայքերի, թվայնացված տվյալների զննությունից առաջ քննիչը համակարգչային եղանակով պատճենում է զննվող օբյեկտները, ըստ անհրաժեշտության՝ պատրաստում դրանց թղթային պատճենները և այդ մասին նշում արձանագրության մեջ: Ամրագրման արդյունք հանդիսացող թղթային պատճենները (երբ դա հնարավոր է և անհրաժեշտ վարույթի համար) ստորագրվում

⁴ Տե՛ս Корухов Ю. Г., Криминалистическое исследование документов, ВЗЮИ, М., 1972, էջ 26:

⁵ Ենգիբարյան Վ. Գ., Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2018, էջեր 237-238:

⁶ Տե՛ս Криминалистика, Institutiones, Под ред. В. А. Образцова, М., 1997, էջ 158:

են զննության մասնակիցների կողմից և համակարգչային պատճենի հետ միասին կցվում արձանագրությանը:

Կարող ենք հավաստել, որ թեև քրեադատավարական իմաստով փաստաթուղթ հասկացության բովանդակությունն առավել լայն է, քան դրա կրիմինալիստիկական ըմբռնումը, այն ընդգրկում է ինչպես թղթային, այնպես էլ ոչ թղթային կրիչի վրա ամրագրված տեղեկությունները, այդուհանդերձ կրիմինալիստիկայում փաստաթղթերը՝ որպես հետազոտման օբյեկտներ, հստակ տարանջատվում են՝ ըստ դրանց թղթային և ոչ թղթային կրիչների: Ընդ որում, այն ելակետային նշանակություն ունի ոչ միայն քննչական զննության տակտիկայի, այլ նաև դրանք փորձագիտական հետազոտման սահմանների որոշակիացման տեսանկյունից:

Խնդրո առարկա հիմնահարցերը քննարկման առարկա են հանդիսացել նաև հայրենական մասնագիտական գրականության մեջ:

Այսպես, պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանը գտնում է, որ փաստաթղթերի կրիմինալիստիկական բնորոշումն անպայմանորեն պետք է համապատասխանի փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման բնագավառի խնդիրներին ու նշանակությանը՝ մյուս կարևոր պայմանը համարելով հետազոտման այս բնագավառի մեթոդիկայի և տեխնիկական միջոցների կիրառման հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ փաստաթուղթ հանդիսացող օբյեկտը պետք է ենթակա լինի հետազոտման կրիմինալիստիկական տեխնիկայի տվյալ ճյուղի սահմաններում, այլապես փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման օբյեկտ հանդիսանալ չի կարող⁷: Այս կապակցությամբ քննարկման արժանի է նաև պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանի տեսակետը, համաձայն որի՝ լուսանկարների (կինո-ֆոտո) հետազոտումը պետք է մտցնել փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի մեջ, այն դեպքում, երբ լուսանկարների հետազոտման խնդիրներից են որոշել լուսանկարահանման տեսակը, նկարը տպելու (պոզիտիվ ստանալու) եղանակը, կատարել լուսանկարների միջոցով չափումները, նույնականացնել լուսանկարչական ապարատները, ժապավենները, թիթեղները, ֆոտոթուղթը, քիմիական նյութերը: Մնացած հարցերը չեն համապատասխանում փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման խնդիրներին, հետևաբար ֆոտոապարատի, կինո, ֆոնոապարատների, լուսանկարների և դրանց պատրաստման համար անհրաժեշտ նյութերի հետ կապված փորձաքննությունները պետք է իրականացվեն դատալուսանկարչական փորձաքննությամբ⁸:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ կարող ենք փաստել, որ կրիմինալիստիկայում ընդունված փաստաթղթերի դասակարգումը, ըստ դրանց թղթային և ոչ թղթային կրիչների, ելակետային նշանակություն ունի նաև փաստաթղթերի քննչական զննության տակտիկական հնարքների համակարգի ու դրանց արդյունավետ իրականացման համար, ինչն առանցքային նշանակություն ունի հատկապես պետական դավաճանության վարույթների քննության ընթացքում: Բանն այն է, որ որպես կանոն պետական դավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմին բնորոշ է տեղեկատվության փոխանցումը հակառակորդ կամ երրորդ կողմին, ինչն առանց համապատասխան կրիչի չի կարող տեղի ունենալ: Ուստի, բովանդակային առումով հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունն անգամ վիրտուալ տիրույթում զետեղելու կամ այդ եղանակով փոխանցելու պարագայում ենթադրում է ֆիզիկական իմաստով դրա թղթային կամ էլեկտրոնային, ինչպես նաև այլ կրիչների առկայություն: Հատկանշական է նաև, որ քննարկող տեսակի գործերի քննության պրակտիկական վկայում է, որ մեծամասամբ

⁷ Ենգիբարյան Վ. Գ., Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2018, էջ 238:

⁸ Այս մասին մանրամասն տես Օհանյան Լ. Պ., Կրիմինալիստիկա, տեխնիկա, Երևան, 1993, էջ 210:

հանցավորի տեսադաշտում հայտնվում են թղթային կրիչով փաստաթղթերը, ինչը պայմանավորված է նաև սահմանափակ կամ գաղտնի գործավարության առանձնահատուկ բնույթով:

Այս տեսանկյունից հարկ ենք համարում ներակայացնել որոշ տակտիկական հնարքներ քննարկվող տեսակի վարույթներով քննության ընթացքում Կրիմինալիստիկայի գիտության կողմից մշակված փաստաթղթերի գննությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Այսպես, փաստաթղթերն իրենց ընդհանուր նշանակության, ձևի և բովանդակության տեսանկյունից կարող են տարբեր լինել, սակայն դրանց բազմազանության մեջ հնարավոր է առանձնացնել որոշ պահանջներ, որոնք պարտադիր են բոլոր տեսակի գրավոր փաստաթղթերի համար:

Փաստաթղթում բովանդակվող տեղեկությունները որոշակի փաստերի ու հանգամանքների մասին պետք է կապված լինեն քննվող գործի հետ:

Փաստաթղթում փաստերի շարադրանքը պետք է կատարված լինի համապատասխան իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի իրավասության շրջանակներում:

Նշված ընդհանուր կանոնների հետ մեկտեղ, որոնք պարտադիր են բոլոր գրավոր փաստաթղթերի համար, փաստաթուղթը պետք է համապատասխանի մի շարք այլ մասնավոր պահանջների: Այն կարող է ունենալ որոշակի ձև կամ պաշտոնական վավերապայմաններ: Վավերապայմանները (ռեկվիզիտ) որոշակի փաստաթղթի ճիշտ կազմման և ձևակերպման համար նախատեսված պարտադիր պահանջներն են: Պաշտոնական փաստաթղթերը պատրաստվում են համապատասխան ստանդարտներով: Դրանք պետք է բովանդակեն որոշակի վավերապայմանների հավաքածու (պետք է պատրաստվեն համապատասխան բլանկի վրա, նշվեն պատրաստման տեղը և ժամանակը, բովանդակեն անհրաժեշտ կնիքներ, ստորագրություններ և այլն)⁹:

Փաստաթուղթը գնահատելիս պետք է հաշվի առնել դրա որոշ հատկանիշներ, օրինակ, պաշտոնատար անձի իրավասությունը և նրա տված տեղեկանքի բովանդակությունը: Ոչ պաշտոնական փաստաթղթերը ստուգելու համար նպատակահարմար է հարցաքննել դրանց հեղինակին, կազմողին: Հեղինակին կամ կազմողին պարզելու համար կարող է նշանակվել հեղինակագիտական կամ ձեռագրաբանական փորձաքննություն¹⁰:

Փաստաթուղթը պարտադիր պետք է նկարագրվի քննչական գործողության արձանագրության մեջ: Անհրաժեշտ է նշել դրանց անունները, վավերապայմանները և այլ հատկանիշները: Հատկանշական է, որ քննարկվող տեսակի հանցագործությունների վարույթների քննության ընթացքում ապացույցների զանգվածի մեջ իր որոշիչ տեղն ունենում են հենց այն փաստաթուղթը կամ փաստաթղթերը, որոնք պարունակում են փոխանցվող տեղեկությունները:

Քանի որ դեպքի վայրում հայտնաբերված կամ այլ վարության գործողությունների ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի առնչությունը քննվող դեպքի հետ երբեմն դժվար է պարզել քննության սկզբնական փուլում, ուստի տվյալ փուլում փաստաթղթերի քննչական գննությունը նպատակահարմար է իրականացնել՝ ղեկավարվելով կրիմինալիստիկական տակտիկայի ընդհանուր կանոններով:

Այս իմաստով հարկ է նաև նկատի ունենալ, որ փաստաթղթերի հետ քննիչի աշխատանքն ընթանում է միմյանց հետ սերտորեն կապված երկու փուլերով: Դրանցից առաջինը փաստաթղթի վավերապայմանների և արտաքին հատկանիշների հայտնաբերումն ու վերլու-

⁹ Տե՛ս Криминалистика, Institutiones, Под ред. В. А. Образцова, М., 1997, էջ 158:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, 2000, էջ 340:

ծությունն է: Երկրորդ փուլը ենթադրում է փաստաթղթի բովանդակության վերլուծությունը: Զննության այս երկու փուլերն էլ, ըստ էության, միավորվում են փաստաթղթում արտացոլված գործողությունների ստուգման ժամանակ¹¹:

Պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանն այս փուլերին ավելացնում է ևս մեկ՝ երրորդ փուլը, որի հիմնական խնդիրն է փաստաթուղթը փորձագիտական հետազոտության ուղարկելու հարցի որոշումը, ինչպես նաև փորձագետին առաջադրվող հարցերի շրջանակի որոշումը և հստակեցումը¹²:

Զննության սկզբնական փուլում քննիչը պետք է ընդհանուր պատկերացում կազմի փաստաթղթի մասին: Պարզաբանվում է փաստաթղթի էությունը, ում մոտ և որտեղ է պահվում փաստաթուղթը, փաստաթղթի արտաքին տեսքը և դրա վավերապայմանները, փաստաթղթի ծագումը, ում կողմից է փաստաթուղթը տրվել հասցեատիրոջը: Փաստաթղթի զննության ժամանակ քննիչի հետագա գործողությունների բովանդակությունը կախված է նրանից, թե ինչպիսի դեր կարող է խաղալ այդ փաստաթուղթը տվյալ գործում:

Համապատասխան բնագավառի փորձագետի օգնությունն անհրաժեշտ է նաև էլեկտրոնային փաստաթղթերի զննության ժամանակ, որոնք փոխանցվում են էլեկտրոնային փոստով, և, որոնք բացի տեքստից՝ կարող են պարունակել նաև տեսողական և ձայնային տեղեկատվություն: Էլեկտրոնային փաստաթղթերի հայտնաբերման նպատակով իրականացվում է տեղեկատվության պահպանման և փոխանցման տարբեր միջոցների ուսումնասիրում:

Նախևառաջ անհրաժեշտ է համոզվել փաստաթղթի տվյալ տեսակի համար պարտադիր բոլոր վավերապայմանների առկայության մեջ: Այս տեսանկյունից հարկ է նկատի ունենալ փաստաթղթի վրա գաղտնիության դրոշմագրի կամ դրա գործավարական շրջանառության մասին նշագրման օրենսդրությամբ սահմանված պարտադիր վավերապայմանի առկայությունը:

Փաստաթղթի բովանդակային առանձնահատկություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք այն ենթադրում է այլ փաստաթղթի առկայություն ևս, մասնավորապես դրանում պարունակվող հղումների առկայության դեպքում: Վերջինս հատկանշական է քննարկող տեսակի հանցագործությունների քննության պարագայում, քանզի պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի համար սահմանվում են առանին կարգավորումներ, մասնավորապես.

Պետական գաղտնիքը (պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները)՝ Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսության, գիտության և տեխնիկայի, հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, արտադրանքը կամ նյութերը, որոնք պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին:

Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում է 2023 թվականի մարտի 1-ի «Պետական գաղտնիքի մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք): Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման նպատակով տեղեկությունները պետական գաղտնիքի շար-

¹¹ *Ենգիբարյան Վ. Գ.*, Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2018, էջ 243:

¹² *Օհանյան Լ. Պ.*, Կրիմինալիստիկա, Բուհական դասագիրք, 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 393:

քին դատելու, գաղտնագրելու, պետական գաղտնիքը պահպանելու, պաշտպանելու, օգտագործելու, գաղտնագրծելու կամ ոչնչացնելու գործընթացների հետ կապված հարաբերությունները, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ունեցող անձանց պարտականությունները, նրանց աշխատանքի համար սահմանված պայմանները և սահմանափակումները:

Պետական գաղտնիքի վկատմամբ սահմանափակումներն ամրագրված են ինչպես վերոնշյալ օրենքով, այնպես էլ բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերով, կառավարության որոշումներով: Դրանք վերաբերում են տեղեկությունների գաղտնիության աստիճանը որոշելուն, գաղտնիության դրոշմագրեր շնորհելուն, գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկերի մշակման գործընթացին, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահման կանոններին, պետական գաղտնիքի տեղեկակիրներն այլ պետություններ, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց փոխանցելու կարգին:

Գերատեսչություններն իրենց համար սահմանում են նաև օրենքից բխող գերատեսչական ակտեր, որոնք համակարգում են տվյալ գերատեսչության առանձնահատկությունները և ուղղությունները:

Այդ բոլոր իրավական ակտերը և կարգադրիչ փաստաթղթերը նպատակաուղղված են, որպեսզի կանխարգելի պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածումը՝ պետության պաշտպանության տակ գտնվող և պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումը կամ հոսակորուստը, գաղտնիության ռեժիմի ապահովումը:

Ելնելով պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների կարևորությունից, բնույթից, դրանց տարածման դեպքում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին պատճառված կամ սպառնացող վնասի չափից՝ սահմանվում են գաղտնիության երեք աստիճաններ՝

- 1) «Հատուկ կարևորության»,
- 2) «Հույժ գաղտնի»,
- 3) «Գաղտնի»:

Գաղտնիության «Հատուկ կարևորության» աստիճանին համապատասխանում են այն տեղեկությունները, որոնց տարածումը կարող է առանձնապես ծանր, «Հույժ գաղտնի» աստիճանին՝ ծանր, իսկ «Գաղտնի» աստիճանին՝ էական վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին:

դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ կարող է գնահատվել ոչ միայն բժշկական փաստաթղթերի հետազոտության, այլ նաև հոգեկան հիվանդությամբ տառապող անձի անհատական հատկանիշների, դատական նիստերի դահլիճում անձի դրսևորած վարքագծի, ունեցած հոգեվիճակի անմիջական գնահատման արդյունքում: Հետևաբար, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթի ընթացքում նախաքննական մարմնի կողմից անձի անմեղսունակության վերաբերյալ ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին չի կարող բավարար համարվել հոգեկան հիվանդություն ունեցող անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման անհրաժեշտությունը որոշելու համար՝ անգամ եթե այն նշում է պարունակում անձի՝ իր կամ իրեն շրջապատող միջավայրի համար վտանգ ներկայացնելու մասին⁸:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում անձի հարկադիր պահումը պետք է արդարացված լինի և հիմնավորվի, որ այդ հանգամանքներում անհրաժեշտ է անձին զրկել ազատությունից՝ ելնելով **տվյալ պահին** նրա հոգեկան վիճակից: Այլ խոսքերով, անձի ազատության հիմնարար իրավունքի սահմանափակման համատեքստում պետք է քննարկման առարկա դարձվի ազատությունից զրկելու հետ կապված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման համապատասխան բժշկական ցուցումի առկայության հանգամանքը՝ դատական քննության տվյալ պահի դրությամբ, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ մինչդատական վարույթի ընթացքում ստացված փորձագիտական եզրակացությունը լիովին չարտացոլի անձի՝ իր կամ այլ անձանց համար վտանգավորությունը՝ դատական վարույթի շրջանակներում հարկադրանքի միջոցի կիրառման պահին, հատկապես այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացության և դատարանի որոշման կայացման միջև առկա է երկար ժամանակային խզում: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ անձի նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննություն է նշանակվում դատական վարույթի ընթացքում, սակայն երկար ժամանակ է անցնում փորձաքննության անցկացման պահից մինչև վարույթի ավարտը: Այդ ընթացքում անձի հոգեկան վիճակը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու մասին դատարանի որոշումը դարձնելով ժամանակավրեպ և հատուկ գիտելիքների կիրառմամբ ձեռք բերված այնպիսի ապացույցի վրա հիմնված, որն այլևս չի կարող դիտարկվել որպես տվյալ պահին անձի հոգեկան վիճակն օբյեկտիվորեն արտացոլող տվյալ: Հետևաբար, անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման անհրաժեշտության և դրա տեսակի ընտրության վերաբերյալ դատարանի եզրահանգումը չի կարող հիմնվել ժամանակային մեծ խզմամբ ձեռք բերված փորձագիտական եզրակացության հետևությունների վրա:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- **2020 թվականի փետրվարի 20-ին** Սերժիկ Ոսկանյանի նկատմամբ նշանակվել է ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն⁹:

- **2020 թվականի սեպտեմբերի 24-ին** ստացվել է ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի թիվ 330/20 եզրակացությունը, որով Սերժիկ Ոսկանյանը՝ իրեն մեղսագրվող արարքի կատարման նկատմամբ ճանաչվել է անմեղսունակ: Նույն եզրակացությամբ նշվել է, որ Ս.Ոսկանյանը չի կարող մասնակցել քննչական և դատավարական գործողություններին, հասարակության համար վտանգ է ներկայացնում, կարիք ունի

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Գասպարյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԳԴ1/0058/01/16 որոշման 15.1-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հարկադիր բուժման՝ ընդհանուր տիպի հոգեբուժական բաժանմունքում¹⁰:

- Առաջին ատյանի դատարանը, հիմնվելով **2020 թվականի սեպտեմբերի 24-ին** ստացված թիվ 330/20 եզրակացության վրա, **2022 թվականի սեպտեմբերի 7-ի** որոշմամբ Սերժիկ Ոսկանյանին ազատել է ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից և նրա նկատմամբ նշանակել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում¹¹:

- Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով **2020 թվականի սեպտեմբերի 24-ին** ստացված թիվ 330/20 եզրակացությունը, 2022 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ¹²:

22. Նախորդ կետում մեջբերված փաստերը վերլուծելով սույն որոշման 18-20-րդ կետերում վկայակոչված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է արձանագրել, որ Ս.Ոսկանյանի վերաբերյալ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության ստացման պահից մինչև նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման կայացումն անցել է երկու տարի, սակայն ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը միջոցներ չեն ձեռնարկել դատական վարույթի շրջանակներում Ս.Ոսկանյանի հոգեկան առողջության վիճակը գնահատելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար պարզել, թե արդյո՞ք Ս.Ոսկանյանի հոգեկան վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային պայմաններում: Մասնավորապես, չի պարզվել, թե գործը դատարան ուղարկելուց հետո, արդյո՞ք Սերժիկ Ոսկանյանը շարունակել է իր առողջական վիճակով պայմանավորված վտանգ ներկայացնել իր կամ այլ անձանց համար: Արդյունքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ ժամանակային խզմամբ պայմանավորված, Ս.Ոսկանյանի առողջական վիճակի վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում ձեռքբերված փորձագիտական եզրակացությունն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար փաստական տվյալ էր նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում նշանակելու համար: Այս առումով հատկանշական է նաև, որ ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի՝ 2022 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 330/20 եզրակացությամբ նշվել է, որ Սերժիկ Ոսկանյանն իր հոգեվիճակով չի կարող մասնակցել քննչական և դատավարական գործողություններին և հասարակության համար վտանգ է ներկայացնում, մինչդեռ ինչպես Առաջին ատյանի դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի դատական նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Ոսկանյանը մասնակցել է գործի դատական քննությանը, դրսևորել պատշաճ վարքագիծ, ինչը ևս կարող էր վկայել նրա առողջական վիճակի փոփոխության մասին:

23. Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չէին Սերժիկ Ոսկանյանի նկատմամբ բնույթի հարկադրանքի միջոց՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում նշանակելու համար:

24. Վերը նշվածի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության

¹⁰ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

օրենսգրքի 18-րդ հոդվածի խախտում, որն էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի հիման վրա, Առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանելու և վարույթն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության փոխանցելու հիմք է: Նոր քննության ընթացքում, Առաջին ատյանի դատարանը պետք է լուծի Սերժիկ Ոսկանյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու և դրա տեսակի ընտրության հարցը՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

25. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սերժիկ Ոսկանյանի նկատմամբ նախաքննության մարմնի կողմից կիրառված անվտանգության միջոցը՝ հիվանդին հսկողության համար ազգականին (օրինական ներկայացուցիչ, նրա հայր Ա.Ոսկանյանին) հանձնելը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 281-րդ, 359-րդ, 361-363-րդ, 385-388-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Սերժիկ Արշավիրի Ոսկանյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սերժիկ Արշավիրի Ոսկանյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց կիրառված՝ հսկողության համար ազգականին հանձնելը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԵԴ/22031/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի մայիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Վիկտորյա Ռախյանի հայցի ընդդեմ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.01.2022 թվականի որոշման դեմ Վիկտորյա Ռախյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վիկտորյա Ռախյանը պահանջել է անվավեր ճանաչել իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Թերզյանի 06.11.2020 թվականի թիվ 131-Ա հրամանը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.09.2021 թվականի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.01.2022 թվականի որոշմամբ Վիկտորյա Ռախյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.09.2021 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիկտորյա Ռախյանը (ներկայացուցիչ Վահագն Թադևոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի

1-ին կետը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերը, 12-րդ հոդվածի 2-րդ մասը, 13րդ հոդվածը, 167-րդ հոդվածը և 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել իր ներկայացուցչի այն պնդումը, որ Դատարանի կողմից նախնական դատական նիստի ընթացքում չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված գործողությունների հերթականությունը և առանց նույն հոդվածով նախատեսված գործողություններն իրականացնելու սկսել է քննարկել պատասխանողի ներկայացուցչի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված 1-ին մասի 7-րդ կետի հիմքով հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված 1-ին մասի 7-րդ կետի կիրառման համար օրենսդիրը սահմանել է բացառություն, որպիսի հանգամանքը Դատարանի կողմից հաշվի չի առնվել հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս և որոշում կայացնելիս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ իր ներկայացուցչի նախնական դատական նիստին ներկայանալու, վերջինիս լիազորությունները (այդ թվում՝ հայցադիմումն ստորագրելու) Դատարանի կողմից ստուգված լինելու, այդ նիստում հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը ներկայացնելու ու պատասխանողի ներկայացուցչի՝ հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդության դեմ առարկելու պայմաններում Դատարանն իրավասու չէր առանց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողություններն ավարտելու, այդ թվում՝ իր ներկայացուցչի կողմից հայցը պնդելու հանգամանքը պարզելու, անցնել պատասխանողի ներկայացուցչի՝ հայցն առանց քննության թողնելու միջնորդության քննարկմանը:

Ավելին՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ իր հայցադիմումն ստորագրելու լիազորություն ունեցող ներկայացուցչի նախնական դատական նիստի ներկայանալը, հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը ներկայացնելն ու միջնորդության դեմ առարկելն ինքնին ենթադրում են, որ իր ներկայացուցչին պնդում է հայցը, որը Դատարանը չի պարզել և, բավարարելով միջնորդությունը, որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ:

Մինչույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ իր ներկայացուցչին, նախնական դատական նիստում առարկելով միջնորդության դեմ, ներկայացրել է իր կողմից 08.11.2020 թվականին ստորագրված լիազորագիր, որով հավաստվում են նաև իր՝ հայցադիմումն ստորագրած մյուս ներկայացուցչի՝ Տիգրան Գրիգորյանի լիազորությունները, այդ թվում նաև՝ հայցադիմումն ստորագրելու լիազորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.01.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վիկտորյա Ռախյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Կազմակերպության՝ Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Թերզյանի 06.11.2020 թվականի «Վիկտորյա Ռախյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու

մասին» թիվ 131-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցադիմումն ստորագրել է Վիկտորյա Ռախյանի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Գրիգորյանը (արտոնագիր թիվ 2079) (**հայրոր 1-ին, գ.թ. 3-12**).

2) Դատարան ներկայացված հայցադիմումին կից ներկայացվել է նաև Վիկտորյա Ռախյանի կողմից 08.11.2020 թվականին փաստաբան Վահագն Թադևոսյանին (արտոնագիր թիվ 2016) երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, որում ուղղակիորեն նախատեսված է ներկայացուցիչ՝ հայցադիմումն ստորագրելու լիազորությունը (**հայրոր 1-ին, գ.թ. 20,21**).

3) Դատարանի 25.05.2021 թվականի որոշմամբ Վիկտորյա Ռախյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ (**հայրոր 1-ին, գ.թ. 28**).

4) 29.09.2021 թվականին կայացած նախնական դատական նիստում Կազմակերպության ներկայացուցիչը ներկայացրել է հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդություն՝ հիմքում դնելով այն, որ հայցադիմումն ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը, մինչդեռ հայցադիմումին կից ներկայացված լիազորագրի համաձայն՝ հայցադիմումն ստորագրելու լիազորություն վերապահվել է այլ անձի (**հայրոր 1-ին, գ.թ. 84-86, 88**).

5) 29.09.2021 թվականին կայացած նախնական դատական նիստում ներկայացված հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս Վիկտորյա Ռախյանի ներկայացուցիչ Վահագն Թադևոսյանն առարկել է միջնորդության դեմ և ներկայացրել է Վիկտորյա Ռախյանի կողմից 08.11.2020 թվականին փաստաբաններ Տիգրան Գրիգորյանին, Վահագն Թադևոսյանին ու Անի Մուրադյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, որում ուղղակիորեն նախատեսված է հայցադիմումը փաստացի ստորագրած փաստաբան Տիգրան Գրիգորյանի՝ հայցադիմումն ստորագրելու լիազորությունը (**հայրոր 1-ին, գ.թ. 87**).

6) Դատարանի՝ 29.09.2021 թվականի նախնական դատական նիստում կայացված որոշմամբ Վիկտորյա Ռախյանի հայցն ընդդեմ Կազմակերպության՝ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թողնվել է առանց քննության այն հիմքով, որ հայցադիմումն ստորագրվել է այն ստորագրելու պահին այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից (**հայրոր 1-ին, գ.թ. 84-86, 89,90**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է.

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հայցադիմումն ստորագրելու իրավասություն չունեցող անձի կողմից այն ստորագրված լինելու հիմքով հայցն առանց քննության թողնելու առանձնահատկություններին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ նույն գլխում [Գլուխ 2-րդ] ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր պահանջ դատարանին ներկայացնելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից և որի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների զուտ խիստ մեկնաբանման հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում, ու անձի այդ իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում, ինչի արդյունքում առհասարակ արժեզրկվում են այդ վարույթի արդար, հրապարակային և արագ քննության բնորոշումները: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակը ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորումն է: Դա, մասնավորապես, վերաբերում է դատարան դիմելու իրավունքին՝ նկատի ունենալով այն զգալի դերը, որ արդար դատաքննության իրավունքն իրականացվում

է ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգադրով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52, 53-56, Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 4451/70 գանգադրով Եվրոպական դատարանի 21.02.1975 թվականի վճիռը, կետ 34):

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չէ ու կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: **Սակայն** դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը (տե՛ս Աշինգոեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգադրով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Տոլստոյ Միլուսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 18139/91 գանգադրով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 59): Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական ու արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (տե՛ս Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգադրով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, կետ 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգադրով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 35-36, Ռապոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 գանգադրով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգադրով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, կետ 44):

Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում նշել է, որ պետությանը տրվում է դատարան դիմելու իրավունքն ապահովող միջոցների ազատ ընտրություն. դրանք կարող են անորոշ սահմանափակումների ենթարկվել՝ պայմանով, որ չեն վնասի իրավունքի բուն էությունը (տե՛ս Սելիսն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 14166/09 գանգադրով Եվրոպական դատարանի 08.03.2012 թվականի վճիռը), միտված կլինեն իրավաչափ նպատակի և կլինեն համաչափ (տե՛ս Մելիկն ընդդեմ Ուկրաինայի թիվ 23436/03 գանգադրով Եվրոպական դատարանի 28.03.2006 թվականի վճիռը):

Միաժամանակ, Եվրոպական դատարանը փաստել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (տե՛ս Էյրին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանգադրով Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, կետ 26):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման

նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (տես *Դումիրյու Գեորգն ընդդեմ Ռումինիայի թիվ 33883/06 գանգադով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, ի թիվս այլնի, նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով: Դատարանի մատչելիության սահմանադրական (կոնվենցիոն) իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (տես *Աշինգոյեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգադով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, Կարեն Սահակյանն ընդդեմ «ԵԱԶ» ամրանների գործարան» ԲԲԸ-ի թիվ ԵԿԴ/5797/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2016 թվականի որոշումը, «Ինեկորանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Ֆինանսական համակարգի հաշվարար Փիրուզ Սարգսյանի թիվ ԼԴ2/0024/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2022 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նման վտանգ: Դիմելով դատարան՝ անձն ակնկալում է ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանություն, հարցի վերջնական լուծում: Այսինքն՝ դատարան դիմած անձն ունի իրավական ակնկալիք՝ կապված իր իրավունքների ենթադրյալ խախտման վերացման հետ, առ այն, որ այդ խախտումը կվերացվի ողջամիտ ժամկետում, անձը կստանա ակնկալվող դատական ակտը: Դատական

պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է կրեն ձևական բնույթ, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով կիրառման ենթակա իրավական նորմերը և սույն գործի փաստերը դիտարկել վերը շարադրված ելակետային դրույթների ու դիրքորոշումների լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը հարուցվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում են լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը, եթե հայցվորը հանդես է գալու ներկայացուցչի միջոցով, և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝ հայցադիմումը ստորագրված չէ, կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է՝ հայցվորը պնդում է արդյոք իր պահանջները, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 143-րդ, 146-րդ և 148-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները կատարելուց հետո առաջին ատյանի դատարանը պարզում է, թե արդյոք հայցվորը պնդում է իր պահանջները, (...):

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե հայցադիմումը կամ դիմումն ստորագրել է այն ստորագրելու իրավունք

չունեցող անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ հայցադիմումը կամ դիմումն ստորագրելու իրավունք ունեցող անձը պնդում է հայցադիմումը կամ դիմումը:

Նշված դատավարական նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարան ներկայացվող հայցադիմումը (դիմումը) այն ստորագրելու իրավունք (լիազորություն) ունեցող անձի կողմից ստորագրված լինելը, ի թիվս այլնի, հայց հարուցելու (դատարան դիմելու) իրավունքի իրացման պայմաններից մեկն է, որը ենթակա է ստուգման դատարանի կողմից հայցադիմումի (դիմումի) ընդունելության հարցը լուծելիս: Բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցադիմումը (դիմումը) ստորագրված է ոչ թե անմիջականորեն հայցվորի, այլ որպես նրա ներկայացուցիչ հանդես եկած անձի կողմից, վերջինիս լիազորությունները պետք է ձևակերպված լինեն օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ և հավաստվեն հայցադիմումին կից ներկայացված համապատասխան փաստաթղթերով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4956 հոդվածներ): Ընդ որում, դատարան դիմող անձի կողմից նշված պահանջի խախտումը դիտարկվում է որպես հայցադիմումը վերադարձնելու ձևով «դատարանի մատչելիության» իրավունքի ողջամտորեն անհրաժեշտ և համաչափ սահմանափակման հիմք՝ նկատի ունենալով, որ հայցադիմումը (դիմումը) այն ստորագրելու իրավունք (լիազորություն) ենթադրաբար չունեցող անձի կողմից ստորագրված լինելու պայմաններում դրա ընդունելության հարցը լուծելու փուլում դատարանն օբյեկտիվորեն զրկված է այն անձի իրական կամահայտնությունը պարզելու հնարավորությունից, որի անունից ու որի իրավունքների կամ օրենքով պահպանվող շահերի պաշտպանության նպատակով ներկայացվել է տվյալ հայցադիմումը (դիմումը):

Միևնույն ժամանակ, հայցադիմումը (դիմումը) սխալմամբ վարույթ ընդունելու կամ այն դեպքերում, երբ հայցադիմումը (դիմումը) ստորագրելու իրավունքի (լիազորության) բացակայությունն օբյեկտիվորեն պարզվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո, դատավարական օրենսդրությունն առաջին ատյանի դատարանի վրա, անկախ վարույթի փուլից, դնում է «ի պաշտոնե» պարտականություն՝ գործին մասնակցող անձանց հետ քննարկելու հարուցված վարույթի իրավաչափությունը և հայցադիմումը (դիմումը) ստորագրելու իրավունք (լիազորություն) ունեցող անձի՝ տվյալ հայցը (դիմումը) դատական կարգով քննարկման առարկա դարձնելու իրական մտադրությունը պարզելուց հետո որոշելու տվյալ քաղաքացիական գործի քննությունը շարունակելու կամ այն օրենքով սահմանված կարգով դադարեցնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում, 175-րդ հոդվածի 1-ին մասում և 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ձևակերպված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցն (դիմումը) առանց քննության թողնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ձևակերպված հիմքը («հայցադիմումը կամ դիմումն ստորագրել է այն ստորագրելու իրավունք չունեցող անձը») կիրառելի չէ բոլոր այն դեպքերում, երբ գործը դատաքննության նախապատրաստելու կամ դատաքննության փուլում հայցվորը կամ օրենքով սահմանված կարգով նրա անունից հայցադիմում (դիմում) ստորագրելու լիազորություն ունեցող ներկայացուցիչը որևէ եղանակով (բանավոր, գրավոր կամ դատարանի համար ընկալելի կոնկյուրենտ գործողություններով) փաստացի արտահայտել է հայցադիմումը (դիմումը) պնդելու իր կամքը, իսկ դատարանն էլ, իր հերթին, հիմք ընդունելով հայցվորի կամ նրա անունից հայցադիմումը (դիմումը) ստորագրելու իրավունք ունեցող ներկայացուցչի դրսևորած վարքագիծը, նախնական դատական նիստում կամ դատաքննության ընթացքում պարզել է հայցը պնդելու նրա

մտադրությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործով հայցվորի կամ վերջինիս անունից հայցադիմումն ստորագրելու իրավասություն ունեցող անձի վարքագծից (այդ թվում՝ դատական նիստից դուրս դրսևորած) ողջամտորեն բխում է հայցադիմումը (դիմումը) պնդելու մտադրությունը, գործը քննող դատարանը նախքան հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելը պետք է վերջինիս հնարավորություն տա վերահաստատելու (պնդելու) իր մտադրությունը դատական նիստում՝ անհրաժեշտության դեպքում դատական նիստում անելով ուղղակի հարցադրում՝ հայցը (դիմումը) պնդելու վերաբերյալ (որպիսի պահանջը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից և 175-րդ հոդվածի 1-ին մասից: Դատարանի միայն նման վարքագիծն է երաշխավորում տնօրինչականության, իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների լիարժեք իրացումը՝ զերծ պահելով դատական պաշտպանություն հայցող անձի հիմնական իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակումից ու ապահովելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով իր վրա դրված՝ առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու ու լուծելու պահանջի կատարումը:

Նախկինում կայացված որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է գործը դատաքննության նախապատրաստելու, մասնավորապես՝ նախնական դատական նիստի նշանակությանը, խնդիրներին և դրա ընթացքում դատարանի կողմից կատարվող նախապատրաստական բնույթի դատավարական գործողությունների կարևորության ու հաջորդականության հարցերին (*տես, օրինակ, 22.04.2016 թվականի թիվ ԳԴ4/0504/02/14, 22.04.2016 թվականի թիվ ԵԿԴ/0930/02/13, 22.07.2016 թվականի թիվ ԵԿԴ/4715/02/14, 07.04.2017 թվականի թիվ ԵԿԴ/5382/02/15 և 24.11.2023 թվականի թիվ ԵԴ/30092/02/20 քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները*):

Վերահաստատելով նախնական դատական նիստի խնդիրների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախնական դատական նիստի կարևորագույն խնդիրներից է նաև գործի վարույթն արգելակող հանգամանքների, այդ թվում՝ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու, գործի վարույթը կարճելու, դատական նիստը հետաձգելու կամ վարույթը կասեցնելու հիմքերի ստուգումը: Նման եզրահանգումը, մի կողմից, հիմնավորվում է այն հանգամանքով, որ քաղաքացիական դատավարության փուլերը որոշակի ենթակարգության հարաբերությունների մեջ են գտնվում միմյանց նկատմամբ, որպիսի պայմաններում փուլերից հաջորդը նախորդի նկատմամբ ունի վերստուգող բնույթ, մյուս կողմից՝ քննարկվող խնդրի իրականացումը կոչված է ապահովելու դատական խնայողության սկզբունքի իրացումը, ինչպես նաև կանխելու վարույթի անհարկի ձգձգումն ու ըստ այդմ՝ երաշխավորելու ողջամիտ ժամկետում գործերի քննությունը: Արդարադատության արդյունավետության, այդ թվում նաև՝ դատավարության մասնակիցների շահերից ուղղակիորեն բխում է գործի վարույթն արգելակող հանգամանքների, այդ թվում՝ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու հիմքերի առկայությունը դատավարության հնարավորինս վաղ փուլերում և հատկապես գործը դատաքննության նախապատրաստելու փուլում պարզելու անհրաժեշտությունը, քանի որ դատավարության այդ փուլում դատարանը, պարզելով, օրինակ, որ հայցադիմումը կամ դիմումն ստորագրել է այն ստորագրելու իրավունք չունեցող անձը, և իրավասու անձը չի պնդում ներկայացված պահանջի դատական քննությունը, հայցը (դիմումը) առանց քննության

թողնելով, կանխում է դատավարական ռեսուրսների չհիմնավորված ու աննպատակ վատնումը, իսկ այն դեպքերում, երբ հավաստիանում է, որ հայցվորը կամ հայցադիմումը կամ դիմումն ստորագրելու իրավունք (լիազորություն) ունեցող անձն այդուհանդերձ պնդում է հայցը (դիմումը), շարունակում է գործի քննությունը՝ ըստ էության շահագրգիռ անձի վրա անհարկի չդնելով կրկին դատարան դիմելու անհրաժեշտություն՝ այդպիսով ապահովելով դատական պաշտպանության արդյունավետությունը և դատական խնայողությունը:

Միևնույն ժամանակ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նախապատրաստական դատավարական գործողությունների հաջորդականությունն ինքնանպատակ կամ պատահական չէ. յուրաքանչյուր գործով դրանք պետք է կատարվեն օրենքով կանխորոշված հաջորդականությամբ, քանի որ դրանց որոշակի համակցությունն ուղղված է նախնական դատական նիստում դատարանի առջև դրված կոնկրետ փոխկապակցված և փոխայամանավորված խնդիրների (միջանկյալ նպատակների) լուծմանը: Նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական գործողությունները թվարկված են այն տրամաբանությամբ, որ հաջորդող դատավարական գործողությունների պատշաճ կատարումը և դատարանի առջև դրված միջանկյալ խնդիրների լուծումը (միջանկյալ նպատակին հասնելը) հնարավոր է բացառապես նախորդող գործողությունները բարեհաջող կատարելուց ու դատարանի առջև դրված խնդիրները լուծելուց (միջանկյալ նպատակին հասնելուց) հետո:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նախքան դատական նիստում հայցն (դիմումը) առանց քննության թողնելու հարցի լուծումը դատարանը կաշկանդված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-148, 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով նախատեսված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտությամբ, քանի որ, եթե նույնիսկ ակնհայտ է հայցադիմումը (դիմումը) այն ստորագրելու իրավունք չունեցող անձի կողմից ստորագրված լինելու փաստը, հայցվորի կամ այն ստորագրելու իրավունք ունեցող անձի կողմից հայցը (դիմումը) պնդելու կամ չպնդելու հանգամանքը հնարավոր չէ պարզել առանց հավաստիանալու, թե ով է ներկայացել դատական նիստին, ստուգելու դատական նիստին ներկայացած դատավարության մասնակիցների ինքնությունն ու ներկայացուցիչների (այդ թվում՝ որպես հայցվորի ներկայացուցիչ ներկայացած անձի) լիազորությունները, պարզելու չներկայացած անձանց չներկայանալու պատճառները և լուծելու չներկայանալու հետևանքների հարցը, առանց գործին մասնակցող անձանց ու նրանց ներկայացուցիչներին պարզաբանելու նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները, պարզելու հայցի առարկան, հայցի ու դրա դեմ ներկայացված առարկությունների փաստական և իրավական հիմքերը, վիճելի իրավահարաբերության բնույթն ու կիրառելի իրավական նորմերը, առանց առնվազն պարզելու գործին մասնակցող անձանց կազմը և լուծելու գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը (ներառյալ, ըստ անհրաժեշտության, այն անձին, որի իրավունքների կամ օրենքով պահպանվող շահերի պաշտպանության համար ներկայացվել է հայցադիմումը կամ դիմումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վիկտորյա Ռախյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Կազմակերպության՝ Կազմակերպության տնօրենի ժամանակավոր

պաշտոնակատար Ա. Թերզյանի 06.11.2020 թվականի «Վիկտորյա Ռախյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» թիվ 131-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցադիմումն ստորագրել է Վիկտորյա Ռախյանի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Գրիգորյանը: Հայցադիմումին կից ներկայացվել է նաև Վիկտորյա Ռախյանի կողմից 08.11.2020 թվականին փաստաբան Վահագն Թադևոսյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, որում ուղղակիորեն նախատեսված է վերջինիս՝ հայցադիմումը ստորագրելու լիազորությունը: Դատարանի 25.05.2021 թվականի որոշմամբ Վիկտորյա Ռախյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

29.09.2021 թվականին կայացած նախնական դատական նիստում Կազմակերպության ներկայացուցիչը ներկայացրել է հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդություն՝ հիմքում դնելով այն, որ հայցադիմումն ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը, մինչդեռ հայցադիմումին կից ներկայացված լիազորագրի համաձայն՝ հայցադիմումն ստորագրելու լիազորություն վերապահվել է այլ անձի:

29.09.2021 թվականին կայացած նախնական դատական նիստում ներկայացված հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս Վիկտորյա Ռախյանի ներկայացուցիչ Վահագն Թադևոսյանն առարկել է միջնորդության դեմ և ներկայացրել է Վիկտորյա Ռախյանի կողմից 08.11.2020 թվականին փաստաբաններ Տիգրան Գրիգորյանին, Վահագն Թադևոսյանին ու Անի Մուրադյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, որում ուղղակիորեն նախատեսված է *հայցադիմումը փաստացի ստորագրած փաստաբան Տիգրան Գրիգորյանի՝ հայցադիմումը ստորագրելու լիազորությունը*:

Դատարանը, 29.09.2021 թվականի որոշմամբ հայցը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ «(...) ներկայացված հայցադիմումը ստորագրված է եղել որպես Վիկտորյա Ժիրայրի Ռախյանի ներկայացուցիչ հանդես եկող Տ.Գ. Գրիգորյանի կողմից, մինչդեռ հայցադիմումին կից ներկայացված 08.11.2020 թվականին տրված լիազորագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որպես իր ներկայացուցիչ հանդես գալու և իր անունից հայցադիմում ստորագրելու լիազորություն Վիկտորյա Ժիրայրի Ռախյանը տրվել է միայն փաստաբան Վահագն Հայկի Թադևոսյանին: Տվյալ դեպքում, սրացվում է, որ հայցադիմումը ստորագրվել է այն ստորագրելու պահին այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից: Ինչ վերաբերում է Վահագն Հայկի Թադևոսյանի՝ միջնորդության վերաբերյալ ներկայացված առարկության հիմքում ընկած հանգամանքին այն մասին, որ թեև հայցադիմումին կից ներկայացված լիազորագրով փաստաբան Տիգրան Գրիգորյանը հայցադիմում ստորագրելու լիազորություն չի ունեցել, սակայն այն լիազորագիրը, որով վերջինս ուներ հայցադիմում ստորագրելու լիազորություն իրականում գոյություն է ունեցել և այն դատական նիստի ժամանակ Դատարան ներկայացնելը բավարար է հաստատված համարելու համար այն, որ փաստաբան Տիգրան Գրիգորյանը հայցադիմում ստորագրելու լիազորություն ունեցել է, Դատարանը համարում է անհիմն հետևյալ պարզառաբանությամբ. նախ, Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում բացի դատարան ներկայացված փաստաթղթերից այլ փաստաթղթերի գոյության մասին տեղյակ լինելու պարտավորություն չունի, երկրորդ, Դատարանը ուսումնասիրում է միայն այն փաստաթղթերը, որոնք ներկայացված են Դատարան, երրորդ, Դատարանը գտնում է, որ նույնիսկ փաստաբան Տիգրան Գրիգորյանի՝ հայցադիմում ստորագրելու լիազորություն ունենալու մասին լիազորագրի առկայության, սակայն այն հայցադիմումին կից դատարան ներկայացված չլինելու դեպքում, հետագայում դատական նիստի ժամանակ տվյալ լիազորագրի ներկայացումը չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի

1-ին մասի 7-րդ կետի հիմքով հայցն առանց քննության թողնելու մասին միջնորդությունը մերժելու համար (...): Դատարանը, միաժամանակ, արձանագրում է նաև, որ Վահագն Հայկի Թաղևոսյանի առարկությամբ չի հիմնավորվում նաև 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված բացառությունը (...):»:

Վերաքննիչ դատարանը 14.01.2022 թվականի որոշմամբ, արձանագրելով, որ «(...) դատական նիստին ներկա է եղել նաև հայցվորի ներկայացուցիչ Վահագն Հայկի Թաղևոսյանը, ով առարկել է հայցն առանց քննության թողնելու միջնորդության դեմ և ի հիմնավորումն իր առարկության Դատարանին է ներկայացրել լիազորագիր՝ տրված 08.11.2020թ. Վիկտորյա Ժիրայրի Ռախայանի կողմից փաստաբաններ Տիգրան Գազիկի Գրիգորյանին և Վահագն Հայկի Թաղևոսյանին այն մասին, որ վերջիններս իրավունք ունեն հանդես գալու իր անունից, այդ թվում՝ իր անունից ստորագրելու հայցադիմում», ինչպես նաև այն, որ «(...) հայցվորի ներկայացուցիչը, դատական նիստին ներկա գտնվելով և ունենալով, այդ թվում, հայցադիմումը պնդելու լիազորություն, այնուամենայնիվ ձեռնամուխ չի եղել այդպիսի դատավարական իրավունքից օգտվելուն», եզրակացրել է, որ «Դատարանի կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման արդյունքում՝ հայցն առանց քննության թողնելը Դատարանի կողմից լիովին իրավաչափ է և բխում է գործի հանգամանքներից»:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկներին, որ հայցվորի ներկայացուցչի դատական նիստին ներկայանալու և հայցն առանց քննության թողնելու պատասխանողի միջնորդության դեմ առարկելու պայմաններում Դատարանը պետք է պարզեր, թե արդյո՞ք հայցվորի ներկայացուցիչը պնդում է հայցը՝ փաստել է, որ «(...) Դատարանը հայցվորի ներկայացուցչին հնարավորություն է տվել առարկել և իր դիրքորոշումը ներկայացնել պատասխանողի միջնորդության՝ հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ, մինչդեռ հայցվորի ներկայացուցիչը, չառաջնորդվելով իր դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ տնօրինելու Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված սկզբունքով, չի պնդել հայցադիմումը, այլ միայն նշել է, որ փաստաբան Տ.Գ. Գրիգորյանը ունեցել է հայցադիմումը ստորագրելու լիազորություն՝ ի հիմնավորումն ինչի Դատարանին ներկայացրել է այդպիսի փաստը հավաստող ապացույց: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցվորի ներկայացուցչի կողմից դատական նիստում նշված գործողությունները՝ փաստաբան Տ.Գ. Գրիգորյանի՝ լիազորություններ ունենալու հանգամանքի մասին առարկությունները չեն կարող որակվել որպես հայցապահանջի պնդում և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառումը բացառող հանգամանք հանդիսանալ, ինչից հետևում է, որ վերաքննիչ բողոքի քննարկվող փաստարկը անհիմն է»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 29.09.2021 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները և սույն գործի փաստական հանգամանքներ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի նյութերով հաստատվում է, որ թեև Վիկտորյա Ռախայանի անունից Դատարան ներկայացված և որպես հայցվորի ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Գրիգորյանի կողմից ստորագրված հայցադիմումին կից ներկայացվել է Վիկտորյա Ռախայանի կողմից 08.11.2020 թվականին փաստաբան Վահագն Թաղևոսյանին տրված՝ հայցադիմումն

ստորագրելու լիազորությունը հավաստող լիազորագիրը, մինչդեռ 29.09.2021 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ պատասխանողի միջնորդությունը քննարկելիս, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Վիկտորյա Ռախյանի ներկայացուցիչ Վահագն Թադևոսյանն առարկել է միջնորդության դեմ և ներկայացրել է Վիկտորյա Ռախյանի կողմից 08.11.2020 թվականին նաև փաստաբան Տիգրան Գրիգորյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, որում ուղղակիորեն նախատեսված է հայցադիմումը փաստացի ստորագրած փաստաբան Տիգրան Գրիգորյանի՝ հայցադիմումը ստորագրելու լիազորությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ թեև գործը դատաքննության նախապատրաստելու փուլը դատավարության նախորդ փուլի նկատմամբ որոշակի առումով ունի վերստուգող բնույթ և, ի թիվս այլի, հետապնդում է նաև դատավարության նախորդ փուլում վարույթի իրավաչափության ստուգման հետ կապված դատական սխալների ուղղման նպատակ, դատարանի՝ նման սխալների ուղղման նպատակով կատարվող գործողությունները պետք է իրականացվեն ոչ թե քաղաքացիական գործի հարուցման փուլին հատուկ կանոններով, որոնք ենթադրում են հայցադիմումի ու դրան կից փաստաթղթերի ստուգում զուտ ձևական նկատառումներով, այլ գործը դատաքննության նախապատրաստելու և նախնական դատական նիստն անցկացնելու դատավարական կանոնների պահպանմամբ: Հետևաբար հայցադիմումը վարույթ ընդունելու որոշումը կայացնելու պահին հայցադիմումը վերադարձնելու հիմքը, մասնավորապես՝ հայցադիմումն այն ստորագրելու իրավասությունը հավաստող լիազորագիր կցված չլինելու փաստը չնկատելու և այն նախնական դատական նիստում բացահայտելու պարագայում, վարույթն արգելակող տվյալ հանգամանքն այլևս չի կարող զուտ ձևականորեն վարույթը դադարեցնելու՝ հայցն առանց քննության թողնելու հիմք դիտարկվել. նման պայմաններում դատարանը պետք է ակտիվ միջոցներ ձեռնարկի՝ կրկին պարզելու համար հայցադիմումում որպես հայցվոր ներկայացված կամ նրա անունից վարույթ նախաձեռնելու իրավասություն ունեցող ու դատական նիստին ներկայացած անձի իրական մտադրությունը՝ անհրաժեշտության դեպքում ընդունելով և հետազոտելով այդպիսին հաստատող նոր ապացույցներ, հայցը պնդելու մասին ուղղակի հարցադրումներ անելով, ինչպես նաև, հաշվի առնելով գործի հանգամանքները, հայցվորի կամահայտնությունը պարզելուն ուղղված այլ անհրաժեշտ գործողություններ կատարելով: Մինչդեռ սույն գործով Դատարանը, արձանագրելով, որ հայցադիմումին կից ներկայացված լիազորագրի համաձայն՝ հայցադիմումն ստորագրել է այդպիսի լիազորություն չունեցող անձը, որևէ կերպ չի արժևորել հայցվորի՝ նախնական դատական նիստին ներկայացած մեկ այլ ներկայացուցչի կողմից ներկայացված ապացույցը (լիազորագիրը), որով հաստատվում է, որ հայցվոր Վիկտորյա Ռախյանը մեկ այլ լիազորագրով արդեն լիազորել է նաև հայցադիմումը փաստացի ստորագրած փաստաբան Տիգրան Գրիգորյանին իր անունից ստորագրելու հայցադիմումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Դատարանը ճիշտ չի գնահատել հայցվորի՝ հայցադիմումն ստորագրելու լիազորություն ունեցող մեկ այլ ներկայացուցչի՝ փաստաբան Վահագն Թադևոսյանի նախնական դատական նիստին ներկայանալու, նախնական դատական նիստում հայցի առարկան, հայցի փաստական ու իրավական հիմքերը ներկայացնելու, հայցն առանց քննության թողնելու պատասխանողի միջնորդության դեմ առարկելու փաստերը: Վերջիններս Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բավարար հիմք էին ենթադրելու, որ հայցվորի լիազորված ներկայացուցիչը պնդում է հայցը, և ստեղծված դատավարական իրավիճակում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան, թելադրում էին ուղղակի հարցադրմամբ հայցը պնդելու՝ հայցվոր կողմի մտադրությունը պարզելու անհրաժեշտությունը: Այդուհանդերձ Դատարանը նման հարցադրում չի կատարել, իսկ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ հայցն ուղղակիորեն չպնդելու պայմաններում Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառումը լիովին իրավաչափ է և բխում է գործի հանգամանքներից: Նման եզրահանգումը Վճռաբեկ դատարանը համարում է ոչ իրավաչափ, ի թիվս այլի, նաև այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը գործը քննող դատարանի վրա ուղղակիորեն դնում է պարտականություն նույն հոդվածի 1-ին մասի 15րդ կետերով նախատեսված դատավարական գործողությունները կատարելուց հետո պարզելու՝ հայցվոր կողմը պնդում է արդյոք իր պահանջները: Արդյունքում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստորադաս դատարանները կիրառել են հայցվոր Վիկտորյա Ռախյանի դատարանի մատչելիության հիմնարար իրավունքի անհամաչափ սահմանափակում և, որպես հետևանք, խախտել դատական պաշտպանության ու արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Դատարանն իրավասու չէր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված հիմքով հայցը թողնել առանց քննության:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում, որը հանգեցրել է բողոք բերած անձի՝ սահմանադրորեն երաշխավորված՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների խախտման՝ խաթարելով արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 14.01.2022 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի 14.01.2022 թվականի որոշումը բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում

է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.01.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՎԴ2/0250/05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի մայիսի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ Կոտայքի մարզի դատախազության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.12.2023 թվականի «վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի ՀՀ Կոտայքի մարզի դատախազության ընդդեմ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ 17.06.2012 թվականին անցկացված աճուրդը, 26.06.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, 10.07.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեում Արմեն Մանուկյանի անվամբ 29.06.2012 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ՀՀ կադաստրի կոմիտեում Սամվել Վարդանյանի անվամբ 14.07.2012 թվականի տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունը պահանջել է վերացնել Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով, Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումը, և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 17.06.2012 թվականին անցկացված աճուրդը, 26.06.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, 10.07.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեում Արմեն Մանուկյանի անվամբ 29.06.2012 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ՀՀ կադաստրի կոմիտեում Սամվել Վարդանյանի անվամբ 14.07.2012 թվականի տրված անշարժ

գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 12.10.2023 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.12.2023 թվականի որոշմամբ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Լիլիթ Գրիգորյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ և 98-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը, 144-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոքաբերը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին հակասող որոշումները դատական կարգով վիճարկելու իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարության լիազոր մարմնին, անհիմն է, քանի որ վերջինս որպես իրավական հսկողության մարմին ներառված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենքով լիազոր մարմնի կողմից իրավական հսկողության իրականացումը սահմանափակվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության ստուգմամբ: Օրինականության սահմանադրական սկզբունքի բովանդակության համաձայն՝ հսկողություն իրականացնող մարմինը կարող է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք համայնքի ղեկավարը կամ ավագանին նման որոշում կայացնելու լիազորություն ունեցել են, թե ոչ՝ առանց անդրադառնալու դրա արդյունքում իրավունքի խախտման առկայության հարցերին: Այսինքն՝ իրավական հսկողություն իրականացնող մարմիններին վերապահված չէ համայնքի շահերի պաշտպանության լիազորություն, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարան դիմելու իրավունքը ծագում է միայն այն դեպքում, եթե համապատասխան մարմնի վրա դրված է խախտված իրավունքի պաշտպանությունը:

Իրավական հսկողության մարմիններին համայնքային շահերի պաշտպանության իրավունք վերապահված չլինելու պայմաններում անհիմն են նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ վերջիններիս համայնքային շահերի խախտման փաստի մասին իրազեկելու և հայց հարուցելու առաջարկ անելու վերաբերյալ, քանի որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նման առաջարկ արվում է այն մարմնին, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն

աննշվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու լիազորությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է «բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը և վերացնել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ և 98-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցման բացառիկ դեպքերի առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 17.11.2017 թվականին և ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է նույն օրենքով և այլ օրենքներով:

Մինչև 01.03.2023 թվականին ընդունված և 06.04.2023 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-104-Ն օրենքով կատարված փոփոխությունները գործող խմբագրությամբ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 176-րդ հոդվածի

3-րդ մասին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Վերը նշված խմբագրությամբ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի «Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը» վերտառությամբ 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը.

4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր:

01.03.2023 թվականին ընդունված և 06.04.2023 թվականին ուժի մեջ մտած ««Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-104-Ն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝».

2) 5-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազն իրավունք ունի՝».

3) ամբողջ տեքստը «պետություն» բառի համապատասխան հոլովածներից հետո լրացնել «(համայնք)» բառի համապատասխան հոլովածներով»:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենքում «պետական շահեր» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «պետական (համայնքային) շահեր» բառերով»:

06.04.2023 թվականից սկսած գործող խմբագրությամբ «Դատախազության մասին»

ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

06.04.2023 թվականից սկսած գործող խմբագրությամբ «Դատախազության մասին»

ՀՀ օրենքի «Պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելը» վերտառությամբ 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի կողմից **պետական (համայնքային) շահերի** պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը (համայնքին) պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը.

4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրագել լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ

2) պետական (համայնքային) շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր:

«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-104-Ն օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում, ի թիվս այլնի, նշված է հետևյալը. «(...) **«համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ, ինչը հաստատվում է ինչպես ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով, այնպես էլ՝ ներպետական օրենսդրությամբ փրված սահմանումներով**»¹:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ դատախազության լիազորությունները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, համաձայն որի՝ դատախազությունը, ի թիվս այլնի, օժտված է նաև պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությամբ, որը կարող է իրացվել միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում: «Դատախազության մասին» ՀՀ օրենքով համապատասխանաբար սահմանվել են այն բացառիկ դեպքերը, որոնց առկայության պայմաններում դատախազությունը կարող է պետական շահերի պաշտպանության հայց հարուցել:

01.03.2023 թվականին ընդունված և 06.04.2023 թվականին ուժի մեջ մտած

¹ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում տեղադրված «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-104-Ն օրենքի նախագծի ընդունման հիմնավորումները հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draft_docs8/K-491_Himnavorum.pdf:

«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-104-Ն օրենքով կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում «պետական շահ» հասկացությունը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի ամբողջ տեքստում փոխարինվել է «պետական (համայնքային) շահ» բառակապակցությամբ: Այլ կերպ ասած՝ օրենքում կատարված փոփոխություններով հստակեցվել է բացառիկ դեպքերում դատախազի կողմից համայնքի գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասությունը:

Հարկ է նկատել, որ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-104-Ն օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում ընդգծվել է այն հանգամանքը, որ **«համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ:** Հիմք ընդունելով օրենսդրի կողմից օրենքի նախագծի ընդունման հիմքում դրված «պետական շահի» և «համայնքային շահի»՝ որպես ամբողջի և մասի հարաբերակցության հայեցակարգը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու բացառիկ դեպքերին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոններով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու բացառիկ դեպքերը անհրաժեշտ է դիտարկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների լույսի ներքո:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

Այսինքն՝ ստացվում է, որ դատախազությունն ընդդեմ վարչական մարմնի ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք ունի այն դեպքում, երբ համարում է, որ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերը, և եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդրի կողմից նախքան ՀՀ վարչական դատարան դիմելը իրավասու սուբյեկտի համար նախատեսվել են որոշակի նախապայմաններ, որոնց բավարարման դեպքում է վերջինս իրավունք ստանում դիմելու ՀՀ վարչական դատարան: Մասնավորապես՝

1) *դատախազն իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է պետական (համայնքային) շահերի խախտման փաստ, հայց ներկայացնելու առաջարկություն արել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, որպիսի առաջարկը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում տվյալ մարմինը հայց չի ներկայացրել դատարան, կամ*

2) դատախազը հայտնաբերել է պետական (համայնքային) շահերի խախտման փաստ, որպիսի հայցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածը հստակ ընդգծում է այն, որ **դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության համար հայց հարուցելու լիազորությունը գործում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում**: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջնային լիազորությունը այդ հարցում պատկանում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը պատճառվել է գույքային վնաս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազությունը կարող է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցել այն դեպքերում, երբ համարում է, որ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերը: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցումը պետք է ուղղված լինի պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը:

Հաջորդիվ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական (համայնքային) շահերի խախտման դեպքում դատախազությունն իրավասու է հայց հարուցելու ինչպես այն դեպքում, երբ նման լիազորություն վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ այն իրավիճակներում, երբ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, նման հայց ողջամիտ ժամկետում չի հարուցել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին դեպքում, դատախազը, համարելով, որ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերը, իսկ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, պետք է անմիջապես ձեռնամուխ լինի պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցմանը: Այսինքն՝ այն դեպքերում, երբ պետական (համայնքային) շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, **դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային իրավասություն**:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս: Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան

պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Այնուհետև դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո համապատասխան մարմնի կողմից ողջամիտ ժամկետում հայց չներկայացնելու, այլ կերպ ասած՝ անգործություն դրսևորելու պարագայում միայն դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով: Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով:

Այլ կերպ ասած՝ եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը ստացել է դատախազի առաջարկությունը՝ պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցով դատարան դիմելու վերաբերյալ, ապա տվյալ մարմինը առաջարկությունը ստանալուց հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հայց ներկայացնելու ժամկետների պահպանմամբ պետք է դիմի ՀՀ վարչական դատարան, որպիսի ժամկետներում ներկայացված հայցը կհամարվի ողջամիտ ժամկետում ներկայացված:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցը հարուցել է նկարագրված ընթացակարգի խախտմամբ, այսինքն՝ չեն պահպանվել նախքան դատարան հայց ներկայացնելն օրենքով սահմանված նախապայմանները, ապա հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, քանի որ հայցադիմումը ներկայացվել է նման իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից:

Ի լրումն վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատախազության կողմից վարչական մարմնի դեմ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու հաջորդ նախապայմանը վեճը վերադասության կարգով լուծման ենթակա չլինելն է:

Վերոգրյալի համալրելու համար ներկայացվում է համարում անդրադառնալ ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ համայնքի ավագանու վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դատախազի կողմից համայնքային շահերի պաշտպանության հայցի հարուցման բացառիկ դեպքերին:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը (...):

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, համայնքի պարտադիր խնդիրները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների փոխհարաբերությունները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, (...):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ համայնքի ավագանին նույն օրենքով սահմանված կարգով՝ (...)

9) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

10) դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները (...):

1. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով համայնքի ղեկավարի որոշումների կապակցությամբ դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերին, հարկ է համարում նախ բացահայտել այն հարցը, թե արդյոք տվյալ հարցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի:

Վերը վկայակոչված իրավական նորմերից բխում է, որ համայնքի ավագանու հիմնական լիազորություններից է համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող որոշումների վիճարկումը դատական կարգով: Այսինքն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով իրավասու է դատական կարգով վիճարկման առարկա դարձնել ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները, որպիսի լիազորության առկայությունը, անշուշտ, օրենսդրի կողմից հետապնդել է համայնքային շահերի պաշտպանության նպատակ:

Հետևաբար այն պայմաններում, երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:

Այսինքն՝ համայնքի ղեկավարի վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դատախազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, երբ վերջինս հայց ներկայացնելու առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, այլ կերպ ասած՝ դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախատեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին:

2. Վերոգրյալի համապետքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյո՞ք համայնքի ավագանու վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու

իրավասությունը վերապահված է որևէ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված պետական լիազորված մարմինը տարածքային կառավարման բնագավառի համապատասխան նախարարությունն է:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես այդ լիազորությունների իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կարող է իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ իր հաստատած հարցաշարերի հիման վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվում է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Նույն մասով նախատեսված աշխատանքային ծրագրում չընդգրկված դեպքերում իրավական և մասնագիտական հսկողություն կարող է իրականացվել միայն նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններն իրավասու են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ փոփոխելու առաջարկով որոշումը մարզպետարան մուտքագրվելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, դիմելու համապատասխանաբար համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տեղական ինքնակառավարման մարմինը չի փոփոխում կամ վերացնում իր որոշումը և այդ մասին տեղեկացնում դիմումը ներկայացրած մարմնին, ապա դիմումը ներկայացրած հսկողություն իրականացնող մարմինը հայց է ներկայացնում դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Վերը նշված իրավական նորմերի բովանդակությունից բխում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը» վերտառությամբ 8-րդ գլխով նախատեսվում են, ի թիվս այլնի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրականացվող հսկողության ձևերը և հսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները: Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ հսկողությունը մեծամասամբ ունի կանխարգելիչ գործառույթ և առավելապես նպատակաուղղված է ոչ իրավաչափ ակտերի կայացումը, ոչ իրավաչափ

գործողությունը կամ անգործությունը, օրենքի պահանջների խախտումները կանխելուն: Հսկողություն իրականացնող իրավասու սուբյեկտները հսկողություն իրականացնելիս բացահայտում և կանխորոշում են հսկողության ենթարկվող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության օրինականությունը, այսինքն՝ համապատասխանությունը օրենքով տվյալ գործունեության համար նախատեսված պահանջներին:

Տվյալ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ ՀՀ կառավարության լիազոր մարմինը օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն, ինչը սահմանափակվում է բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականության ստուգմամբ: Նույն օրենքի համաձայն՝ պետական լիազորված մարմինը տարածքային կառավարման բնագավառի համապատասխան նախարարությունն է: ՀՀ կառավարության լիազոր մարմինը իրավական հսկողությունը կարող է իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ իր հաստատած հարցաշարերի հիման վրա և իր կողմից հաստատված ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան, իսկ նշված աշխատանքային ծրագրում չընդգրկված դեպքերում իրավական հսկողություն կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ:

Արդյունքում հսկողություն իրականացնող մարմիններն իրավասու են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ ՀՀ Սահմանադրությանը և օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ փոփոխելու առաջարկով որոշումը մարզպետարան մուտքագրվելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, դիմելու համապատասխանաբար համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին: Այն դեպքում, երբ դիմումը ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տեղական ինքնակառավարման մարմինը չի փոփոխում կամ վերացնում իր որոշումը և այդ մասին տեղեկացնում դիմումը ներկայացրած մարմնին, ապա դիմումը ներկայացրած հսկողություն իրականացնող մարմինը հայց է ներկայացնում դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականության ապահովումն է, իսկ այդ գործընթացի իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները սահմանվում են բացառապես օրենքով: Այսինքն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը» վերտառությամբ 8-րդ գլխով նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության այնպիսի համալիր կառուցակարգ, որը բաղկացած է օրենքով նախատեսված հաջորդական քայլերի ամբողջությունից, որն արդյունքում կարող է եզրափակվել հսկողություն իրականացնող մարմնի կողմից հայցի հարուցմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված կառուցակարգի շրջանակներում կիրառվող միջոցները, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան հայց ներկայացնելը, կարող են ձեռնարկվել բացառապես տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացման շրջանակներում՝ ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված կարգավորման իրացումն ուղղված է օրինականության պահպանմանը և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հսկողություն իրականացնող

մարմնի անհամաձայնության դեպքում հարցի դատական կարգով վերջնական լուծմանը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկությունը չի կարող հիմք հանդիսանալ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական հսկողության իրականացման համար, քանի որ նշված կառուցակարգը հետապնդում է բոլորովին այլ նպատակ և կարող է իրացվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունն ամենևին չի հետապնդում համայնքի գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակ և նշված գործընթացի ընթացքում կիրառելի միջոցները կարող են իրացվել միայն օրենքով նախատեսված հսկողության իրականացման շրջանակներում՝ ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Ուստի նույն օրենքի իմաստով ՀՀ կառավարության լիազոր մարմինը չի կարող համարվել այն պետական մարմինը, որին վերապահված է համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համայնքի ղեկավարի որոշումների վիճարկման պայմաններում դատախազությունը պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինս օժտված է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումների կապակցությամբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու իրավասությամբ, մինչդեռ համայնքի ավագանու որոշումների վիճարկման պարագայում դատախազությունը օժտված է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային իրավասությամբ, քանի որ տվյալ հարցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դիմելով դատարան՝ ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունը պահանջել է վերացնել Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումը, և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 17.06.2012 թվականին անցկացված աճուրդը, 26.06.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, 10.07.2012 թվականի անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեում Արմեն Մանուկյանի անվամբ 29.06.2012 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ՀՀ կադաստրի կոմիտեում Սամվել Վարդանյանի անվամբ 14.07.2012 թվականի տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումները:

Դատարանը 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժել է այն հիմնավորմամբ, որ «(...) Դատարանը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի դատախազը Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012

թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումների իրավաչափությունը վիճարկելու իրավունք ակնհայտորեն չունի. մասնավորապես՝ վիճարկվող որոշումներն ընդունվել են 12.03.2012 թվականին և 26.06.2012 թվականին, իսկ դատախազության՝ համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը ծագել է 06.04.2023 թվականից սկսած, որպիսի լիազորություն փոխ նորմի գործողությունը փարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա:

(...)

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի, սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ, ինչպես նաև իրավական և մասնագիտական հսկողություն՝ պետության պարտավորված լիազորությունների իրականացման նկատմամբ:

Ընդ որում, Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններն իրավասու են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ փոփոխելու առաջարկով որոշումը մարզպետարան մուտքագրվելուց հետո դիմելու համապատասխանաբար համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին, որպիսի պայմաններում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իր որոշումը չփոփոխելու կամ վերացնելու դեպքում հսկողություն իրականացնող մարմինն իրավասու է հայց ներկայացնել դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

(...) Դատարանը փաստում է, որ փյալ դեպքում բացակայում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու՝ համայնքային շահերի ենթադրյալ խախտման հարցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վերապահված չլինելու բացառիկ հիմքն այն հաշվառմամբ, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոշարադրյալ վերլուծություններից հետևում է, որ համայնքային շահերի ենթադրյալ խախտման հարցով հայց ներկայացնելու իրավասությունը հստակ վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին»:

Վերաքննիչ դատարանի 04.12.2023 թվականի որոշմամբ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) այն դեպքերում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող կոնկրետ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ, պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն անի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, ապա, վերջինիս կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չներկայացվելու դեպքում, դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցի դատարան:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատախազությունը պետական (համայնքային)

շահերի պաշտպանության հայցը հարուցել է վերը նկարագրված ընթացակարգի խախտմամբ՝ առանց համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին հայց ներկայացնելու առաջարկություն անելու, հայցը համարվում է ներկայացված նման իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից, ինչն էլ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու բավարար հիմք է:

Ըստ այդմ, հաշվի առնելով, որ Դատախազությունը, դիմելով Վարչական դատարան, խնդրել է անվավեր ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 12-ի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով և 2012 թվականի հունիսի 26-ի թիվ 51 որոշումը՝ կիրառելով իրավաբանական հետևանքներ՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք սույն դեպքում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասությունը վերապահված է որևէ մարմնի, թե ոչ, եթե այո, ապա արդյո՞ք Դատախազության կողմից պահպանվել է վերը նկարագրված ընթացակարգը, թե ոչ:

(...)

Վերը վկայակոչված իրավանորմերի լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վիճարկվող որոշումներն ընդունվել են Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի՝ տեղական ինքնակառավարման մարմնի, կողմից, ինչը նշանակում է, որ վերջինիս լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողությունը և նրա ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին հակասող որոշումները դատական կարգով վիճարկելու իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարության լիազոր մարմնին, մինչդեռ, սույն հայցադիմումին կից ներկայացված նյութերում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր տվյալ դեպքում համապատասխան պետական մարմնի՝ համայնքային շահերի խախտման փաստի մասին իրազեկ լինելու, այդ խախտման փաստով դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալու և առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց ներկայացնելու մասին»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզի դատախազի կողմից ներկայացվել է երկու հիմնական պահանջ, այն է՝ անվավեր ճանաչել (1) Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով, և (2) Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով ստորադաս դատարանների դիրքորոշումներն իրավաչափ են այն հաշվառմամբ, որ համայնքի ղեկավարի որոշման կապակցությամբ համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասությունը վերապահված է համայնքի ավագանուն, որպիսի պայմաններում բացակայում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված բացառիկ դեպքը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի դատախազը Ծաղկաձոր համայնքի

դեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշման կապակցությամբ համայնքային շահերի պաշտպանության հայցը հարուցել է օրենքով սահմանված ընթացակարգի խախտմամբ, ուստի այն ներկայացվել է նման իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից և ենթակա է մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Անդրադառնալով ՀՀ Կոտայքի մարզի դատախազի կողմից ներկայացված հայցի հաջորդ հիմնական պահանջի՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասն օտարելու մասով, ընդունումը մերժելու իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու՝ համայնքային շահերի ենթադրյալ խախտման հարցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վերապահված չլինելու բացառիկ հիմքը՝ այն հիմնավորմամբ, որ տվյալ դեպքում համայնքային շահերի ենթադրյալ խախտման հարցով հայց ներկայացնելու իրավասությունը վերապահված չէ որևէ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Դատարանը 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ Ծաղկաձոր համայնքի դեկավարի 26.06.2012 թվականի թիվ 51 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով եկել է ճիշտ եզրահանգման, իսկ Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասի օտարումն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ, եկել է ոչ իրավաչափ եզրահանգման, որն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու և Վերաքննիչ դատարանի 04.12.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝ 0,18 հա հողամասի օտարումն անվավեր ճանաչելու պահանջի մասով Դատարանի 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումն անփոփոխ թողնելու մասով վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և դեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.12.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը մասնակի և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 12.10.2023 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ Ծաղկաձոր համայնքի ավագանու 12.03.2012 թվականի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 10-Ն որոշումը մասնակի՝

0,18 հա հողամասն օտարումն անվավեր ճանաչելու պահանջի մասով:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.12.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշմամբ նշված պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԿԴ/0078/01/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՅՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ ՆԱԵՎ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի ապրիլի 16-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով թիվ ԿԴ/0078/01/10 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշման դեմ տուժող Վահան Խալաֆյանի իրավահաջորդների ներկայացուցիչ Ա.Զեյնալյանի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքները,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2010 թվականի ապրիլի 13-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրք) 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2010 թվականի ապրիլի 29-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել Աշոտ Հարությունյանին՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով:

2010 թվականի մայիսի 21-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել Մորես Հայրապետյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի հունիսի 2-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել Գարիկ Դավթյանին և Գագիկ Ղազարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի հունիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով 2 (երկու) տարի ժամկետով:

Մ.Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Գ.Դավթյանը և Գ.Ղազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով արդարացվել են և ճանաչվել անմեղ:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրողներ Հ.Հարությունյանը և Կ.Փիլոյանը, ամբաստանյալ Ա.Հարությունյանը, վերջինիս պաշտպան Ս.Սաֆարյանը, ամբաստանյալ Մ.Հայրապետյանը, տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Զեյնալյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հունիսի 15-ի որոշմամբ մեղադրողներ Կ.Փիլոյանի և Հ.Հարությունյանի, տուժողի իրավահաջորդ Հ.Խալաֆյանի ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի, ամբաստանյալ Ա.Հարությունյանի, վերջինիս պաշտպան Ս.Սաֆարյանի, ամբաստանյալ Մ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքները մերժվել են և Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը՝ Ա.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, Մ.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու և ամբաստանյալներ Գ.Դավթյանին և Գ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցանքում անմեղ ճանաչելու և արդարացնելու մասով՝ թողնվել է օրինական ուժի մեջ:

Միննույն ժամանակ ամբաստանյալ Մ.Հայրապետյանի միջնորդությունը բավարարվել է, և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Մ.Հայրապետյանը ազատվել է պատժից:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված հիմնական պատժի՝ չկրած մասը կրճատվել է 1/3-ով (մեկ երրորդով):

3. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ մեղադրողներ Կ.Փիլոյանի և Հ.Հարությունյանի, տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Զեյնալյանի, ամբաստանյալ Ա.Հարությունյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի կողմից բերված վճռաբեկ բողոքները, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ ԿԴ/0078/01/10 որոշմամբ, վերադարձվել են:

4. Տուժող Վ.Խալաֆյանի իրավահաջորդ Հ.Խալաֆյանի, ինչպես նաև տուժողի մոր՝

Անահիտ Վարդանյանի, եղբոր՝ Վարդան Խալաֆյանի և քրոջ՝ Անի Խալաֆյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 14-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) ներկայացված գանգատի (գանգատ թիվ 2265/12) քննության արդյունքում Եվրոպական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 8-ին կայացրել է «Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը, որն ուժի մեջ է մտել 2023 թվականի փետրվարի 9-ին:

«Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի» գործով կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 2-րդ և 3-րդ հոդվածների նյութաիրավական և ընթացակարգային հայեցակետերի խախտումներ:

5. Որպես նոր հանգամանք վկայակոչելով «Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը՝ տուժող Վահան Խալաֆյանի իրավահաջորդների ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը ներկայացրել են բացառիկ վերանայման վճռաբեկ բողոքներ:

2023 թվական օգոստոսի 3-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշման՝ նոր հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման վարույթ հարուցելու և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի բողոքի քննությունն Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 26-ի որոշմամբ հարուցված բացառիկ վարույթի հետ համատեղ իրականացնելու մասին:

Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության բանավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Տուժող Վ.Խալաֆյանի իրավահաջորդների ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի «Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ 2011 թվականի հուլիսի 14-ին Վճռաբեկ դատարան ներկայացրած բողոքը «որակյալ» է եղել, իսկ ներպետական ատյանները դրանում բարձրացված խնդիրներին լուծում չեն տվել և ի կատարումն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պետք է վերականգնեն՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությամբ: Այն է, ներպետական դատական ատյանը, տվյալ դեպքում՝ Վճռաբեկ դատարանը, պարտավոր է վարույթ ընդունել իրենց կողմից 2011 թվականի հուլիսի 14-ին ներկայացված վճռաբեկ բողոքը և ըստ էության քննել՝ ընդունելով այն իրողությունը, որ դրանում բերված փաստարկների ճշմարտացիությունը հաստատված են բարձր հեղինակություն ունեցող ատյանի կողմից և միևնույն ժամանակ պարտադիր են կատարման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է վերանայել ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը և վարույթ ընդունել տուժողի իրավահաջորդ Հմայակ Խալաֆյանի անունից 2011 թվականի հուլիսի 14-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ուղղված վճռաբեկ բողոքը:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի «Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը, նույնպես բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ խնդրելով հարուցել նոր

հանգամանքի հիմքով բացառիկ վերանայման վարույթ, վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը, բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել նոր քննության, քանի որ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով արձանագրել է. «(...) [Դ]ատարանը, (...) հեղափոխելով և գնահատելով ապացույցներն իրենց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ հիմնված ներքին համոզմամբ, ապացուցված է համարում այն, որ Աշոտ Հարությունի Հարությունյանը՝ հանդիսանալով ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ և իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2010թ. ապրիլի 13-ի առավոտյան ոստիկանության բաժնի աշխատակիցներին հանձնարարել է ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի բերման ենթարկել գողության մեջ կասկածվող Վահան Խալաֆյանին, այնուհետև ակնհայտորեն դուրս գալով իր պաշտոնական լիազորությունների շրջանակից՝ իր աշխատասենյակում վերջինիս նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքով, ստիպել է ընդունել գողություն կատարելու մեջ նրա մասնակցությունը: Վահան Խալաֆյանը չի ընդունել հանցանք կատարելու համգամանքը, որի պատճառով Աշոտ Հարությունյանը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-30-րդ հոդվածներով սահմանված ֆիզիկական ուժ կիրառելու հիմքերի բացակայության պայմաններում վերջինիս նկատմամբ բռնություն է գործադրել՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել Վահան Խալաֆյանի մարմնի տարբեր մասերին:

Այնուհետև, նույն օրը՝ ժամը 17-ի սահմաններում, շարունակելով իր հանցավոր գործողությունները՝ Աշոտ Հարությունյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում, նույն նպատակով, քրեական հետախուզության բաժանմունքի մի խումբ աշխատակիցների ներկայությամբ շարունակել է Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրել՝ կրկին ծեծի ենթարկել, իսկ գողության կատարման մասնակից լինելու փաստը չընդունելու դեպքում՝ սպառնացել է ազատազրկման վայրում նրա վերաբերյալ անպատվաբեր լուրեր տարածել:

Վերը նշված բռնությունների ժամանակ Աշոտ Հարությունյանը Վահան Խալաֆյանին պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, այն է՝ քերծվածքներ քթի հիմի շրջանում, աջ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին, աջ ծնկափոսային շրջանում, աջ սրունք-թաթային հոդի շրջանի ներսային մակերեսին, ձախ սրունքի վերին երրորդի առաջադրսային մակերեսին, ձախ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին՝ շուրջն արյունազեղմամբ, արյունազեղումներ՝ գլխի մաշկի տակ գազաթային շրջանում, վերին շրթունքի լորձաթաղանթի տակ՝ բերանի ձախ անկյան շրջանում, ձախից ստորկզակային շրջանում:

Աշոտ Հարությունյանի վերը նշված գործողությունների հետևանքով Վահան Խալաֆյանը գտնվելով հոգեկան խիստ լարված վիճակում, նույն աշխատասենյակի պահարանից վերցրել է խոհանոցային դանակը և որովայնի շրջանում իրեն վնասվածքներ հասցնելով՝ ինքնասպան եղել:

Աշոտ Հարությունյանը բռնության զուգորդմամբ անցել է իր պաշտոնական

լիազորությունների շրջանակը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այսինքն ամբաստանյալ Աշոտ Հարությունյանը կատարել է հանրորեն վրանգավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համար ենթակա է պատժի:

Մորես Արծրունու Հայրապետյանը՝ հանդիսանալով ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազոր և իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանի բանավոր պահանջով, 2010թ. ապրիլի 13-ին ժամը 10-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի բերման է ենթարկել գողության մեջ կասկածվող Վահան Խալաֆյանին, սակայն վերջինիս բերման ենթարկելու վերաբերյալ համապատասխան մատյաններում գրառում չի կատարել: Այնուհետև, երբ Աշոտ Հարությունյանն իր աշխատասենյակում Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքով ստիպել է ընդունել գողություն կատարելու մեջ նրա մասնակցությունը, ապա նաև վերջինիս նկատմամբ գործադրել բռնություն, Մորես Հայրապետյանը, ականատես լինելով հիշյալ հանցավոր գործողություններին, չի կատարել ՀՀ ոստիկանության մասին օրենքով սահմանված՝ մարդու անվտանգությունն ապահովելու, իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, ինչպես նաև հանցագործությունների ու իրավախախտումների դեմ պայքարելու ոստիկանության աշխատակցի իր պարտականությունները:

Այնուհետև, Մորես Հայրապետյանը Աշոտ Հարությունյանի պահանջով նույն օրը ժամը 16:55-ին լրացրել է Վահան Խալաֆյանին բաժնի բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը, իսկ ժամը 17-ի սահմաններում, երբ Աշոտ Հարությունյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում իր և քրեական հետախուզության բաժանմունքի ևս երկու օպերիվազորներ Գարիկ Դավթյանի և Գագիկ Ղազարյանի ներկայությամբ շարունակել է Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրել, Մորես Հայրապետյանը դարձյալ որևէ կերպ չի փորձել կանխել Աշոտ Հարությունյանի հանցավոր գործողությունները:

Այսինքն Մորես Հայրապետյանը կատարել է հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, որի համար ենթակա է պատժի:

Դատարանն արձանագրում է, որ քրեական գործի ողջ քննությամբ ձեռք չբերվեցին բավարար ապացույցներ առ այն, որ ամբաստանյալներ Գարիկ Արամի Դավթյանը և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանը կատարել են իրենց մեղսագրված հանցանքը (...):¹:

9. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը մասնակի բեկանելով, 2011թվականի հունիսի 15-ի որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով մեղադրողների, պուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի, ամբաստանյալ Աշոտ Հարությունյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի, ամբաստանյալ Մ.Հայրապետյանի կողմից բերված վերաքննիչ բողոքների փաստարկները, մեղադրողների, ամբաստանյալ Աշոտ Հարությունյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի, Գարիկ Դավթյանի և Գագիկ Ղազարյանի շահերի պաշտպան՝ Ա.Հարությունյանի գրավոր պատասխանները, ամբաստանյալներ Ա.Հարությունյանի, Մ.Հայրապետյանի, Գ.Դավթյանի, Գ.Ղազարյանի պարճառաբանությունները, քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, սրուգելով ապացույցների ձեռքբերման աղբյուրները, քրեական գործով

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 115-116:

ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց վերլուծելով վերաբերելիության, թույլատրելիության քրեադատական պահանջների, ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսակետից, ստուգելով քրեական գործը քննելիս և լուծելիս ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեական օրենքի կիրառման ճշտությունը, քրեադատական օրենքի նորմերի պահպանումը, ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ մեղադրողներ Հ. Հարությունյանի, Կ. Փիլոյանի, Կուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի, ամբաստանյալ Ա.Հարությունյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի, ամբաստանյալ Մ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքները պետք է մերժել, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Աշոտ Հարությունի Հարությունյանի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, Մորես Արծրունու Հայրապետյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, Գարիկ Արամի Դավթյանի ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի-ի 1-ին մասով, Գագիկ Վլադիմիրի Ղազարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալներ Գ.Դավթյանին և Գ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցանքում անմեղ ճանաչելու և արդարացնելու մասով՝ թողնել օրինական ուժի մեջ, ամբաստանյալ Մորես Արծրունու Հայրապետյանի մասով՝ բեկանել, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ.-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Մորես Հայրապետյանին ազատել պատժից (...):»²:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտումներ արձանագրելու փաստը, Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը վերանայելու հիմք է:

11. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխադրության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական

² Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 372:

թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ³:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անձի վիճակի վարթարացման պահանջի հիման վրա կրկին դատվել չէ՝

(...)

2) հիմնարար խախտման, **նոր հանգամանքի** կամ նոր ի հայտ եկած հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած եզրակարգիչ դատական ակտի կամ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման վերանայումը՝ սույն օրենսգրքով նախատեսված ժամկետներում»:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նոր հանգամանքներով բողոք կարող է բերվել հետևյալ հիմքերով

(...)

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը⁴:

12. *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները, դրանք կիրառել է կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ⁵:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Bratyakin v. Russia գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գրիշա Վիրաբյանի* գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զայյանի* գործով՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրայր Մուրադյանի* գործով՝ 2017 թվականի հունիսի 30-ի, *Դավիթ Ավետիսյանի* գործով՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09, *Ալիկ Մաթևոսյանի* գործով՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով

12.1. Այսպես, անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք կոնկրետ գործով դիմումատուի հանդեպ առկա է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքի ենթադրյալ խախտումներ՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) Դատարանը Վահան Խալաֆյանի մահվան գործով իրականացված պաշտոնական քննության և դրան հաջորդած դատավարության առնչությամբ դիտարկում է, որ նրա ինքնասպանության վարկածը իշխանության մարմինների կողմից հապճեպ կերպով և առանց որևէ հիմնավորման ընդունվել է քննության հենց առաջին օրը: Ընդ որում, իրադարձությունների այս նկարագրությունն ամբողջությամբ հիմնված է եղել ոստիկանության ծառայողների՝ Մ.Հ.-ի և Գ.Դ.-ի ցուցմունքների վրա, որոնք մասնակից են եղել միջադեպին և չէին կարող անաչառ վկաներ համարվել: Հարկանշական է, որ ինքնասպանությունը որպես մահվան պատճառ քննելու որոշումը կայացվել է այն փուլում, երբ քննությունը վարվում էր ԿՄԳՔՎԲԲ-ի կողմից, այսինքն՝ ոստիկանության այն մարմնի կողմից, որը քննում էր Վահան Խալաֆյանի կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունը, և ունեցել է աստիճանակարգային և ինստիտուցիոնալ կապ Ոստիկանության Չարենցավանի բաժնի ծառայողների հետ՝ դրանով իսկ չունենալով անհրաժեշտ անկախությունը:

Դատարանը նշում է, որ ընթացքի փոփոխություն չի եղել նույնիսկ այն բանից հետո, երբ քննությունը ստանձնել է անկախ մարմինը, այսինքն՝ ՀԲԾ-ն, որը շարունակել է քննությունը վարել նույն հիմքով՝ երբեք լրջորեն կասկածի տակ չդնելով իրադարձությունների նկարագրությունը, որը տրամադրվել էր ոստիկանության ծառայողների կողմից, կամ փորձելով ստուգել այլ հնարավոր սցենարներ, չնայած օրըստօրե աճող այն նշաններին, որ նրանք արժանահավատ և վստահելի վկաներ չեն եղել: Դատարանն այս կապակցությամբ վկայակոչում է քննության ընթացքում ծառայողների կողմից տրված ակնհայտ սուտ ցուցմունքները, այդ թվում՝ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի փաստը թաքցնելը և իշխանության մարմիններին մոլորեցնելը նրա ձերբակալման ժամանակի վերաբերյալ, ինչպես նաև վարույթի տարբեր փուլերում նրանց ցուցմունքների և նրանցից յուրաքանչյուրի կողմից տրված ցուցմունքների միջև առկա բազմաթիվ հակասությունները: Մարմինների կողմից ոչ մի կարևորություն չի տրվել կեղծ և մոլորեցնող ցուցմունքների փաստին: Նշված հակասությունները ճշտելու իրական փորձեր նույնպես չեն արվել:

Դատարանը հատկապես կարևորում է այն փաստը, որ չնայած միջադեպին նրանց անմիջական մասնակցությանը՝ տվյալ ոստիկանության ծառայողներն անմիջապես չեն մեկուսացվել և չեն հարցաքննվել՝ կանխելու ցանկացած հնարավոր դավադրություն, որը, Դատարանի կարծիքով, զգալի թերություն է եղել քննության համարժեքության մեջ: Փաստորեն, բացի ոստիկանության ծառայող Մ.Հ.-ից վերցված ցուցմունքից, որն ըստ երևույթին եղել է ոստիկանության ավագ ծառայողի կողմից՝ պաշտոնական քննության շրջանակներից դուրս, քննչական մարմինները չեն հարցաքննել ոստիկանության ծառայողներ Մ.Հ.-ին, Գ.Դ.-ին և Ա.Հ.-ին միջադեպից մինչև ութ օր հետո:

Դատարանը նաև նշում է, որ քննության միակողմանիությունն արտացոլվել է նաև դատաբժշկական փորձաքննությունների անցկացման եղանակում, ինչը կասկածի տակ է դնում համապատասխան փորձագիտական եզրակացությունների օբյեկտիվությունն ու համարժեքությունը: Այսպիսով, փորձագետներին մշտապես ներկայացվել է ինքնասպանության վարկածը որպես հաստատված փաստ, և չնայած զգալի ուշադրություն է դարձվել ինքնասպանության տեսությանը, այնուամենայնիվ, նրանց երբեք չեն խնդրել կամ

խրախուսել դիտարկել կամ մեկնաբանել որևէ այլ հավանական սցենար: Այսպիսով, թեև բժիշկ փորձագետը չի բացառել ինքնասպանության հավանականությունը և ավելի ուշ իր ցուցմունքում նույնիսկ ենթադրել է, որ դանակահարության հետևանքով հասցված վերքերը բնորոշ են ինքնասպանությանը, քննչական մարմինները և դատարանները չեն հետաքննել, թե արդյոք հնարավոր է եղել բեմադրել ենթադրյալ ինքնասպանությունը, կամ արդյոք տվյալ վերքերը հասցվել են այլ հանգամանքներում, թե՛ ոչ: Նրանք նաև չեն քննել, թե ինչպես է հնարավոր եղել, որ դանակի կոթը, որը Վահան Խալաֆյանը ենթադրաբար օգտագործել է իրեն դանակահարելու համար, և որն ավելին, մինչև միջադեպն ըստ երևույթին որպես խոհանոցային դանակ կանոնավոր կերպով օգտագործվել է, չունենա մատնահետքեր, և նաև այն, թե արդյոք հնարավոր էր, որ դրանք սրբվել են: Թեև հետաքննության փորձագետին ըստ երևույթին խնդրել են մեկնաբանել այդ հնարավորությունը դատաքննության ընթացքում, թվում է, թե այդ առումով որևէ կարևորություն չի տրվել նրա պնդումներին: Չի կարելի նաև ասել, որ բավարար բացատրություն է տրվել մատնահետքերի բացակայության վերաբերյալ: Իշխանության մարմինների կողմից այս հարցը մանրակրկիտ չուսումնասիրելը հարկապես մտահոգիչ է թվում, քանի որ եղել են նշաններ, որ այդ ապացույցները կարող էին կեղծվել ոստիկանության ծառայողների կողմից՝ հանցանքի վայրի ամբողջականությունը նրանց միջամտության և միջադեպից հետո դանակին ձեռք տալու պատճառով:

Ինչ վերաբերում է միջադեպի վերարտադրման պահանջը մերժելուն, ապա Դատարանի իրավասությունը չէ շահարկել, թե արդյոք նման քննչական միջոցառման արդյունքը կարող էր նպաստել ճշմարտության բացահայտմանը: Այնուամենայնիվ, հրամայական է, որ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման մասին պնդումների հետ կապված դեպքերում, հարկապես, երբ խոսքը վերաբերում է այնպիսի զգայուն հարցի, ինչպիսին է վատ վերաբերմունքը և կասկածյալի մահը ոստիկանության կալանքի տակ պահելու վայրում, իշխանության մարմինները ձեռնարկեն բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները, որոնք կարող են արդյունավետորեն նպաստել այդ նպատակին: Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը որևէ պատճառաբանություն չի ներկայացրել պահանջվող քննչական փորձարարության կարգադրումը մերժելու համար (տե՛ս վերևում՝ 48-րդ պարբերությունը), իսկ Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված նման մերժման պատճառները, Դատարանի կարծիքով, բավականաչափ համոզիչ չեն թվում (...):»⁶:

Բացի այդ, անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք կոնկրետ գործով առկա է եղել դիմումատուի հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունք, Եվրոպական դատարանը արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը նաև նշում է, որ Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների քննությունն իրականացվել է նմանապիսի ձևով: Իշխանության մարմինների եզրահանգումները նույնպես ամբողջությամբ հիմնված են եղել ոստիկանության նույն ծառայողների ցուցմունքների վրա՝ առանց հաշվի առնելու այդ վկաների նկատմամբ վստահության պակասը, և նույն կերպ հապճեպ կերպով ընդունվել են որպես միակ վարկած՝ առանց որևէ այլ հնարավոր սցենարների ուսումնասիրության, այդ թվում՝ դեպքի վայրում վատ վերաբերմունք դրսևորող մեկից ավելի հանցագործներ լինելու հավանականությունը: Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքները ներկայացվել են շարք վերացական ձևով, զուրկ են եղել մանրամասներից և ստեղծել են երկու կարճ դրվագով սահմանափակված լինելու տպավորություն՝ մեկը վաղ

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճռի 85-89-րդ կետերը:

առավոտյան Ա.Հ.-ի աշխատասենյակում, իսկ մյուսը՝ Կ.Մ.-ի աշխատասենյակում ժամը 17:00-ի սահմաններում: Դատարանը նշում է սակայն, որ նախքան դանակահարության դեպքը տեղի ունենալը Վահան Խալաֆյանը մոտ ութ ժամ փաստացի մնացել է ոստիկանության բաժնում: Այդ ամբողջ ընթացքում նա եղել է շար խոցելի վիճակում, նրա կալանավորումը հիմնված չի եղել ձերբակալման մասին որոշման վրա և փոխարենը հիմնավորվել է իր հետ «գրուցելու» անհրաժեշտությամբ, նրան ազատությունից զրկելը չի արձանագրվել, և նա զրկված է եղել կասկածյալի կողմից իրացվող ցանկացած իրավունքից: Չի կարելի ասել, որ իշխանության մարմինները բավականաչափ և անկեղծ ջանքեր են գործադրել՝ բացահայտելու այն վերաբերմունքի բոլոր հանգամանքները, որը երկար ժամանակ ցուցաբերվել է նրա նկատմամբ, երբ գտնվել է նման անորոշ իրավիճակում, ինչպես նաև պարզելու ոստիկանության ծառայողների՝ դեպքերի նկարագրությունում առկա բազմաթիվ հակասությունները:

Ի վերջո, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ նույնիսկ եթե ոստիկանության ծառայողներից մեկն ի վերջո մեղավոր է ճանաչվել Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ, նրա նկատմամբ կիրառվել է համաներում, որի արդյունքում պատժի ժամկետը կրճատվել: Այնուամենայնիվ, Դատարանն արդեն վճռել է, որ պետական գործակալների կողմից խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հետ կապված գործերում չպետք է հանդուրժել համաներումը և ներումը: Այս սկզբունքը նույնպես չի պահպանվել սույն գործում:

Վերոշարադրյալը բավարար է, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ իշխանության մարմինները չեն կարողացել իրականացնել Վահան Խալաֆյանի մահվան և նրա նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների արդյունավետ քննությունը: Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ չի գտնում պարզել նաև, թե արդյոք տվյալ պահին Հայաստանի իրավական համակարգում եղել է համակարգային խնդիր, թե ոչ՝ կապված խոշտանգումների վերաբերյալ գործերով իրավական պաշտպանության համարժեք միջոցների առկայության հետ⁷:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով նաև Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների նյութաիրավական հայեցակետի խախտումներին, արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը գտնում է, որ ազգային մակարդակում իրականացված քննությունն ակնհայտորեն այնքան ոչ լիարժեք է եղել և այնքան կարևոր հարցեր է թողել անպատասխան, որ այն չի կարողացել պարզել դիմումատուների ազգականի մահվան հետ կապված իրական հանգամանքները: Հետևաբար Դատարանը չի կարող այդ քննության ավարտին արված եզրակացություններն ընդունել որպես հավաստի եզրակացություններ, հարկապես, որ դրանք չէին հիմնավորվել որևէ օբյեկտիվ ապացույցով (համեմատել վերևում հիշատակված՝ Գուլյանի գործի հետ, § 91 և դրանում հիշատակված գործերի հետ): Չնայած դիմումատուների փաստարկն առ այն, որ Վահան Խալաֆյանը մահացել է գլխուղեղի վնասվածքից, ուղղակիորեն հակասում է դատաբժշկական փորձագետի՝ նրա մահվան պատճառի վերաբերյալ արված եզրակացություններին (տես վերևում՝ 17-րդ պարբերությունը), այնուամենայնիվ, Դատարանի խնդիրը չէ պարզել փոփոխման անհավանական պատճառը: Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետին, ապա Դատարանը գտնում է, որ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում նրա մահվան և ստացած

⁷ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճռի 90-92-րդ կետերը:

վնասվածքների վերաբերյալ Կառավարության կողմից տրված բացատրությունը գոհացուցիչ, բավարար և համոզիչ չէր: Հետևաբար նրանք չեն կատարել կալանքի տակ գտնվելիս Վահան Խալաֆյանի հանդեպ վերաբերմունքի համար պարասխանապատկություն կրելու և դրանով իսկ իշխանության մարմինների վրա դրված ապացուցման բեռն իրենց վրա վերցնելու իրենց պարտականությունը (...)»⁸:

12.3. Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների նյութափրավական և ընթացակարգային հայեցակետերի խախտում⁹:

13. Հաշվի առնելով սույն որոշման 12.1-12.3-րդ կետերում ներկայացված փաստերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտումներ արձանագրելու փաստը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը վերանայելու հիմք է:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների նյութափրավական և ընթացակարգային հայեցակետերի խախտումը հիմք է տուժող Վ.Խալաֆյանի իրավահաջորդների ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի բողոքների հիման վրա Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի հունիսի 15-ի որոշումները բեկանելու համար:

15. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

15.1. Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «[Եվրոպական կոնվենցիայի] 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր ստանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում»¹⁰:

⁸ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճռի 90-92-րդ կետերը:

⁹ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճռի 96-րդ կետը:

¹⁰ Տես Վճռաբեկ դատարանի՝ *Ժիրայր Սեֆիլյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-

15.2. Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել նաև առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում, պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ, պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*»-ն ապահովելու հնարավորությունը¹¹:

16. Այս առումով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վարույթի նորոգում պետք է տեղի ունենա բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքների գնահատումը վկայում է, որ միայն գործի վերաբացման արդյունքում է հնարավոր վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը:

Վերոնշյալ մոտեցումը համահունչ է «*Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին*» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականին, ըստ որի՝ գործի վերաքննությունը կամ դատաքննության վերաբացումը բացառիկ դեպքերում հանդես է գալիս որպես ամենապատշաճ, եթե ոչ միակ միջոցը՝ հասնելու «*restitutio in integrum*»-ին, եթե նյութական կամ դատավարական իրավունքի խախտումն իր բնույթով այնպիսին է, որ լուրջ կասկած է հարուցում ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ, և դիմումատու շարունակում է կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ¹²:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են դիմումատուի հանդեպ մահվան հանգեցնող դիտավորյալ վատ վերաբերմունքին, ինչպես նաև այդ կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությանը: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Վահան Խալաֆյանի մահվան և վատ վերաբերմունքի վերաբերյալ քրեական գործը փոխանցվել է դատաքննության, և ոստիկանության երկու ծառայողներ ի վերջո մեղավոր են ճանաչվել, որոնցից մեկը՝ մասնավորապես Վահան Խալաֆյանի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու համար: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է վերևում, այդ քրեական գործով քննությունը մանրակրկիտ և արդյունավետ չի եղել և իրականացվել է Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների ընթացակարգային պահանջների լուրջ խախտումներով:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները, Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, առերևույթ ստվերում են գործով ձեռքբերված ապացուցողական զամբյուղի լիարժեքությունն ու վկայում Վ.Խալաֆյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված՝

րդ կետը:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը, *mutatis mutandis*, *Աիդա Հովհաննիսյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԿԴ/0062/11/12 որոշման 25.1-րդ կետը, *Լատրա Մեիրաբյանի* գործով 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0005/11/10 որոշման 261-րդ կետը:

¹² Տե՛ս Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights:

հիմնարար իրավունքների խախտման մասին:

18. Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով սույն գործով առկա մեղադրական եզրակացությունում նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների ամբողջությանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ մի կողմից, նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Վարդանյանը և Խալաֆյանն ընդդեմ Հայաստանի* վճիռը, մյուս կողմից՝ հաշվի առնելով մեղադրանքների հաստատման համար սույն գործով ստորադաս դատարանների կողմից հետազոտված փաստական տվյալները և դրանք հիմնավորող ապացույցների ամբողջությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թույլ տրված խախտումները վերացնելու, ապացույցները ողջ ծավալով համակողմանի հետազոտման ենթարկելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

19. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 15-ի որոշումը բեկանելու և գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է գնահատման ենթարկի գործով ձեռքբերված ապացույցների ամբողջությունը՝ հանգելով վերջնական հետևության:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ, 25-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ 403-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի օգոստոսի 18-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 15-ի որոշումը բեկանել՝ գործի վարույթը փոխանցելով ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Արթուր ՄԿՐՏՉՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

*մաղթում նրան առողջություն, երկար տարիների կյանք
և վաստակաշատ հանգիստ:*

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն
հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր
Ելիզավետա ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Կարեն ՖԱՐԽՈՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Վարդան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Ռոբերտ ՊԱՊՈՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Ադրինե ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Մարգարիտա ՀԱՐԹԵՆՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Արթուր ԱՎԱԳՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Գոռ ՄԻՆԱՍՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Լիլիթ ՍԱԴՈՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Գնել ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Վարսենիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում նյութերը տպագրվում են անվճար հիմունքներով: